

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 6 1891

Յ Ո Ւ Ն Ի Ս

1891 № 6

Ե Ր Բ ՈՐ Գ Տ Ա Ր Ի

	Երես	
1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ.	677	Կինը հասարակութեան մէջ:
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ	688	Փոթորկի ժամին (բանաստեղծ.):
3 " " " "	689	Իղէալ (բանաստեղծութ.):
4 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ	691	Զաւարինների արշաւանքը (պատկերն.):
5 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ	709	*** (բանաստեղծութիւն):
6 " " " "	710	Երազ (բանաստեղծ.):
7 ՃԱՎՃԱՎԱԶՆ, ԻԼԻԱ	711	Կացիա-Աղամիանի (վերջ):
8 ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆԷՍ	746	*** (բանաստեղծութիւն):
9 ԲԱԼԱՂԵԱՆ, Ս.	747	Միկրոքները (վերջ):
10 ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ.	757	Միջնադարեան վէպ:
11 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.	767	Միխայիլ Իւրիչ Լերմոնտով:
12 ՍԱՂԱԹԵԼԵԱՆ, ՅՈՎՀ.	777	Կոմս Լե Տոլատով սկզբունքները:
13 Ա. Ա.	783	«Սպանւած հարր»:
14 Բ.	784	«Գիւղական վարժուհի»:
15 ԲԱՐ.	786	«Գիւղական աղքատ»:
16 ԲԱՐ.	787	«Վարդ-Բնուի»:
17 Ն.	789	«Հանրամատչելի բժշկարան»:
18 ԼՈՒՍԻՆԻ.	793	Ամուսն քրոնիկ: † Պետրոս Աղա- մեան:—† Յակոբ Պարոնեան:—Կա- թողիկոսական Տեղակալի ինզիրո:
19 ԽՄԲ.	805	Խմբագրութեան կողմից: Օտարների ուսումնասիրութիւնը «Մուրճ»-ում:
20 ԽՄԲ.	807	Բովանդակութիւն «Մուրճ» №№ 1—6.


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Յ Լ Ի Ս

Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

Типография М. Д. Ротшианда, на Вол. просп. соб. д. № 41.

1891



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 6 1891

Յ Ո Ւ Ն Ի Ս

1891 № 6

ԵՐԲՐԱՆԻ ՏԱՐԻ

Թ Ի Յ Լ Ի Ս

1891

ՏԳԱՐԱՆ Մ. Գ. ԽՕՏԻՆԵԱՆՅԻ

Дозволено цензурою, Тифлисъ, 10 Юня 1891 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Голов. просп. соб. д. № 41.

ԿԻՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Քաղաքակրթութեան ճանապարհի վերայ գտնուող ազգերի մէջ այն խնդիրը, որ իւր վերայ վաղուց ընդհանուր ուշադրութիւն է գրաւել—այսպէս կոչւած՝ կանանց էմանցիպացիայի խնդիրը, կամ առհասարակ «կանանց խնդիրն» է:

Կանանց խնդիրը այն աւելի ընդհանուր հոսանքի արդիւնքն է, որով հասարակութեան մէջ գտնուող ոչժերը ձգտումն ունին արդիւնաւէտ լինելու այնքան, որքան նոքա առհասարակ կարող են, եթէ միայն արտաքին հանգամանքները խօչընդոտ չը լինեն նոցա կանոնաւոր զարգանալուն:

Ստեղծել այն բոլոր նպաստաւոր արտաքին հանգամանքները, որոնց մէջ կնոջ ոչժը կարողանայ այնքան ազատ արտայայտուել, որքան այդ հարկաւոր է դառուած մի անհատի համար առհասարակ—ահա՛ թէ ինչու՞ն է կայանում կանանց խնդիրը:

Չը գնել կնոջ ճանապարհի առաջ խօչընդոտներ, որ հարկաւոր չեն դառուած տղամարդու նկատմամբ.—ահա՛ կանանց պահանջը:

Իրաւունքների հաւասարութիւն կնոջ և տղամարդու մէջ—կանանց դատը այդ է:

Կանանց խնդիրը այդ բացարձակ ձևով 19-երորդ դարու արգասիք է լուսաւորութեան մէջ առաջնորդող ազգերի մէջ: Նա մեր դարու չէ, այլ 18-երորդ դարու արգասիք է, եթէ առհասարակ կնոջ հասարակական դրութեան խնդիրը ի նկատի առնելու լինենք: Իւր աւելի որոշ բնաւորութիւնը կանանց խնդիրը ստացել է միայն մեր դարում, չը նայած որ—այդ մենք համարձակ կարող ենք ասել՝ խնդրի զարգացման հիմնաքարը դրեց Փրանսիական մեծ յեղափոխութեան այդ առ միշտ յիշելի դարում, երբ անհատականութեան սկզբունքը իւր ամենափառաւոր չաղթանակը տարաւ մենաշնորհեալ դասակարգերի և հասարակ դասակարգի կոիւնների ժամանակ:

Վանանց խնդիրը, որպէս զարուս հերթական խնդիրներից մէկը, զբաղեցրել է ժամանակի ամենանշանաւոր մտածողներին, մամուլին, օրէնսդրութեան. և վերջապէս նա դառել է հասարակաց կարծիքի առարկայ: Արպէս այդպիսին, լուսաւոր մարդկութիւնը բաժանւած է երկուսի՝ կուսակցութեան, որը կանանց լիակատար էմանցիպացիայի կողմն է, — այն կերպ, ինչպէս վերը մենք որոշեցինք այդ խնդիրը, — և կուսակցութեան՝ որը բռնում է այդ խնդրում կարելիին չափ պահպանողական դիրք, հնարաւոր եղածին չափ ժխտելով կնոջ և տղամարդու հաւասար իրաւունքներ վայելելու իրաւունքը:

Վանանց խնդիրը, բուսած Արեւմտեան-Եւրոպայի հողի վերայ — նման այն հոսանքներին, որոնց սահմանը ինքը մարդկութիւնն է և ոչ միայն մի ազգ և մի ցեղ, — իւր հանրամարդկայնութեան շնորհիւ, ծաւալեց ամենուրեք, ուր կարող էին թափանցել ևւրոպական գաղափարները: Առօրիայում նա տեղ բռնեց առաջին անգամ վաթսու-նական թւականների հրապարակախօսութեան մէջ, որ զնալով միայն զարգացաւ:

Եւրոպայի և Առօրիայի հրապարակախօսութեան ազդեցութեան ներքոյ՝ խնդիրը թափանցեց նաև մեզ մօտ, հայկական մամուլի և պրահանութեան մէջ, առանց մեծ ծաւալ և զարգացումն ստանալ կարողանալու: Բայց անկասկած է որ կանանց հասարակական դիրքի խնդիրը մի խնդիր է, որի վերայ ունեցած հայեացքները բնատրոշում են մի սերունդի դիրքը գէպի բազմաթիւ այլ խնդիրներ, որոնք սկզբունքով կապւած են առաջնի հետ ամենասերտ կերպով: Մենք յետոյ կը տեսնենք, թէ որ աստիճանի սերտ կապւած է կանանց զարգացման գործի հետ մի ազգի յառաջադիմութիւնը առհասարակ և որ դա կենսական խնդիր է ոչ միայն կանանց սեռի համար, այլ դեռ առելի քան այդ՝ մի ազգի, պետութեան, վերջապէս մարդկային հասարակութեան համար ընդհանրապէս: Եւ հէնց դորանով պէտք է մեկնել այն, որ կանանց խնդիրը արթուն է ոչ թէ առհասարակ այն երկիրներում, ուր իրանք կանայք ուժեղ են, այլ այն երկիրներում, ուր պետական և ազգային զարգացման գաղափարը ամենից վառ է, ամենից արթուն և ընդհանրութեան գիտակցութեան մէջ խորը արմատներ գցած:

Կանանց խնդրի վերայ ճիշդ հայեացք ձեռք բերելու համար, հարկաւոր է ամենից առաջ գտել նորան այն բազմաթիւ առարկութիւններից, որոնցով շրջապատել են և փաթաթել են նորան՝ խնդիրը աւելի բարդացնելու, նորան խճճելու և զուցէ թաղելու, քան թէ նորան պարզելու համար: Եւ մեզ թւում է, թէ կանանց խնդրի ջերմ պաշտպանները նոյնքան սխալ են դործել այդ կողմից, որքան և նորա հակառակորդները: Կանանց խնդիրը, եթէ նա իրաւունքներ վայելելու խնդիր է, բոլորովին կախումն չունի այն բանից, թէ որքան հաւասար են կնոջ և տղամարդու ոյժերը աշխատանքի և մտաւոր ստեղծագործութեան ու մտաւոր կարողութեան նկատմամբ: Եւ, չը նայած դրան, մենք շատ անգամ զարմացմամբ տեսնում ենք, որ այդ երկու խնդիրները իրար հետ այնպէս շփոթում են, որ կարծես կանանց խնդրի լուծումը կախած լինի այն բանից, թէ որքան ապացուցւած կը լինի կնոջ և տղամարդու ոյժերի հաւասարութիւնը:

Այդպէս չենք հասկանում մենք խնդիրը. կինը կարող է շատ բաներում տղամարդուց բարձր լինել, նա կարող է շատ բաներում տղամարդուց ստոր լինել՝ և վերջապէս ոյժերի հաւասարութիւնը կարող է դեռ ևս երկար ժամանակ ապացուցւած չը լինել,—բայց կնոջ բարոյական, քաղաքացիական և անհատական գոյութեան պայմանները, այնուամենայնիւ չեն կարող մնալ նախնական դրութեան մէջ: Քանը այստեղ ոյժերի հաւասարութեան մէջ է, այլ նորա մէջ՝ թէ կինը ընդունակ է զարգանալու թէ ոչ: Քանի որ այդ մասին ոչ մի կասկած չկայ և չի կարող լինել, ուրեմն և պէտք է ընդունել, որ կնոջ զարգացման համար պէտք է ստեղծել նոյնպիսի յաջող պայմաններ, որպէս այդ ստեղծւում է տղամարդկանց համար:

Մենք ասում ենք՝ կանանց, տղամարդկանց ոյժերի նոյնութիւն ամենեւին չի պահանջւում նրանց հաւասար իրաւունքներ տալու համար: Հաւասար իրաւունքները հարկաւոր են միայն որպէս զի կանանց ոյժերը նոյնքան ազատ զարգանալ կարողանան, որպէս ազատ զարգանալու հարկը ձանաչւում է տղամարդկանց համար: Իրաւունքը պահանջւում է ոչ թէ տղամարդուն անպատճառ հաւասարելու համար, այլ իրաւունքը պահանջւում է միայն որպէս մի պայման, առանց որի կինը, նման, տղամարդուն, չի կարող իւր ոյժերը կանո-

նաւոր և ազատ կերպով զարգացնել, ուրեմն և ընտանիքին, հասարակութեանը, պետութեանը այն ծառայութիւնը մատուցանել, ինչին նա միայն ընդունակ է: Այն իրաւունքները, որ դարերի ընթացքում ձեռք են բերւած տղամարդկանց համար, նոքա, այդ իրաւունքները, խօսք միայն տղամարդու պահանջների համեմատ չեն ստեղծւած, այլ առհասարակ մարդկային անհատի: Անհատը, լինի նա կին թէ տղամարդ, չի կարողացել երեւակայել և իրագործել ուրիշ պայմաններ իւր զարգացման համար, քան այն պայմաններն են, որոնք հիմք են կազմում լուսաւորւած ազգերի պետական, հասարակական և ընտանեկան կազմակերպութեան: Այլ խօսքերով՝ դոյութեան և զարգանալու համար պայմանները նոյնն են կանանց համար, ինչ որ են նոքա տղամարդկանց համար, և այդ պատճառով չկայ մի առանձին սահմանադրութիւն կանանց համար, քան ինչ որ կայ մարդկային ազգի համար առհասարակ:

Նորանից բխում է այն, որ միանգամայն սխալ է կանանց խնդրի վերջնական լուծումը ստատել մինչ այն ժամանակ, երբ ապացուցւած կը լինի կնոջ և տղամարդու ոյժերի հաւասարութիւնը, քանի որ կանանց խնդիրը, որպէս տեսանք, բոլորովին ֆիզիոլոգիական կարողութիւնների խնդիր չէ, և նա առհասարակ գիտնական խնդիր չէ, այլ զուտ կուլտուրական, հասարակական, պատմական խնդիր է, ենթակա պատմական հոսանքների ընթացքին և ոչ թէ գիտնականների վճռին:

Այդ միտքը աւելի ևս պարզ կը որոշի, երբ կը ներկայացնենք ընթերցողների առաջ մի քանի փաստեր կանանց հասարակական գիրքի և ձեռք բերած իրաւունքների պատմութիւնից Արեւմտեան Եւրոպայում: Բայց այդ անսլուց առաջ, մեզ հարկաւոր է դեռ չիշատակել նաև մի ուրիշ տեսակէտ, որից նայել են կանանց խնդրի վերայ՝ կնոջ կոչումը հասարակութեան մէջ որոշելու համար, տեսակէտ, որը ունի իւր գոյութեան իրաւունքը, առանց մի մաղաչափ անգամ կապ ունենալու կանանց խնդրի հետ, ինչպէս մենք այդ խնդիրը ձեւակերպեցինք այս յօդւածի սկզբում:

Այս անկասկած ճշմարտութիւնից, թէ կինը ընտանիքի մէջ, որպէս ամուսին և մայր, մի առանձին դեր է կատարում, այդ անկասկած ճշմարտութիւնից, ասում ենք, դուրս բերին այս ոչ լիա-

կատար եզրակացութիւնը, թէ կնոջ կոչումը ընտանիքին ծառայելն է, այսինքն ամուսին ու մայր լինելն ու երեխաներին դաստիարակելն է: Այդ հայեացքը կապեց կանանց խնդրի հետ, կանանց իրաւունքների խնդրի հետ: Որպէս հեշտութեամբ կարելի է եզրակացնել՝ կանանց կոչումը որոշելով և որքան կարելի է նեղ սահմաններ դնելով կանանց կոչման համար—կանանց խնդրի հակառակորդները միշտ ձգտել են դորանով նաև կանանց իրաւունքները սահմանափակել: Այդ ուղղութեան ծայրայեղները կնոջ համար իսկապէս ոչ մի իրաւունք չեն էլ պահանջել և աշխատել են միշտ խոցս տալ օրաւունք» խօսքից կանանց նկատմամբ: Եւ նոքա այդ չեն պահանջել և այժմ էլ չեն պահանջում, միանգամայն հաւատարմով, որ կինը, որի կոչումը ընտանիքին ծառայելու մէջն են տեսնում, առանց օրէնսդրական միջամտութեան էլ, այլ արդէն բնական հանգամանքների զօրութեամբ, այն դերը կը խաղայ, ինչ դեր որ բնութիւնը կամ Ասուածը կնոջ յատկացրել է:

Դժւար չէ հասկանալ, որ կնոջ «կոչման» խնդրի սիրահարները ներկայումս կանանց էմանցիպացիայի ամենակատաղի թշնամիները պէտք է լինեն: Իբր թէ կնոջ կոչումը այլ բան է, քան մարդկային ազգի կոչումը առհասարակ: Իբր եթէ մարդու կոչումը՝ անհատական և հասարակական ոյժերի զարգացումն է, կնոջ կոչումը նոյնը չէ, այլ մի ուրիշ, ընդհանուր պատմական շրջանակից դուրս եկող կոչում: Իբր թէ կանանց կանացի յատկութիւնները եթէ նոցա աւելի ընդունակ են դարձնում մի գործի համար, քան մի ուրիշ պաշտօնի համար, դորանով արդէն որոշում է կանանց «կոչումը» և առ միշտ սահման դնում նորա գործակատարութեան մարդկային հասարակութեան մէջ:

Մենք ասացինք, որ կանանց կոչումը որոշողները մեծ մասամբ տրամադիր են կանանց իրաւունքները սահմանափակել, աւարկելով որ բնութիւնից կինը այս ու այն դերը ունի կատարելու մարդկային հասարակութեան մէջ և որ ուրեմն դորանից չէն իրաւունքներ նրանց յատկացնելը բնութեան հակառակ է, և ուրեմն հասարակութեան մնասակար: Ահա այդ կերպ է, որ կանանց կոչման խնդիրը կապում են կանանց խնդրի, որ նոյնն է թէ կանանց իրաւունքների, կանանց էմանցիպացիայի խնդրի հետ:

Տենդենցիան պարզ է: Այդ տաքտիկայով՝ որքան նեղ որոշէք կնոջ կոչումը, այնքան էլ կարճ ու նեղ կը կորէք կնոջ իրաւունքները: Եւ որովհետեւ ամենից կարճ կարելը հէնց այն կը լինէր, որ կնոջ մէջ տեսնէիք լոկ ամուսին և զաւակների մայր, տրամաբանական կը լինէր ուրեմն որ կնոջ իրաւունքները հէնց միասնակեցութեան և մայրական մի քանի, զրեթէ ամեն մի կենդանի արարածին յատուկ կանոններով սահմանափակէին:

Կնոջ կոչման խնդիրը անպայման կերպով կապ չունի կնոջ մտաւոր և այլ ընդունակութիւնների խնդրի հետ: Կինը կարող է ընդունակութիւններ էլ ունենալ ամեն տեսակ պաշտօնների համար. բայց, ասում են կանանց էմանցիպացիայի հակառակորդները, կնոջ բնական կոչումը այդ չը լինելով, փաստակար է խրախուսել կանանց զէպի այնպիսի պարապմունքներ, որոնք կը շեղեն կանանց իրանց ամենաբնական շաւիղից, ամուսնութեան, տան տնտեսութեան և մայրութեան պաշտօններից:

Արպէս տեսնում է ընթերցողը, կնոջ կոչման խնդիրը դեռ ևս կնոջ ընդունակութիւնների խնդիր չէ: Կոչումը, յայտնի ուղղութեան տէր անձերի մօտ, ինչ որ ասուածացին նախասահմանութիւն է, մարդկանց ցանկութիւնից, ընդունակութիւններից, պատմական հոսանքներից բոլորովին անկախ մի բան, որի դէմ գնալու ձգտումը՝ մեղք է նոյն իսկ Սրարչի դէմ և կորստաբեր մարդկային ցեղի համար:

Նատ տարիներ մեզնից առաջ այդ առարկութիւնը կարող էր ծանր և լուրջ թւալ: Այդ այն ժամանակներն էին, երբ դեռ հաւատ կար դէպի նախասահմանութիւնը նոյն իսկ դասակարգային իրաւունքների խնդիրներում: Նոյն իսկ լուսաւորեա՞ծ Յունաստանում և Հռովմում հաստատ համոզեա՞ծ էին, որ ստրկութիւնը նախասահմանեա՞ծ դրութիւն է մի դասակարգի համար: Արիստոտէլի պէս հանճար էր պահանջում, որ ստրկութեան գոյութիւնը հին աշխարհում բացատրէր դոնէ արգիւնաբերութեան տեխնիկայի այն դրութիւնով, որ տիրապետող էր իւր ժամանակում. բայց յայտնի է, որ բացատրութիւնը և արդարացումը գոյութիւն ունեցող մի կարգ ու կանոնի դեռ ևս չի հաստատում բնական օրէնք մի ամբողջ մարդկային դասակարգի ճակատագրի համար:

Թէև հին դարերը անդառնալի անցել են, բայց հաւատը դէպի նախասահմանութիւնը մնաց, բայց ոչ իբր աւանդ հին դարերի, այլ իբր անհրաժեշտ հետևանք անքննադատ վերաբերութեան դէպի հասարակական խնդիրները: Անկասկած է, որ միջին կոչւած դարերում՝ ընդհանուր հաւատ կար դէպի Ֆէօդալականական կարգ ու կանոնների մշտնջենական տեղութիւնը և որ իբր ամեն ինչ նախասահմանւած է: Անկասկած է, որ հռովմայական-կաթոլիկական եկեղեցու տիեզերական իշխանութիւնը արևմտեան Եւրոպայի կաթոլիկ ամբօխի և մոլեռանդ հաւատացողների աչքում, նախասահմանւած կոչումն էր նոյն այդ հռովմայական եկեղեցու, որը այդ հայեացքին ամբողջութիւն տւեց և այդ հայեացքն իսկ նւիրադործեց պապի անխալականութեան զոգմայով նոյն իսկ մեր դարում, հազիւ քսան տարի մեզնից առաջ:

Այդպիսի արծողում, բացարձակ հաւատ դէպի մի հաստատութեան նախասահմանւած կոչումը ուրեմն յատուկ չէ միայն մի դարուն, այլ նա յատուկ է այն բոլոր ժամանակներին, ուր պատմական քննադատական վերաբերմունք չկայ դէպի առաջադրած խնդիրները:

Կինը զոհ է գնացել նոյն այդ անքննադատ ուղղութեան: Նախասահմանումն են տեսել այն բանի մէջ, ինչ կնոջը յատուկ է իբրև կնոջ, իբրև սեռի, բոլորովին անտես առնելով այն բոլորը, ինչ կնոջը յատուկ է իբրև մարդու, իբրև անհատի առհասարակ: Բնական է որ կինը ենթակայ է այն բոլոր պահանջներին, ինչ պահանջներ որ ունի մարդս իբր անհատ և իբր հասարակութեան անդամ, հասարակութեան, որը, ինչպէս պատմութիւնն է ցոյց տալիս, պատմական ամեն կարգի փոփոխութիւններ է կրում ժամանակաց ընթացքում՝ նայած թէ որոշ ժամանակում մի ազգի կամ պետութեան շահերը ինչ են պահանջում:

Նկատելու արժանի մի իրողութիւն է այն, որ կանանց և տղամարդկանց իրաւունքների հաւասարացնելու խնդիրը պատմութեան մէջ չի շառաջացրել այն խռովացող տեսարանները, որ ներկայացրել են այլ և այլ դասակարգերի կռիւները, թէ հին դարե-

րում և թէ նոր ու նորագոյն ժամանակներում: Նառ բնական է այդ: Մեծ մասամբ մարդիկ պահանջ են անում կարիքից ստիպւած: Երբ հասարակութիւնների զարգացման պրոցեսի ընթացքում նորանոր հանգամանքներ են շառաջանում և այդ նոր ստեղծւած պայմանների մէջ նախկին իրաւունքի չարատեւութիւնը վտանգի է ենթարկում մի մեծ դասակարգի, նորա հետ և ամբողջ հասարակութեան, ուրեմն և պետութեան կենսական շահերը, այն ժամանակ զոյութիւն ունեցող իրաւունքը ենթարկում է կամ մասնաւոր կամ արմատական փոփոխութեան: Այդպիսով առաջ է դալիս նոր իրաւունք: Աւրեմն կարիքն է շառաջացնում դրական իրաւունքը:

Բայց կանայք, հասարակութեան մէջ այնքան սերտ կապւած են տղամարդկանց հետ, որ նոցա դատերը մեծագոյն մասով ընդհանուր են եղել: Երբ սորկութիւնը վերացրին — գորանով ստեղծւեց նոր դրութիւն և նոր իրաւունք, ոչ միայն տղամարդկանց, այլ և կանանց համար: Ճորտութիւնը վերացրին, որով ստեղծւեց նոր դրութիւն և նոր իրաւունք, բայց հաւասարապէս թէ տղամարդկանց և թէ կանանց համար: Խղճի (կրօնքի) ազատութեան երկիրներում՝ այդ ազատութիւնը ոչ միայն տղամարդկանց համար է, այլ և կանանց: Մտքի ազատութեան երկիրներում՝ գրեթե իրաւունքը ընդհանուր է տղամարդկանց և կանանց համար: Կատարանական վերանորոգութիւնը իւր հետեւանքներով հաւատարապէս տարածւում է տղամարդկանց և կանանց վերայ և այլն:

Այդ ինչ է ցոյց տալիս? Առնւազն այն, որ կինը, հասարակական և օրէնսդրական այլ և այլ մեծ փոփոխութիւնների մէջ, մասնակից է եղել այնպէս, որպէս և տղամարդը, բայց ոչ անպատճառ շանուն կանացիութեան, այլ որպէս հասարակութեան անդամ, հասարակութեան մի տարր:

Երբ մենք ասում ենք, թէ կինը մասնակից է եղել հասարակական-պատմական մեծ փոփոխութիւններին, շատերը մեր ընթերցողներից տրամադիր կը լինեն մեզ հարցնելու, թէ կանանց այդ միջամտութիւնը արդեօք ինչո՞ւմն է երեւցել, երբ են նոքա ցոյց աւել իրանց ոյժը, երբ և ինչով են նոքա խոնարհացրել իրանց առաջ իշխանութիւն ունեցողներին և նոցանից զուրս կորզել այն իրաւունքները, որոնցից մի քանիսը մենք վերը չիշեցինք: Եւ մի՞թէ

տղամարդիկը չեն այդ դրութիւնները ստեղծել թէ իրանց և թէ կանանց համար, առանց մասնակցութեան այս վերջինների:

Երբէք ոչ: Մտածողութեան այն պրոցեսի մէջ, որ կատարել է ու կատարում է հասարակական-քաղաքական խնդիրները լուծելուց առաջ, մասնակից են եղել թէ տղամարդիկ և թէ կանայք, առանց որ մենք կարողութիւն ունենանք որոշելու այդ մասնակցութեան չափը տղամարդկանց և կանանց կողմից առանձին-առանձին: Եւ վերջապէս յառաջդիմութեան և ազգային կամ պետական շահն է որ պահանջում է այս կամ այն փոփոխութիւնը և ոչ թէ անպատճառ բռնի միջամտութիւնը այս կամ այն դասակարգի կողմից: Իսկ երբ իրաւունքներ կամ դրութիւններ ստեղծւում են ոչ միայն տղամարդկանց, այլ և կանանց համար, պարզ է, որ այդ կարող է կատարել միմիայն, երբ կանայք ճանաչւում են իբր գործող ֆակտոր: Իսկ ամեն ֆակտոր արդէն ոյժ է: Եւ մենք ասում ենք, որ այդ մտքով կանայք գործել են անցեալում, գործում են այժմ և կը գործեն ապագայում, բացի եթէ հասարակութիւնը ինքը դադարի առաջ գնալուց և մի ազգի վերայ ծանրանայ անշարժութեան ոգին, ինչպէս այդ եղել է շատ հին ազգերի նկատմամբ, որոնք կամ իսպառ կորել են, կամ եթէ գոյութիւն ունեն, բայց սնդոր են դարձել մտքեր չղացնելու և մշակելու համար: Ահա ինչու նաև կանանց անշարժութեան և իրաւագուրկ դրութեան երկիրներում ոչ միայն կանայք են անշարժ, այլ և ամբողջ հասարակութիւնը, ամբողջ ազգը և պետութիւնը:

Սակայն «կանանց խնդիր» ասելով հասկացել են միայն իրաւունքների խտրութիւնը կանանց և տղամարդկանց մէջ: Բայց իրաւունքների այդ տարբերութիւնը բոլոր ժամանակներում նոյնը չի եղել նոյն իսկ միևնոյն ազգի պատմութեան մէջ: Այդ պատճառով էլ միևնոյն պահանջները չեն կազմել կանանց խնդրի առարկան զանազան ժամանակներում: Ներկայումս կանանց խնդիրը Ներոպայում կայանում է գլխաւորապէս իրաւունք ձեռք բերելու մէջ՝ բարձրագոյն ամեն տեսակ ուսում ստանալու, քաղաքական և քաղաքացիական ամեն տեսակ ընտրութիւններին մասնակցելու և պետական ամեն տեսակ պաշտօններ վարելու:

Մենք այդ պահանջների մէջ տեսնում ենք կնոջ անհատա-

կան իրաւունքներ զարգանալու մի խնդիր: Եւ կ'աւելցնենք՝ այդ շարունակութիւն է մի պրոցեսի, որի հիմքը դրել է նոր ժամանակների օրէնսդրութեան ոգին: Այդ նոր օրէնսդրութիւնը աշխատել է կարելիին շափ զտել կնոջ նկատմամբ այն՝ ինչ պատկանում է կին մարդուն իբրև սեռի և այն՝ ինչ պատկանում է կին-մարդուն իբրև անհատի, իբրև հասարակութեան անդամի: Բոլորովին անկասկայն խնդրից թէ տղամարդու հետ համեմատած կին-մարդը ինչ ընդունակութիւնների տէր է, նոր օրէնսդրութիւնը, անցեալ դարու վերջերում ճանաչեց կնոջ անհատական իրաւունքները, յայտարարելով կնոջ կամքի ազատութիւնը ամուսնանալու գործում,— և այդ բանում միանգամայն համաձայն քրիստոնէական վարդապետութեան, թէև հակառակ կաթոլիկ եկեղեցու արագիցիաներին,— և երկրորդ՝ կնոջ նիւթական անկախ գոյութեան իրաւունքը: Առաջինի վերաբերեալ կնոջ անհատականութիւնը ճանաչեց հանդիսաւոր կերպով, երբ Ֆրանսիական առաջին սահմանադրութեան մէջ 1791 թւականի (գլուխ II, յօդած 17) մտցրեց հետևեալը՝ «Օրէնքը ճանաչում է ամուսնութիւնը լոկորպէս քաղաքացիական դաշն»: Եւ նոյն այդ ֆորմուլը ընդունեց յետոյ բոլոր եւրոպական օրէնսդրութիւնների մէջ և իրաւագիտական բոլոր դասագրքերի մէջ: Ճանաչելով ամուսնութեան մէջ քաղաքացիական դաշնի բնաւորութիւնը, միանգամայն լողիկաբար և այսպէս ասած ինքն իրան կինը պէտք է ճանաչէր որպէս քաղաքացի. իսկ դրա հետ արդէն կապած են քաղաքացիական իրաւունքները:

Նոյն այն ոգին, որ թելադրեց այդ օրէնքը, թելադրեց նաև կնոջ անկախ գոյութեան իրաւունքը: Այդ կարելի էր միայն եթէ կնոջ նկատմամբ ճանաչէր իրաւունք անկախ կերպով աշխատելու, նման տղամարդուն: Թերևս տարօրինակ թւայ, բայց սա պատմական ճշմարտութիւն է, որ Արևմտեան-Եւրոպայում մինչ 18-երրորդ դարու վերջը կինը զրկւած էր անկախ աշխատանքի իրաւունքից:

Անկախ գոյութիւնը կնոջը, որպէս և տղամարդուն, կարող է ապահովել մասամբ հայրական ժառանգութիւնը, բայց աւելի քան այդ՝ անկախ աշխատանքը— որ և է արհեստ բանեցնելը: Արդ՝ մինչ 18-դ դարու վերջը կինը թէ դուրս էր մնում հայրական ժառանգութիւնից

և թէ նա մուտք չունէր որ և է համքարութեան մէջ: Իսկ մինչ 18-դ դարու վերջը բոլոր արհեստները և ամբողջ վաճառականութիւնը կենտրոնացած էին համքարական ընկերութիւնների մէջ, որոնց անդամ չէր կարող դառնալ կին-մարդը: Այսպիսով կինը իրաւունք չունէր արհեստաւոր-վարպետ լինելու, չէր կարող ուրեմն և անկախ աշխատանք ունենալու: Կինը զրկւած էր անկախ գոյութիւն ունենալու հնարաւորութիւնից: Դա մի հանգամանք է, որ սերտ կերպով կապւած էր կնոջ մասին ունեցած հայեացքների հետ: Բայց որպէս հին համքարութիւնները ջնջւեցին, որովհետև հայեացքները ազատ աշխատութեան մասին յեղաշրջւեցին, յեղաշրջւեցին նաև կնոջ մասին ունեցած հայեացքները, — և կինը, ստեղծւած նոր պայմանների մէջ, ստացաւ անկախ աշխատանքի իրաւունք, նման տղամարդուն:

ԱՌԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ:

ՓՈԹՈՐԿԻ ԺԱՄԻՆ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Յուզւած կոհակներն գալիս են զարնում
Փըրփըրած ափի հըսկայ լեռներին—
Լեռները հըպարտ, լեռները կանգուն
Նայում են հանգարտ մըրըրկած ծովին:

Երկինքը գոռում, շանթեր է թափում
Հըսկայ լեռների սուր գագաթներին—
Լեռները հըպարտ, լեռները կանգուն
Նայում են հանգարտ գոռոզ փոթորկին:

Բայց խոր ձորի մէջ, լեռների կըրծքում,
Ահարկու մի ձայն է թընդում ուժգին—
Այն լեռներըն են այնպէս ծիծաղում,
Ծաղրում ապրտամբ թըշնամիներին:

Ի Դ Է Ա Լ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԿԼԵԱՆՅԻ

Հերիք, իգէսլ, ինձ խաբէական
Յոյսերով վառած՝ քարշես քո ետից.
Կանգնիր և շուտով ինձ տո՛ւր պատասխան.
Խօսիր, և խօսիր անկեղծ քո սրբտից:
Ո՛ւր է այն շքեղ աւետեաց աշխարհն,
Ուր դու խոստացար ինձ քեզ հետ տանել.
Ջրրկանքներով լի այս ճանապարհը
Ինձ համար արգէն ծանրը է դարձել:
— «Ձը գիտես արդեօք, օ՛ թո՛յլ հողեղէն,
Դեռ որքան հեռու է մեր նըպատակ,
Որ հինգ քայլ չ'արած՝ յոգնեցիր արգէն,
Ինչպէս փոքրոգի անմիտ պատանեակ:
Իմացիր ուրեմն, որ ո՛չ դու, թըշւա՛ռ,
Եւ ո՛չ քո որդիք, և ո՛չ քո թոռներ
Տեսնելու չեն այն աւետեաց աշխարհ,
Ուր ուղղում եմ ես իմ հաստատ քայլեր:
Բայց նա կայ, նա կայ, և դարերից յետ,
Ես իմ մըտերիմ ուղեկիցներով
Կը մըտնեմ երկիրն այն երանաւէտ՝
Պատած հըրեղէն ճառագայթներով:
Օ՛, արիացիր և արի՛ ինձ հետ՝
Տառապանք, քըրտինք արհամարելով,
Եւ մինչև վերջին քո սառ իջւան

Թող միշտ վառ մընան քո բոլոր յոյսեր:
 Թէ կը գայ մի օր փայլուն ապագան,
 Կը բացւի նոր բաղդ, նոր, պայծառ օրեր:
 Բայց եթէ քո մէջ էլ վառ յոյս չը կայ
 Եւ ոչ ջերմ հաւատ — ես հրաժարում եմ...»
 — Թող ամբողջ աշխարհ ինձ լինի վրկայ,
 Իրէնք, ինձ տար, ես հետեւում եմ:

Թեֆլիս. 23 մայիսի, 1891 թ.

ՉԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ

(ՊԱՏԿԵՐՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ՔՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԻՑ)

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

I

Գ. ԳԻՒՂԻ ՇՈՒԿԱՆ

Արաքսի ափերից մի քանի վերստ հեռու՝ Գողթան գաւառի Գ. գիւղում երեք շաբաթ է անձրև չէ գալիս, և այդ պատճառով այնտեղ տիրում է սարսափելի շոք, և փողոցներում հաւաքւել է այնքան փոշի, որ փոքր ինչ սաստիկ հողմը կարող է փոշու ամպ բարձրացնել գիւղի վերայ: Քէպէտ արևը արդէն մայր է մտել և մօտիկ է իրիկնադէմը, բայց գիւղի աջ և ձախ կողմից ընկած ժայռոտ ուրերը այնքան ջերմացել են արեգակի կիզիչ ճառագայթներից, որ կարծես օդագոյն կամ, աւելի լաւ, անգոյն բոց են արձակում իրանց վերայից: Փողոցներում մէկ մէկ աչքի են ընկնում այգիներից վերադարձող գիւղացիներ, որոնք խոտերով բարձած ձին, ջորին կամ էջը առաջներն արած՝ յողնած և դանդաղ քայլերով գնում են առևն, կամ երևում են սափորները ուսերին և կժերը կռնատակներին աղջկերք, կանայք և երեխաներ, որոնք գնում են աղբիւր գիշերւայ համար ջուր բերելու: Բայց գիւղի հասարակութեան մեծամասնութիւնը այդ ժամին եկեղեցումն է:

Ժամը արձակեց: Կանայք և երեխաները իրանց բնակարաններն են քաշուում, իսկ տղամարդիկ առանձին առանձին կամ խումբ խումբ դիմում են դէպի շուկան: Այդ շուկան, ուր կենդրոնանում է գիւ-

ղական ժողովրդի հասարակական կեանքը, բռնում է իսկապէս մի շատ փոքրիկ տարածութիւն: Նորա մի կողմում միզանն ¹⁾ է, միւս կողմում մի քանի կրպակներ, որոնք շատ անգամ դատարկ և փակ են լինում, երրորդ կողմում սպանդանոցն է: Բայց շուկայի ամենահետաքրքրական մասը այն տեղն է, ուր ժողովուրդ խմբուում է հասարակութիւնը՝ մասամբ տեղաւորելով պատի տակ դրած երկայն գերանի վերայ, մասամբ ոտի վերայ կանգնելով: Այս վերջին մասը նշանաւոր է այն պատճառով, որ այստեղ են վճոււում կամ գոնէ յղանում և վիճաբանութիւնների նիւթ դառնում գիւղին վերաբերեալ զանազան խնդիրներ, որոնց միջոցով կատարւում է մտքերի փոխանակութիւն գիւղացիների մէջ: Այստեղ են հաղորդւում լուրեր մտալուտ և հեռաւոր աշխարհներից, և լրատուն լինում է լրագրութեան հետևող այս կամ այն դրագէտը: Այստեղ է յաճախ կատարւում մեկիքը ²⁾ իւր դատաստանը: Նրբեմն այս շուկան մեծ կենդանութիւն է ստանում, մանաւանդ այն դէպքերում, երբ պատահում է արտասովոր, բաց գիւղացու սրաին մօտիկ մի նոր բան: Լսւում են բացականչութիւններ և կենդանի ծիծաղ, բարձրանում է աղմուկ-աղաղակ: Այդ ժամանակ շուկան չիչեցնում է Հովերոսի նկարագրած յունական ազգերի աղմկալից ժողովները:

Ահա այստեղ էին դիմում ժամկց դուրս եկած մարդիկ: Ամենից առաջ եկան երկու երիտասարդ գիւղացիներ, որոնք ամառ ժամանակ օրւայ մեծ մասը աշխատում են սեփական այգիներում և ձմեռը վայելում իրանց ձեռքի վաստակը: Միջոցների սղութեան պատճառով նոքա օտարութեան առհասարակ չեն դիմում և միշտ դիւզում ապրելով նոցա հասկացողութիւնները գիւղական աշխարհայեացքի սահմանից երբէք դուրս չեն գալիս. նոքա իսկական հարազատ զաւակներն են Ռ. գիւղի: Անցնելով գերանի մի ծայրից՝ նոքա նստեցին միւս ծայրի վերայ: Ընտրել նստարանի այն կողմը, որ սովորութիւնը յատկացրել էր քահանային, ծերերին և իշխաններին ³⁾, համարձակութիւն կը լինէր նոցա կողմից: Պէտք է իմանայ իմ ընթերցողը, որ դիւզում անհամեմատ աւելի շատ, քան

¹⁾ Գիւղի հասարակութեան կշեռքը: ²⁾ Գիւղի տանուտէրը: ³⁾ Իշխան կոչւում է Ռ. գիւղում առհասարակ ունեւորը.

թէ քաղաքում, աչքի է ընկնում այն շարգանքը և մեծարանքը, որ վայելում են հոգևոր պաշտօնեան, ծերր և ունեորը իւր համագիւղացու առջև: Յետոյ երևաց մի այլ զիւղացի: Սորա հագուստը նման է այն երիտասարդների զգեստին, բայց առաւել հին և մի քանի տեղից կարկատւած:

— Աղորմի՛ Ստուած, — ասաց նա՝ նստելով երիտասարդներից քիչ հեռու:

— Աղորմի՛ ծնողացդ, — պատասխանեցին մեր ծանօթ զիւղացիները և շարունակեցին իրանց խօսակցութիւնը:

Նորեկը անտարբեր կերպով սկսեց գլուխը այս ու այն կողմը շարժել. կարծես ցանկանում էր իմացնել իւր հարևաններին, թէ նոցա խօսակցութիւնը նորան չէ հետաքրքրում, ուրեմն թո՛ղ համարձակ շարունակեն իրանց զրոյցը: Բայց որովհետև նորա դէմքը յանկարծ փոխեց և լուրջ, մտախոհ կերպարանք ստացաւ, այդ բանից կարելի էր ենթադրել, որ նա այնքան էլ անուշաղիր չէ դէպի իւր դրացիների պատմութիւնը: Հարկա՞ւոր էր արդեօք այսքան զգոյշ զիրք բռնել և ապա խորամանկ կերպով ականջ դնել նոցա, այդ չէ կարող ասել նա ինքն էլ: Նա այդպէս էր տեսած, այդպէս սովորած: Աւրիշը լինէր նորա տեղը, աւելի սրտաբաց և աւելի միամիտը, անկասկած, իսկոյն կը մասնակցէր հարևանների խօսակցութեանը: Բայց Պ. զիւղի իսկական բնակիչը առաւել զգոյշ և խորամանկ և ուշաղիր է դէպի իւր ամեն մի քայլը, քան մենք սովոր ենք կարծել առհասարակ զիւղացիների մասին:

Բայց ահա գերանը քիչ քիչ բռնւում է, և մի քանի րոպէ չ'անցած էլ նստելու տեղ չը կայ նորա վերայ: Նորա երկու կողմին խումբ խումբ կանգնած են զիւղացիները: Ես կ'ուզէի նկարագրել այս ամբողջ հասարակութիւնը մանաւանդ այն պատճառով, որ նա է միակ հերոսը, որ պիտի ներկայանայ մեր առջև: Լինէի նկարիչ, ամենամանրաման ճշիւթեամբ ես կ'կենդանագրէի բոլորի դէմքերը և շորերը և սորա համար կ'ընտրէի այն վայրկեանը և դիրքը, որ ամենահետաքրքրական և բնորոշ գծերով պատկերանար ընթերցողիս առջև Պ. զիւղի ամբողջ հասարակութիւնը: Բայց կայ բան, որ կարող է կատարել վրձինը և որի համար թոյլ է գրիչը: Ահա ինչու ես կը բաւականանամ միայն մի քանի նկատողութիւններ անելով:

իսկ մնացածը թող լրացնէ, եթէ կարող է, ընթերցողիս երևակայութիւնը:

Պերանի վերի ծայրին նստած է պարոն Սարգիսը՝ Գորան ասում են «պարոն» այն պատճառով, որ նա ոչ իւր հագուստով, ոչ իւր դադափարներով շատ էլ նման չէ աղաներին, և «աղա» կոչումը նորան չէր սազիր: Իսկ մի հասակաւոր մարդ է՝ հագուստը երոպական. դէմքի արտացայտութիւնը բարի և մեղմ: Սօսելու և լսելու միջոցին նորա երեսին նշմարւում է բարի, անդորր ժպիտ: Նա դիւղի գրազէտներին է, լուսաւոր երկիրներում եղած և այժմ կարծում է կեանքը՝ անհոյ և հանգիստ վայելելով իւր բազմամեաց վատակի պտուղները: Նա սիրում է պատմութիւններ անել իւր ճանապարհորդութիւններից, իւր զլխին եկած պատահարներից, իւր տեսած լսածից: Նա սիրում է կարգալ և կարգալիս նա դարձեալ ժլպտում է, եթէ մինչև անգամ կարգացածը լինի բաւականին տաղակալի և ոչ ծիծաղաշարժ: Ընթերցման ժամանակ նորա աչքի առջև դալիս անցնում են նոր մարդիկ, նոր արկածներ. այդ բանը նորան հաճութիւն է պատճառում, և ահա թէ նա ինչու է ժպտում: Նա ստանում է բոլորովին հակառակ, տարբեր կուսակցութեան պատկանող լրագիրներ: Բայց տարօրինակ է նորա կարծիքը այդ թերթերի մասին: Երկուսն էլ հաւասարապէս հաւանում է, երկուսն էլ նա հաճութեամբ և ժպտալով է կարդում, համաձայն է երկուսի իրար բացատրող հայեացքների հետ էլ: Նորա միտքը մնում է զանազան աշխարհահայեցողութիւնների ազդեցութեան ներքոյ, և ի՛նչ է դուրս դալիս այդ խառնուրդից, այդ միայն Աստուծոն է յայտնի: Արովհետև պարոն Սարգիսը այնքան ընթերցասէր է, հետևում է լրագրութեան, այդ պատճառով հասարակութեան մէջ զլիաւոր լրատուն նա է: Նա հաղորդում է ոչ միայն ընդհանուր նշանակութիւն ունեցող լուրեր, այլ և բոլորովին պատահական, մասնաւոր դէպքեր, որոնք այսպէս թէ այնպէս մտնում են թերթերի մէջ: Այս քաղաքում մեծ հրդեհ է պատահել, այնտեղ երկրաշարժ, մի տեղ կարկուտը փշացրել է դիւղացիների արտերը, մի այլ տեղ երաշտութիւն է տիրում, Ամերիկայում տեղի են ունեցել աւերիչ հեղեղներ, Ամերիկայում ծնւել է մի երկխայ երկու զլխանի և այլն: Բայց մի առանձին հետաքրքրութեամբ էին լսում այն լուրերը,

որոնք վերաբերում էին վերջին ռուս-տաճկական պատերազմին: Այս տեսակ լուրեր լսելով, հասարակութիւնը յայտնում էր իւր կարծիքները, իւր ուրախութիւնը, զարմանքը, զայրոյթը, և պարոն Սարգիսը, աւելի ևս բարի դէմք ստանալով, սկսում է ժպտալ, և նորա անկեղծ ժպիտը առաջ է դալիս գուցէ այն խոր հաճութիւնից, որ լինում է պատճառը աշխոյժ խօսակցութեան, որ ինքն է հետաքրքրում բոլորին իւր ասած բաներով:

Պարոն Սարգսի կողքին նստած է ազա Թումանը, մի հասուիկ և բարձրահասակ տղամարդ՝ հազուստը ասիական, պսպղուն լատիկից: Նորա դէմքի արտայայտութիւնն է արտայայտութեան բացակայութիւն: Եւ իրաւ դորա երեսին նայելիս ո՛վ կարող է գուշակել թէ ինչ խելքի, ի՞նչ բնաւորութեան մարդ է դա: Բայց նորա թանկագին գօտին և ոսկեայ ժամացոյցը պարզ վկայում են նորա կարողութեան մասին, և իսկապէս նա Պ. դիւղի ունեոր, հարուստ բնակիչներինցն է: Պիւղի կենդրնում բարձրանում է նորա տունը՝ շրջապատւած ահագին պարիսպներով, ինչպէս Փէօղալի մի ամուր դղեակ: Ետո դահլիճներ և սենեակներ կան այդ տան մէջ կիսաւրօպական և կիսասիական ձևով փարթամ կահաւորւած: Ետո սնդուկներ և արկղներ կան այդ սենեկներում՝ լի եւրօպական և ասիական թանկագին իրեղէններով: Բայց ամենանշանաւորն է նոցա մէջ մի մեծ երկաթէ սնդուկ, որի մէջ կողպւած են գիւղացիների գրուները՝ ոսկեայ մատանիներ, օղակներ, ապարջաններ և այլն: Այս բոլորը ազա Թումանի փառքի և պարծանքի առարկան է: Իւր կարծիքով, ինքը շատ խելք մարդ է: Այլապէս ի՞նչ հնարով ձեռք կը բերէր այսքան հարստութիւն: Բայց չը նայելով նորա այդ կարծիքին, նա դիտէր խիստ լուրջ կերպով յայտնել ոչ այնքան լուրջ կարծիքներ, որոնք սակայն յաճախ հաւանութիւն էին գտնում ժողովրդի մէջ ընթերցողիս յայտնի պատճառով:

Ապա հետևում է Նիսազը: Ահա մի մարդ, որի ներշնչութիւնը կենդանութիւն է տալիս շրջանին, խօսեցնում ծիծաղեցնում նորան, որի անունը բերանից բերան է անցնում նոյն իսկ շրջակայ գիւղօրայքում և որի բացակայութիւնը, մահը կարող է ախտասնք պատճառել և երկար ժամանակ անփոխարինելի և թափուր թողնել իւր տեղը: Նա հասարակութեան հոգին է: Բայց հասարակութիւնն էլ

Նորա հոգին է: Առանց հասարակութեան նորա համար ծանր կը լինէր սպրուտը: Տկար ժամանակ նա ձիով պիտի գայ շուկայ և ձիու վերայ նստած պիտի խօսէ, լսէ, ծիծաղէ: Նա բնածին զւարճախօս է, սրամիտ. բայց նորա սրամտութիւնները չաճախ սահմանից անցնում են և հասնում արդէն զծուծ ցինկիութեան աստիճանին: Հասարակութեան մէջ նա արտասանում է այնպիսի խօսքեր և անում այնպիսի շարժումներ, որ նոցա համար մի գրականական բառ անգամ չէ կարելի գտնել: Նա պարզ խօսող է, ծածկել և քաշել չը գիտէ: Նա երեսով կտայ իւրաքանչիւրի պակասութիւնը, ով որ էլ լինի հակառակորդը—հարուստ թէ աղքատ, մեծ թէ փոքր, մարդ թէ կին: Այնուամենայնիւ նա ոչ ոքի չի վիրաւորում. նա իւր նկատողութիւնները համեմում է այնպիսի ծիծաղաշարժ սրախօսութիւններով, որ մարդուս մնում է միայն՝ ներքին ամօթը զսպելով՝ ծիծաղել նորա հետ: Այս տեսակ յատկութեան համար նորա անունը դրել են «շուն» և նորան այլապէս չեն կոչում, եթէ ոչ «շուն Նիազ»: Զը պէտք է զարմանալ, որ այս անտաշ, սգէտ, բայց միևնոյն ժամանակ խելօք, զւարճախօս և սրամիտ մարդուց ուսումը և գրականութիւնը կարող էր ստեղծել հասարակական գուցէ մի նշանաւոր երգիծաբան: Բայց այժմ՝ նա ծեր է, մէջքը քիչ կուացած, ման է գալիս փայտի օգնութեամբ: Նա շուտով գուցէ մեռնէ. սակայն նորա սրամիտ խօսքերը երկար կենդանի կը մնան գիւղացիների բերնին, և նա գերեզմանից էլ կը շարունակէ ծիծաղեցնել հասարակութիւնը:

Նիազի մօտ նստած է Գրիգորը: Սորա ճակատին ծալած կընծիւնները, թաւ յոնքերը և յոգնած, ճնշող հայեացքը տալիս էին դէմքին մի տեսակ խորհրդաւոր լրջութիւն: Խօսելու և լսելու միջոցին նա սիրում է կուացած զեռնին նայել և իւր հաստ ձեռնափայտով խազել հոգի վերայ դժեր և նկարներ: Նորա խօսակցութիւնը ծանր է, մտածելու եղանակը դանդաղ, բայց արտասանած խօսքերը շատ անգամ անհակաճառելի և վճռող: Նորա հետ վիճելիս՝ դիւղացին չաճախ իրան Կժւար դրութեան մէջ է զգում, հակառակորդի հերքումը ընդհատուում է յանկարծ, և նա զգում է այն, ինչ որ պիտի զգայ մարդս, երբ ձիու վերայ արագ սլանալիս՝ իւր ատջև յանկարծ մի բարձր պատնէշ է տեսնում: Գիւղացիները չարգում են նորա խելքը, լրջութիւնը և փորձաւորութիւնը և զուր

տեղը չեն նորա անունը դրել «Ծանր ծով»: Երկար ժամանակ նա պարապել է առևտրով և, անկասկած, նա չեո չէ մնացել իւր ընկերակից վաճառականներից զանազան խարդախութիւնների մէջ: Բայց զժբաղղութիւնները, եթէ նորա խօսքերով ասելու լինենք, նորա մէջքը կոտրեցին, և նա իւր երկարամեայ փորձերից իւրացրեց այն աշխարհահայեացքը, թէ անպատիժ չը պէտք է թողնել նոցա, որոնք մարդու «մէջք են կոտրում և լեզու կարծեցնում»: Եւ իրաւ, նա իրան համարում էր հասարակութեան շահերի պաշտպանը և այդ գերանի վերայ նստած շատ աղաներից նա միշտ հաշիւներ է պահանջում գիւղի վերայ գործ դրած գումարների մասին, ցոյց տալով նոցա մէջ ոչ բոլորովին շիտակ և բաւականին կասկածելի տեղեր: Պարզ է, որ «մեծամեծները» նորան անկարող են սիրել. բայց հասարակ դասի մօտ նա վայելում է յարգանք և պատկառանք:

Յետոյ գալիս է մի շարք նոր տիպարների, որոնք կազմում են գիւղի, այսպէս ասենք, միջին դասակարգը: 'Պոցանից իւրաքանչիւրը եղած է օտարութեան մէջ, պարապել է առևտրով, լաւ և վատ ճանապարհներով վաստակել է մի համեստ կարողութիւն և այժմ շատերի նման վայելում է իւր ընտանեկան շրջանում հանգիստ և խաղաղ կեանք՝ իւր տան և այգու վերայ հսկելով: Մի քարի կամ սաքւի կամ գերանի վերայ նստած՝ նոքա սիրում են զրոյց անել, պատմել տեսած լսածից, զանգատել օրւայ շարիքների վերայ: Առաւօտներ և երեկոները նոքա շուկայի մշտական յաճախողներն են:

Այս դասակարգին է պատկանում և Գրիգորի կողքին նստած Մինասը: 'Կա յայտնի է գիւղում, իբրև ժլատ վերին աստիճանի: Նորա երեսին պախարակում են այդ արատը, բայց նա միայն... ժպտում է: Բայց փորձեցէք համոզել այդ մարդուն, որ ժլատութիւնը լաւ բան չէ: Նա կը պատասխանէ թէ՛ այն, ինչ նա անում է, ժլատութիւն չէ, այլ պահպանողութիւն, և նոքա, որոնք նորան ժլատ են անւանում, չը գիտեն թէ ի՛նչ են ասում: Սրինակչի նորա համար շատ բնական բան է, եթէ նա, ունենալով միջոց, այնուամենայնիւ հանում է իւր կօշիկների հոգին, տասը քսան տեղից նորան կարկատելով, կամ եթէ ուրախանում է, երբ մի երկու գրւանքայ շաքարը կարողանում է տանել մի ամիս և աւելացնել մի քանի կտորներ միւս ամուսայ համար: Նա կ'արդարանայ թէ աղջիկ

ունի մարդու տալու, նոցա համար հարկաւոր է պահել, խնայողութիւն անել: Նա հաւատացնում է, որ փողի վերայ զուր տեղը չէ թռչուն (այսինքն՝ արծիւ) նկարած. նա ունի թևեր, որ կարող է թռչել, եթէ նորան պինդ չը պահես, երկաթէ վանդակում չը պահես: Բայց հեղինակը չէ կասկածում, որ իւր աղջկայ հարսանիքին աշխատելու է մի կերպ բանը եօլլա տանել, իսկ որդուն՝ ուսման ժամանակ ստիպելու պահել իրան, իրան զրկել շատ և շատ կարևոր բաներից: Ահա մի գիւղական Պիւշկին, որ թէպէտ և այս վերջինիս այլանդակութեանը չէ հասցնում իւր մարդկային արժանաւորութիւնը, բայց որից յայտնի հանգամանքները կարող են ստեղծել մի իսկական Պիւշկին: Յաւալին այն է, որ նա առաջինը և վերջինը չէ Պ. գիւղում. այլապէս ի՞նչ հարկաւոր էր ինձ անհանգստացնել այդ մարդուն:

Այս գերանի վերայ նստողներից շատերը անգոյն համապատկերներ կամ հակապատկերներ են վերև չիշած անձնաւորութիւնների: Այդ պատճառով նոցա մասին երկարաբանելը կը լինէր տաղտկալի և աննպատակ: Կան այնտեղ և շատ տարօրինակ բնաւորութիւններ. բայց նոքա՝ կազմելով մի տեսակ բացաւորութիւններ, կանգնած լինելով բոլորովին առանձնակի, ընդհանուր հետաքրքրութիւն կարող չեն ներկայացնել: Ահա ինչու ես լուրթեամբ կ'անցնեմ և այդ պարոններին:

Պատճառը՝ հեղձիկ օդը, սարսափելի տօթն էր արդեօք, որ թուլացրել էր բոլորին, թէ մի այլ բան, բայց ընդհանուր աշխոյժ խօսակցութիւն սկզբում չէր լինում. նա կատարում էր բաժան բաժան, կցկտուր: Մէկ խօսող հազիւ մի քանի անտարբեր լսողներ էր գտնում: Ամանք մէջքները պատին տւած՝ մտքերի մէջ խորասուզւած՝ «տէր-ողորմեացի» սաթէ հատիկներն էին խաղացնում: Միւսները՝ աչքերը գետնին չառած՝ ձեռնափայտով հողն էին խըղձըղում: Մի քանիսն էլ՝ քթախոտ ծխելով աչքները այս ու այն կողմն էին ման ածում:

Նստարանի երկու ծայրերի մօտ, ինչպէս արդէն ասացի, ոտի վերայ կանգնած խմբւած էին շատ գիւղացիներ: Նոցա մէջ կատարում էր հետևեալ խօսակցութիւնը:

— Տղե՛րք, խոստովանք լինի, երեկ լաւ ժամանակ անցկացրինք

հա՛յ,—սկսեց մէկը երիտասարդների խմբի միջից՝ դիմելով իւր ընկերներին:

—Ախո՛ս, ախո՛ս, ես չը կարողացայ,—ասաց միւսը,—բանը ծուռ պատահեց, ի՞նչ անես:

—Այս մարդը այնքա՛ն խմած էր,—խօսեց երրորդը՝ ցոյց տալով մի երիտասարդի վերայ,—այնքա՛ն խմած էր, որ, կը հաւատա՞ս, շորերը հագին ջուրն ընկաւ և լողացաւ: Էլ գժութիւն չ'մնաց, որ որ չ'անէր: Էլ շիշեր, բաժակներ կտարաւ, էլ բոլորովին մէկ մէկ պաշել, էլ գետնին թաւալել, էլ գուռալ... ի՞նչ ասես արաւ:

—Բայց, աղե՛րք, էժան չը նստեց ինձ երեկւայ քէֆը հա՛յ,—սկսեց այն հերոսը, որ արբած ժամանակ այնքան գժութիւններ էր արել: Մի կարմիր տասանոցը գրպանիցս հօտարաք, այդ դեռ ուի՛նչ. բաց մինչև հիմա էլ գլուխ այնպէս սաստիկ ցաւում է, որ ասես զլխումս զնդանի վերայ երկաթ են ձեծում:

Այդ խօսողները երիտասարդներ էին և այն մարդկանցից, որոնք կեանքից ուրիշ բան չեն պահանջում, բացի անվերջ զւարճութիւններից: Նա առնամանակ նոցա կարելի է տեսնել այս կամ այն այգում հաւաքւած խմբւած: Մի որ և իցէ աւազանի կանաչ ափին կամ դալար մարգի վերայ սուերաշատ ընկուզենու տակ գորգի կամ կապերտի վերայ նստոտած՝ նոքա սիրում են լօտօ կամ թուղթ խաղալ կամ հահալով և երգելով գինու շիշեր դադարկել: Մի այլ անգամ նոցա կը տեսնես Արաքսի ափերին, որտեղ նոքա զնացել են ձուկ որսալու և քէֆ անելու նպատակով: Ա՛նցնի մի քանի ժամանակ, նոքա խմբով կ'երթան մի հեռու ուխտաղի դարձեալ քէֆ անելու համար: Նոցանից շատերը լաւ որսորդներ են և մէկ մէկ գիւղն են բերում վաչրի այծ, աղւէս, նապաստակ, կաքաւ նոյնպէս քէֆ անելու կամ վաճառելու նպատակով: Գիւղի թաւ ածողները այդ երիտասարդներից են:

Նոցա խօսակցութեան միջոցին մի այլ խմբի մէջ մէկը սրտնեղւած չիշոցներ, անէծքներ էր թափում մի անյայտ թշնամու վերայ, որ կորտել փչացրել էր նորա այգու ջահել բարդի ծառերը, որոնց նա աճեցնում մեծացնում էր այն յուսով, թէ նոքա կը բարձրանան և կը հաստանան, և ժամանակով կարելի կը լինի նոցանից դերաններ և տախտակներ քաշել թանկ գնով ծախելու համար: Բայց քինա-

պահ թշնամու ձեռք անխնայ կերպով փշացրել էր նորա գողարիկ կանաչ ծառերը և ծառերի հետ միասին փշրել էր և տիրոջ յոյսեր և ծրագրերները: Այս տեսակ և աւելի վայրի վրիժառու թիւն, պէտք է նկատել, յաճախ է տեղի ունենում Ռ. գիւղում, գուցէ և ուրիշ գիւղերում էլ:

— Այ անխղճմտանքին տունը Ասուած քանդի հա', — ասում էր գիւղացին վշտահար, — աչքիս լոյսի պէս նրանց պահում պահպանում էի: Հինգ տարւայ իմ շարչարանքս սոփ տակ տւին անասուն անիրաւները:

— Ախր ո՞վ է, մի ասա՛ տեսնենք, այդ նզոված սատանան, — խօսեց մէկը, — դրա դատաստանը Ասուած անի: Եղ տեսակ էլ անխղճմտանքութիւն կը լինի՞, որ մարդուս մօտ է: Տէ՛ր, մեղա՛ քեզ, Ասուած:

— Հէնց իմ ցաւն էլ դա՞ չի: Իմանայի, էլ էստեղ ի՛նչ բան էի շինում ես: Կը վնայի ու նրա այգու բոլոր ծառերը մի մի տակուահան կ'անէի քար ու քանդ կ'անէի նրա այգին, արա կը թողնէ՞ի: Բայց որ չը գիտեմ, ի՛նչ անեմ, ո՛ւմ կախից բռնեմ, ո՛ւմ ասեմ թէ դո՛ւ ես արել...

Նուկան քանի գնում աւելի և աւելի աշխոյժ կերպարանք էր ստանում: Այն գանգատաւորը արդէն կարողացաւ գրաւել շատերի ուշադրութիւնը: Բայց այդ ժամին շուկայ եկաւ մի գիւղացի և արագ արագ մօտենալով մեկիքին և գերանի վերայ նստած իշխաններին, սկսեց.

— Այ ժողովուրդ, ա՛յ մեկիք, դուք դադաստան արե՛ք: Էս տեսակ էլ բան չի լինել: Ելի էն արջը ծեծել է իմ ծառային:

— Բադա՞լը, — հարցրին միաբերան աղաներից մի քանիսը:

— Եղ Ասոճու պատիժը: Ել ո՞վ պէտք է էդ տեսակ գազանութիւն անի, բացի էն շան ծնունդից: Մառաս գնում է, որ ծովը ¹⁾ կալի, յանկարծ վրայ է հասնում էդ արջը, վեր գցում նրան, կրծքին նստում, ծեծում հա ծեծում, խփում հա խփում: Եւ էդ դեռ հերիք չի: Վեր է առնում նրան ու նաղմը գցում, ցեխ ու տղմի մէջ արորում: Մառաս տուն է գալիս, տեսնում եմ — թրջւած է,

¹⁾ Գողթան դաւառում «ծով» նշանակում է աւաղան կամ «գետ»:

ցելսուած, քիթը ու սրունքը արնած: Հարցնում եմ, այ՛ տղա, ի՞նչ է պատահել: Ասում է, արջ Բաղալը ծեծեց, աղա՛, նա ինձ էս օրս զցեց: Ձեզ եմ դիմում, ժողովուրդ, մելի՛ք, դուք դատաստան արէք: Թէ էդ զազանին տասը օրով բանտ չը զցէք, ես նրա վրայ զանգատ եմ տալու դատարանումը: Ախր քանի քանի էդ անիրաւը իմ ծառայիս ծեծի:

Այս դիպածի պատմութիւնը շատերի ուշադրութիւնը իւր կողմը դրաւեց: Լսողներինց ոմանք՝ ականջ դնելով նորեկի գանգաւորին, կիսատ ժպտալով գլուխներն էին շարժում: միւսները ծիծաղում էին և միւսնոցն ժամանակ չիշոցներ տալիս Բաղալին, բայց կալին այնպիսիները, որոնք իսկապէս բարկացած էին և Բաղալի հասցէին ուղղում էին ամենայն տեսակ պակաս խօսքեր: Այս վերջինները, երևի, նոյնպէս այլեւս էին այն մարդուց: Մելիքը իսկոյն ուղարկեց գզիրին Բաղալին կանչելու:

Ահա երկայն սև դաւազանը ձեռքին կամաց կամաց դալիս է գիւղի քահանան, մի երկայնահասակ պատկառելի ծերունի, մօրուք ու մազերը բոլորովին սպիտակած: Նկաւ և «բարի ողջում» ասելով՝ նստեց Գրիգորի և Նիազի մէջ տեղը, ուր տեղ բաց արին նորահամար Եթէ ընթերցողը երևակայեց արդէն մի խեղճ գիւղական քահանայ, որ հազիւ կարողանում է հասկանալ իւր կարգացածը, թո՛ղ նա հրաժարէ իւր երևակայած անձից և լսէ հեղինակին:

Քահանայի անունն է տէր-Սիմոն: Նորա ընթերցումը եկեղեցում այնքան որոշ է, շեշտաւոր և խելացի, որ ամենայն իրաւամբ նորան կարող են նախանձել շատ և շատ պաշտօնակիցներ: Նորա արտաքին կերպարանքը, խօսքը, ձայնը կրում են իրանց վերայ մի տեսակ պատկառելի վեհութեան դրօշմ: Բայց դեռ այս չէ միայն նորա արժանիքը: Նա նկարիչ է, որին պատուէրներ են տալիս մեծագիր պատկերներ եկեղեցիների համար: Նա ճարտարապետ է, որին հրաւիրում են ծրագիրներ նախագծելու նոր շինութիւնների համար: Նա բժիշկ է, որ գրում է դեղատոմսեր լատիներէն տերմիններով: Նա դեղագործ է, որ պատրաստում է դեղեր. հիւանդների համար: Ահա մի մարդ բնութիւնից օժտուած բազմակողմանի ընդունակութիւններով, որանց վիճակած չէ երբէք զարգանալ այնպիսի շրջանում, որի հասարակական կեանքը կենդրոնանանում է իմ նկարա-

գրեաճ շուկայում: Եւ ես կարող չեմ ասել թէ նա մի հովիւ է՝ իւր անձը դրած իւր հոտի համար: Նա հեռու է կատարելատիպ լինելուց:

Գրիգորը իւր քթախոտի տուփը բաց արած մօտիկացրեց տէր-Սիմոնին, որից նա վերցրեց իւր աջ ձեռքի բոյթ ու ցուցամատով և սկսեց քաշել: Երբ Գրիգորը պատմում էր նորան արջ-Բաղալի սիրագործութիւնը, քահանան շարժում էր իւր գլուխը, որի խորհուրդը այն էր թէ ի՞նչ կարող ես անել այդ վայրենի մարդու հետ. նա անուղղելի է:

—Յետոյ ինչով վերջացաւ բանը,— հարցրեց նա:

—Ուղարկել են չեռեկըր, գայ տեսնենք, պատասխանեց Գրիգորը:

—Նա այն տեսակ մարդ է,— ասաց տէր-Սիմոնը,— որ քանի լաւ վարեաւ հետը, այնքան երես կ'աւնի, քանի կամաց խօսեաւ, այնքան ձայնը կը բարձրացնի, կարծելով թէ հակառակորդը իրանից վախենում է: Այդպիսի մարդկանց աչքին պէտք է երևաս. այդ հնարով միայն նոցա կարելի է սաստել:

—Նրուստ ես հրամայում, տէ՛րտէր,

Մի անգամ նրան ես մի ապտակ եմ տւել, ձայնը միանգամից է կտրել. այդ ապտակը նա չի մոռանալ մինչև մահը:

Վերջապէս գգիւրը վերադարձաւ: Նա ասաց թէ արջ-Բաղալը նորան չիշոցներ է տւել, դուրս արել տանից և ասել թէ նա այդօր շուկայ չէ գալու. ով բան ունի, ինքը գնաց նորա մօտ:

Մեղիքը բարկացաւ գգիւրի վերայ և հրամայեց, որ գնաց, ինչպէս լինի, քաշ տայ բերի:

—Նա ինձ կը ծեծի, Ասուած վկայ է, նա չի գալ,— ասաց գգիւրը:

—Գնա՛, ասում եմ... բաց չէ՛. կանգնի՛ր միասին գնանք:

Մեղիքը և գգիւրը ուզում էին գնալ, բայց յանկարծ դէմադէմ կողմից երևաց ինքը արջ-Բաղալը: Եւ իսկապէս մի արջ: Եթէ վոքեր ինչ մեծացնեմ խօսքս, ես դորան կարող եմ անւանել մի կալիբան, մարդու անդրապատմական նախատիպարը, որ այնքան հեռու է քաղաքակրթիւնից, որքան փայլուն միջասը երկնային աստղից: Նորա մասին այն կարծիքը կար գիւղում, որ նա ասանց հացի կարող է ապրել, բայց ասանց չիշոցների—երբէք:

Խուպոտ շնչառութեամբ նա եկաւ կանգնեց մեղիքի դիմաց՝ կարմրած աչքերը շուած նորա աչքերին, բերանը կիսաբաց, շրթունքը

դողդոջ, — և այս ամենը անու՛մ էր այնպիսի տպաւորութիւն, որ նա կարծես պատրաստ էր, ամբաստանութեան առաջին խօսքը լսելուց յետոյ, անվաջել չիշոցներ թափելու բոլորի վերայ առանց խորութեան: Բայց արդեօք վախը նորան պահեց թէ այն չնչին շարժանքը, որ նա տածում էր դէպի հողեօր պաշտօնեան, նա առաջ համբերութեամբ լսեց մելիքից մեղադրական առաջին խօսքերը և ապա ընդհատելով նորան՝ սկսեց բաւականին քաղաքավարի:

— Ես դրա հէրը անիծեմ, էդ շուն շան որդի մարդուն: Էս քանի անգամ է նա գալիս է իմ ջուրս կարում: Ղեռ արևը սարի տակին է, դեռ տասը արշին կայ մինչև ժամերը տալը, էդ էշ աւանակը եկել է ծովս կալում: Էդ նզովւածին սպանելը քիչ է, ես դրա մարդ ասողին...

— Լեզուդ քեզ քաշի՛ր, անպիտա՛ն, անամօ՛թ, չի էլ ամաչում հասակիցը, — Բաղալի խօսքը կորեց աղա Քումանը, խորը վիրաւորւած լինելով, որ այդ աղքատ այլանդակ թշառականը իշխանների և մանաւանդ իւր ներկայութեամբ չանդգնում է ձայնը այնքան բարձրացնել և անվաջել խօսքեր արտասանել:

Բաղալի կատաղութիւնը դորանից յետոյ հասաւ իւր վերջնակէտին, որովհետև, առաջինը, նա իրան արդար էր զգում, և երկրորդը, ծառային ծեծելուց յետոյ շատ միջոց չէր անցել, և նորա շարութիւնը դեռ չէր նստել: Կան մարդիկ, որոնց բարկութիւնը նման է կրակած վառօդի — կը փութկայ և իսկոյն կը հանդչի, բայց կայ մի ուրիշ բարկութիւն, որ իրան կարծես ուտում է, որ երկար ժամանակ չէ կարողանում մարել հանգստանալ: Այս վերջին տեսակիցն էր և Բաղալի բարկութիւնը: Այս մարդը իրան կորցրեց, իրան ամենևին մոռացաւ: Նա իւր ձայնը երկինք հասցրեց. չիշոցները ժայթքում էին նորա բերանից, ինչպէս աղտեղութիւնը կեղտոտ խողովակից: Մէջ տեղ մտան հասարակութիւնից շատերը, որոնք իրանց ազաղակներով կարծես ուզում էին իրարից դերազանցել, և վերջումը բարձրացաւ այնպիսի մի աղմուկ, որ դիւզի հեռաւոր տներում անգամ լսելի եղաւ, և այս աղմուկի մէջ կանայք կարողանում էին ջոկել իրանց ամուսինների ձայները և սրանեղած բացականչում էին:

— Էլի չների նման սկսեցին իրար զղզղէլ. առանց կուի հօբան չին անիլ. դրանց տունը Ասուած քանդի:

Բայց յանկարծ պատահեց մի բան, որ մի քանի րոպէում հանդարտեց ամբոխը: Միայն Բաղալն էր, որ դեռ չէր հանգստացել, սիրտը թփթփում էր, շրթունք ու պոռնգները դողում, և էլի լուում էին երբեմն յանդիմանութիւններ և այս այն անձին ուղղած յիշոցներ: Բայց շուտով նա ևս հանդարտեց, և շուկայում տիրեց խորին լուսթիւն: Ընչպէս մի դեռ՝ գարնան անձրեւներից չորագացած ուռչում է մեծանում և գոռալով գլորում իւր փրփրած ալիքը, բայց ամասը գալով դարձեալ հանգստանում է և ստուում, նոյնպէս և այս ամբոխը, որ քիչ առաջ յուզեց ու տակն ու վրայ եղաւ, այժմ լսել է և ականջները սրած՝ սկսում է լսել մի ծերունու, որ բոլորի աչքի առաջ, շուկայի մէջ տեղում կանգնած՝ պատրաստ է մի ինչ որ վատ բան գուժելու: Այդ ծերունին յայտնի է, իբրև բռնակալ իւր ընտանիքում, որից ոչ թէ վախենում, այլ սարսափում են տանեցիները: Նորա շուկայ դալը մի արտակարգ բան էր. ահա ինչու շատերի ուշադրութիւնը գրաւեց նա նոյն իսկ իւր երեւալովը:

—Այ ժողովուրդ, — սկսեց ալևորը վախեցած մարդու ձայնով և թուքը կարծես դժւարութեամբ կուլ տալով, — մեր Թոմասը մի շատ վատ լուր է բերել քաղաքից: Նա ասում է թէ կնտեղ խօսում էին, իբր թէ Չալաբիները Արագլի ավերին մօտիկացել են և շուտով մտադիր են մեր կողմերի վրայ յարձակելու:

Այս խօսքերից ամբողջ հասարակութիւնը սարսափեց այնպէս, կարծես կայծակ վայր ընկաւ երկնքից: Նատերի սրտերը այնքա՛ն անհամբեր, այնպիսի՛ եռանդով սկսեցին բաբախել, որ կարծես ուզում էին դուրս պրծնել կրծքերի տակից և հեռանալ թագնել աշխարհի ծայրերում: Մանաւանդ սոսկալի էր այդ լուրը այն պատճառով, որ նա դուրս եկաւ մի խոտադէմ, դաժան ալևորի բերնից, մի ալևորի, որի «չար աչքից», գիւղացիների ասելով, կանաչ ծառեր էին չորանում, որի «չար շնչից» (նախաս) բացւած ծաղիկները թառամում:

Այս լուրը լսելուց յետոյ՝ հասարակութեան մէջ կային այնպիսիները, որոնց սրտում չղացաւ մի տարօրինակ ցանկութիւն — վեր կենալ իսկոյն և եթ, գնալ տուն, դուռ ու դարպասները պինդ փակել, կարծես բանը այնտեղ էր հասել, որ թշնամիները գիւղի տակին կանգնած էին արդէն: Միւսները, զլխաւորապէս աղաներից,

զգացին իրանց մէջ ոչ պակաս օտարոտի զգացում անդիմադրելի սէր դէպի այն կտրին՝ երիտասարդները, որոնք, ինչպէս ասացի, ծնւած են քէֆի համար և զիտեն զէնքի հետ վարել, բայց որոնք այլ ժամանակ այնքան էլ համակրութիւն չեն վայելում այն լուրջ և զգաստ և խոտապահանջ աղաների մօտ: Մանաւանդ աղա Թումանը կ'ուզենար վեր կենալ իւր տեղից ձեռքը մեկնել, ներողութիւն խնդրել բոլոր մարդկանցից, որոնց նա այսպէս կամ այնպէս վիրաւորել էր առաջ, քաղցր աչքով նայել նոցա երեսին, քաղցր խօսքեր ասել նոցա և առատ ընծաներ խոստանալ: Նա այդ ամենը կ'անէր, կ'անէին և շատերը, եթէ այդպիսի փոփոխութեան խորհուրդը պարզ չը լինէր բոլորի համար: Ընդհանուր երկիւղը, ինչպէս մի թալիսման, բոլորի սրտերը և մտքերը շաղկապեց իրար հետ, ամենեքեան մոռացան իրանց սրտերում պահած նենդութիւնը, ոխը, թշնամութիւնը, և բոլորեքեան հաւասարապէս զգացին փոխադարձ օգնութեան կարօտը և կարևորութիւնը:

Բայց ո՞վքեր էին այդ Չալաքիները: Դա մի քրդական ցեղ է, որ կենում է Պարսկաստանում, Մաքուի խանութեան մէջ: Վերջին ռուս-տաճկական պատերազմի ժամանակ, 1878 թւականին, այդ վայրենիները, իրանց շէյխի առաջնորդութեամբ մի քանի պարսկական զիւղեր ասպատակելուց յետոյ, ուշի ուշով սպասում էին կիսալուսնի զրոշակի յաղթանակին, որպէս զի անցնէին Առևսաստանի սահմանը, զէպի Գողթան գաւառը, այդ հարուստ երկիրը աւերելու և թալանելու նպատակով: Այդ լուրը արդէն վաղուց է տարածւել այնտեղ՝ և տաղնապի մէջ է ձգել շրջակայ գիւղորայքը:

Այդ պատճառով զիւղերում գիշեր ցերեկ հսկում են զինուորած պահապաններ, և աւելի զգոյշ մարդիկ արդէն վաղօրօք թազգրել են իրանց թանկագին իրեղէնները պատերի մէջ, զեսնի տակ և զանազան զաղատեղերում: Այստեղ դեռ չէին մոռացել Աղատխանի հրոսակների ասպատակութիւնը ¹⁾ և զազանութիւնները, և նորա արիւնահեղ կոտորածների պատմութիւնները աւելի ևս սաստկացնում էին ընդհանուրի երկիւղը և սարսափը:

¹⁾ Աղատխանը եղել է՝ այս գաւառում 1752 թ. (տես «Ազուլեցոց բարբառ» Ս. Սարգսեանի, երես —):

Նրբ որ ծերունին գուժեց տխրալի լուրը, առաջին միաքը, որ եկաւ Մելիքի գլուխը, այն էր—խսկոցն ուղարկել զգիրին հերթապահ պահապաններին պաշտօնի կանչելու:

—Քալո՛ւստ, շուտ արա գնա պահապաններին կանչի՛ր, —ասաց Մելիքը՝ դիմելով զգիրին, —ասա՛ թո՛ղ վեր առնեն իրանց զէնքերը ու գնան դարպասների վրայ կանգնեն: Ասա՛, որ չը մրափեն հա՛, արթուն մնան, իմացա՛ր:

Այս խօսքերը լսելուց չետոյ, զգիրը, որ կարծես արդէն պատրաստ էր վազելու, իւր կտորած բարակ ձեռափայտը քարերին չսկզկացնելով՝ շտապով հեռացաւ շուկայից:

—Ի՛նչ հիմա խորհուրդ արէք տեսնեմ, ի՞նչ էք մտադիր անելու, —սկսեց աղա Թումանը, որ կարծես բոլորից շատ էր անհանգստանում գալիք աղէտի առիթով:

—Ես կարծում եմ, որ ամենից առաջ մենք պէտք է իմաց տանք գաւառապետին, —ասաց պարոն Սարգիսը, —նա կ'ուղարկէ զինւորներ մեր գիւղերի վրայ բաժանելու:

—Եղ հօ կը լինի առանց մեզ էլ, —մէջ մտաւ Նիսազը, —դու ասա՛ տեսնեմ մե՞նք ինչ անենք: Կարելի է հէնց օրը էդուց, հէնց էս զիշեր վրայ են տալիս էդ անիրաւները:

—Տեսնես այդ աւազակ մարդկանց թիւը ո՞րքան է, —խօսեց տէր-Սիմոնը: Եթէ այնքան էլ շատ չ'եղան, ասեմ, շատ դժար չի լինիլ նրանց հետ զլուխ դնելը: Բայց եթէ անպիտանները մորեխի նման թափւեցին...

—Տղե՛րք, ջա՛հիլներ, —բարձր ձայնով սկսեց Վրիզորը՝ դիմելով կորի՛ճ երիտասարդներին, —բան է եթէ, Ասուած ո՛չ անի, էդ շները եկան, ասէ՛ք տեսնեմ, սի՛րտ կ'առնէք նրանց առաջ դուրս գալու:

—Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէ, —կարծես երիտասարդների ներկայացուցիչ համարելով իրան՝ պատասխանեց նախընթաց օրւայ քէֆի հերոսը, —էլ Ասուած ո՞ր օրւան համար է մեզ աւել ձեռք ու սիրտ, որ դժար ըն կած տեղը՝ ձեռքներս ծալենք ու ետ կենանք: Գուրս կը գանք թէ խօսք է: Նրանց հօէրն էլ չեն անիծիլ:

—Ա՛յնչաղ տղայ, զո՛չաղ տղայ, կերածդ հալալ լինի, —սկսեց իրախուսել աղա Թումանը, —բանը կաքաւ ու նապաստակ որսալը

չէ, բանը թշնամու առաջ գուրս գալն է ու նորա հետ կուեկը: Արանք կ'անեն, ինչ ուզում էք, սրանք զոչալ են, — այս ասելով նա դիմում էր իշխաններին: Ես սրանց ճանաչում եմ: Այս վերջին նախապատեթիւնը արտասանելիս՝ աղա թումանը՝ կիսածպիտ, աչքերը կիսախուփ արած՝ խորհրդաւոր կերպով շարժում էր իւր զլուխը՝ նայելով երիտասարդների վերայ, ինչան այն բանի, որ նոցա ոչժը և քաջութիւնը իրան վաղուց և քաջ յայտնի է:

— Թողսփուրդ, — խօսեց Գրիգորը, — ով ասելուք թւանգ ունի, թո՛ղ տաց չ'ունեցողին: Մեր տանը չորսը պատրաստ կայ, մէկը ինձ, միւսը եղբօրս, միւսներն էլ նրան, ով չ'ունի:

Հրացանների մուշտարիներ գտնեցին:

Պարոն Սարգիսը, աղա թումանը և մի քանի ուրիշները առաջարկեցին իրանց կողմից — որը՝ հրացան, որը՝ գնդակներ, որը՝ վառօդ, որը՝ պիստոն, որը՝ կոտորակներ:

— Դու հօ երկուսը ունես, — ասաց Գրիգորը՝ դիմելով ժլատ Մինասին, — ինչո՞ւ մէկը չես տալիս չ'ունեցողին:

— Հէ՛ր օրհնած, — պատասխանեց Մինասը՝ ժպիտը բերնին, — անդ անկը դժւօր է ի՛նչ է: Մէկը ես վեր կ'առնեմ, մէկն էլ կնիխս: Այս խօսքերը ընդհանուր ծիծաղ լարուցին, և ընդդիմախօսելու փոխանակ՝ շատերը միայն գլուխները շարժեցին:

Շուտով եկան հերթապահ սահապանները հրացանները ու սերին կախ արած և գոտիներին կապած խանչալներ:

— Այ տղերք, չը քնէք հա՛, — սխեց զգուշացնել աղա թումանը, չը լինի թէ աչքներդ խուփ անէք: Երկիւղալի ժամանակ է, մարդ պէտք է արթուն կենայ: Գիւղի դարպասները պինդ կը փակէք ու յետոյ կը բարձրանաք վերև: Դէ՛ դնացէ՛ք:

Չը քնէք հա՛, էլի ասում եմ:

— Միամիտ կացէ՛ք, ձայն ձայնի տւին պահապանները և զանազան կողմերով հեռացան շուկայից:

Սրևեղեան հորիզոնում ժայռոտ լեռների զլլտից ծանր ծանր բարձրանում է կոլով լուսինը՝ արեան զոյնով ներկւած: Լուսնի ահագին մեծութիւն և կարմիր զոյնը երկիւղ և կասկած լարուցին առանց այն էլ վախեցած սնապաշտ գիւղացիների սրտում, և, անհանդիստ կերպով ցոյց տալով դէպի լուսինը, ասում էր մէկը միւսին:

—Տե՛ս ի՛նչ մեծացել ու կարմրել է տնաքանդը: Էս տեսակ լուսին օրումն չեմ տեսել, Ասուած վկայ: Չը լինի խաւարելու օր է էսօր: Տէ՛րտէր, օրացոյցը մտի՛կ ես արել, խաւարելու մասին բան չը կա՞յ մէջը:

Քահանան ասաց թէ լուսինը կարգին լուսին է, և օրացոյցում ոչինչ չը կայ: Չը նայելով զորան, հասարակութեան միջից շատերը հաւատացին, որ բոսորային լուսինը անշուշտ կոտորած կամ ուրիշ աղէտ է գուշակում: Միւսները, աւելի հասկացող մարդիկը, աշխատելով անտարբեր ձևանալ, կրկնում էին թէ լրացած լուսինը այնպէս է լինում և ոչ ուրիշ տեսակ:

Վերջապէս ժողովուրդը սկսեց խումբ խումբ ցրել, և հինգ րոպէ չ՛անցած՝ էլ մի հատ մարդ չը մնաց շուկայում. շուկան դադարկեց ու ստուեց:

(Կը շարունակւի)

* * *

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Անհոգ մանկութեան շատ յիշատակներ,
Որ զեռ եռում են իմ մատաղ կրծքում
Եւ յաճախ այնքան ուրախ լողայներ
Ինձ պարգևում են տխուր ժամերում...
Որ երբեմն այնպէս անկեղծ հրճւանքով
Յրում են սրտիս ծանրացած վշտեր,
Երբ ես օրհնում եմ ոգելից երգով
Անցած մանկութեան օսկի երազներ.—
Ո՛վ գիտէ, զուցէ ժամանակն իւր հետ
Այդ բոլորն անդարձ աւերի անհետ...

Բայց այն օրերը, այն նւիրական
Խնկաբոյր ժամերն մանկական կեանքիս,
Երբ ինձ գգւում էր սէրը մայրական,
Մօրըս ջերմ հուրճքին հանգիստ առնելիս —
Այն օրերն, օ՛, մայր, որպէս սուրբ աւանդ,
Յաւիտեան անջինջ կը մնաս իմ սրտից.
Նոքա իմ կրծքում կը պահէն ազատ
Չար ժամանակի աւերիչ ձեռքից.
Եւ ինձ կեանք տուող քս սէրը, մայր իմ,
Սրտիս հետ միայն կը մտնէ շիրիմ:

Ե Ր Ա Ջ

(Նեկրատից)

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՆԱՏՈՒՐԵԱՆԻ

Երազ էր... Ժայռի գագաթին կանգնած՝
ես ուզում էի ինձ ծովը նետել.
Յանկարծ ինձ լուսոյ հրեշտակ երևաց
եւ անոյշ ձայնով ըսկսեց երգել.—
«Սպասիր դարնան: Կը գամ ես շուտով
«Եւ կստեմ ես քեզ—մօրդ եղիր նորից.
«Մռայլւած միտքըդ կը վառեմ լուսով,
«Թմրեցնող քունըդ կը ցրեմ աչքից.
«Կը տամ քեզ նորից երջանիկ ժամեր,
«Նոր ոգի կ'առնէ մուսադ ինձանից
«Եւ դու բախտաւոր՝ կը քաղես հասկեր
«Քո նեկրական չը հնձւած արտից»:

Մոսկւա. 26 յունւարի, 1891 թ.

ԿԱՑԻԱ—ԱԴԱՄԻԱՆԻ !? *

Պ Ե Պ

Ի Լ Ի Ա Ք Ա Վ, Ք Ա Վ, Ա Ձ Ե Ի

«Ֆարեկամիդ երե՛սին պախարակիր,
Քշնամուղ՝ յետի ից»:

Ի Տ ա ս ր ք ա ն ա ու ճ .

(Նարունահուժիւն 1)

VIII

Երեկոյ էր, երբ որ Դաւիթը տուն հասաւ: Նրա կին Էլիսաբէտն
և Լուարսաբը նստած էին բակում, ցանկի սուերի տակ: Աչքը նրա
վրայ զցելուն պէս՝ Լուարսաբը վեր թսաւ, զիմաւորեց եղբորը, բայց
ոչինչ չը կարողացաւ նրան ասել, որովհետեւ ամաչում էր: Դաւիթը
ձիւղ վարցատկեց, ուղղեց գուլբաների թուլացած կապիչները և,
առանց կնոջը բարևելու, եկաւ պառկեց խոտի վրայ:

— Ի՛նչպէս հաւնեցար հարսնացուիդ, — հարցրեց կինը: Լուար-
սաբն ականջները սրեց:

— Արև-չը տեսած որ ասում են՝ նա՛ է, — պատասխանեց Դա-
ւիթը — ես այնպիսի գեղեցիկ ազնիկ զեռ ևս տեսած չէի:

*) Երգութիւն: (Մթէ մարդ է- աղամորդի):

1) ՏԵ՛ս «Մուրճ» № 4 և 5:

Լուարսաբն ուրախացաւ, Ելիսաբէդը վիրաւորեց. «ինձանից լաւը կը լինի»—մտածեց նա:

—ձի՞շտ ես ասում, հոգո՛ւղ մեռնեմ,—հարցրեց Լուարսաբը:

—Գու չը մեռնես, որ նրա պէս աղջիկ կեանքումս չեմ տեսած:

Այդ նա աչք զցեց իւր կնոջ վերայ ու նախանձով աւելացրեց՝ եթէ ես մի քիչ էլ համբերած լինէի, գործս ուրիշ տեսակ կ'երթար:

—Ի՞նչ. չը լինի՞ թէ դու կը ստակւէիր նրա վրայ,—յանդիմանեց չարութեամբ լցւած կինը. վո՛յ քո աչքիդ. կարծես թէ ես շատ գոհ էի բազդից, որ քեզ հանդիպեցայ. քեզպէսնե՛րն էին ձեռքս խնդրել ու հօրիցս մերժում ստացել:

—Մերժո՞ւմ է՛. կարծես թէ ուսաց թագաւորի որդու համար էր քեզ պահում: Գեռ էլի շնորհակալ եղիր որ ե՛ս չիմարացայ:

Այսպէս իրարու հետ խօսքի բռնեցան ու մի սիրուն կուրսարքեցին որ՝ ձեր հաւանած: Այդ օրից Ելիսաբէդի սիրտը նախանձով լցւեց և ատեց դեռ ևս աչքով չը տեսած հարսին:

—Թո՛ղ թշնամիս թառամի, ինչպէս որ ես նրան պիտի թառամեցնեմ,—ասում էր իր սրտում Ելիսաբէդը. այս տան մէջ ինձանից լաւն ու ինձանից մեծը ոչ ոք չը պէտք է լինի: Եւ մի՞ թէ մարդս պէտք է երեսիս տայ նրա զեղեցկութիւնը. վո՛յ, խաւարի՛ նրա օրը. մի փուշ անցկացնեմ նրա աչքին, որ իւր ծնւած որն անիծէ:

Ելիսաբէդը հարսանիքի չը դնաց:

Հարսանիքի գիշեր տեղի ունեցան մեծ մեծ դէպքեր: ձիշտ երեքշաբթի օր փեսան եկաւ բազմաթիւ բարեկամների ու իր եղբոր հետ: Ի հարկէ այն օրը նրանց ցոյց չը տւին իւր հարսնացուն: Մոտէն էլ բաւական բազմութիւն էր հաւաքել. նրա կողմից այդքան մարդ հաւաքելը աննպատակ չէր: Այս անգամ եկեղեցի ուղարկեցին նրա իսկական աղջկան: Ամեն բան կարգի բերելուց յետոյ հրաւիրեցին փեսացուն էլ: Հէնց որ նա եկեղեցի մտաւ և աչք զցեց նորահարսի վրայ՝ սարսափահարեց: Շուռ եկաւ դէպի իւր եղբայր Դաւիթը և, արհամարհելով բարեկրթութիւնն էլ, քաղաքավարութիւնն էլ, բացականչեց՝ Դաւիթ, չէ՞ որ արև չը տեսածն էր:

Բազմութիւնը փրթկաց, իսկ խեղճ նորահարսը կրակի պէս վառւեց ու հեկեկաց: Դաւիթը առաջ եկաւ և, տեսնելով այդ անձոռնի նորահարսին, զիմեց քահանային.

—Տէր հայր, դեռ ուրիշն է պսակում թէ ի՞նչ է:

—Պսակում են իշխան Լուարսաբ Թաթբարիձէն ու Մոսէ Գձե-
լաձէի դուստր Դարեջանը, — պատասխանեց քահանան:

—Հապա նորահարսն ո՞ւր է:

—Ահա՛ սա է:

—Լուարսա՛բ, — ձայն տւեց իր եղբօրը Դաւիթը — խաբեցին մեզ,
դա չէ, մի՛ պսակիր:

Բոլոր ժողովուրդը զարմացաւ: Լուարսաբը, վհատած ու մտած-
մունքի մէջ, դուրս եկաւ եկեղեցուց. նրան հետեւեցին բոլոր բարե-
կամները: Ձիերն ուղեցին, որպէս զի վերադառնալին, բայց ձիերը
թագ էին կացրել: Մոսէին իմաց տւին որ նորափեսան չի պսակում:
Մոսէն եկաւ, հետն ունենալով բաւական բազմութիւն:

—Իշխան Դաւիթ, այս ի՞նչ բան է, — ասաց նրան բարկացածի
նման Մոսէն. աղջիկն եկեղեցումն է և հիմա՛յ է փեսան յետ կանգ-
նում: Ո՞վ էր ձեզ խնդրում. ձեզ նման օջախի որդիք էին խնդրում
որ էս չը տւի՞:

—Պարո՛ն, ահա աղջիկդ այտեղ է, ումն ուզում ես տո՛ւր:
Իսկ իմ եղբայրս անկարող է դրա վրայ պսակել, — պատասխանեց
Դաւիթը համարձակութեամբ:

—Հիմայ հա՛, երբ ամբողջ աշխարհն իմացաւ, որ եղբայրդ
ուզում է աղջկաս, երբ եղբայրդ մինչև եկեղեցի էլ քաշ տւեց
աղջկաս: Ձէ՛, ես ոչ ոքի չեմ թոյլ տայ, որ աղբ ածեն զլիսիս. կամ
պէտք է պսակի կամ պէտք է այտեղից կենդանի զլիսով չը հեռա-
նաք: Դա լուսած բա՛ն է, որ փեսան աղջկայ տուն մտնի, նրան եկե-
ղեցի տանի ու այլ ևս չը պսակի...:

—Իսկ այն լուսած է որ նորահարսին փոխեն. սա քո աղջիկդ չէ:

—Ժողովուրդ և հասարակութիւն, տեսէ՛ք, այլ ևս ոչինչ առար-
կութիւն չը գտնելով, ասում են թէ աղջիկը քոնը չէ, — գոռաց Մո-
սէն դէպի բազմութիւնը դառնալով:

—Հապա ո՛ւմն է որ դրանը չէ, — ձայնակցեց ամբոխը Մոսէին.
մենք երդում կը տա՛նք:

—Ձէ՛, պարոններ, եղբայրս չի պսակում: Թէ որ ոյժի վրայ
կը կանգնէք՝ մենք էլ անշնորհքներիցը չենք, — ասաց Դաւիթն ու
խանչալը պատրաստեց:

Եկեղեցում՝ դռնուդ բոլոր կանայքը դէս ու դէն ցրիւ եկան, նկատելով որ իրանց տեղը չէ այնտեղ: Իսկ նորահարսին, մի երկու պառաւ կանանց հետ, Մոսէն չը թողեց եկեղեցուց հեռանալ, յուսալով էլի մի կերպով պսակը զուխ բերել:

— Ուրեմն էլ Մոսէն թաւաղի որդի չի լինի, — ասաց Մոսէն — թէ որ օջախս խաչոտաւիել տամ: Կենդանի գլխովս չեմ անպատուել տայ իմ ազգս, չեմ թոյլ տայ որ Թաթ քարիձէները եկեղեցում անպատուեն աղջկանս. պէ՛տք է պսակելի:

— Զի պսակելի:

— Վերջին խօսք է դա:

— Վերջին:

— Դաւիթ, — խօսքը փոխեց յանկարծ Մոսէն ու ձայնն էլ փափկացրեց — այս կողմն համեցէ՛ք:

Դաւիթը հետևեց նրան: Այն կողմը նրանք առանձին կանգնեցին: Մոսէն, գրպանից հինգ թուման հանելով, ասաց ցած ձայնով Դաւիթին՝

— Ահա՛ քեզ այս հինգ թումանը. լւի՛ր, քեզ ի՛նչ, դու խօչե՛ս պսակողը:

Դաւիթը փափկեց:

— Հինգ թումանով ի՞նչպէս ծախեմ եղբորս, — պատասխանեց նա:

— Եօթը թո՛ղ լինի:

— Կամ եօթով:

— Ոչ էլ ութով:

— Հապա ի՛նչքան ես ուզում:

— Գոնէ թո՛ղ տասը լինի:

— Իննի վրայ ի՞նչպէս ես:

— Զէ՛, տասը:

— Է՛հ, ջհանդամը, թո՛ղ տասը լինի:

Հանեց տաս թումանը ու տւեց: Դաւիթը գրպանը կոխեց:

— Ես իմ կողմից կը լռեմ, իսկ եղբորս հետ ինչպէս ուզենաս, այնպէս արա՛, — ասաց Դաւիթը ժպտալով:

— Միայն թէ դու լռես և մի երկու հոգի էլ քո կողմից քաշես, Լուարսաբի հետ ես ինքս կը յաջողեցնեմ:

— Պարոն ես: Ես այդ մասին երաշխաւոր եմ:

—Ուրիմն ձեռքներս խփե՛նք:

Ձեռքը ձեռքին խփեցին ու խեղճ Լուարսաբին զօրով պսակեցին այն գիշերը: Մոտէն ոչ էլ այն խոտաացած երկու հարիւր թումանը տեց, այլ նրա փոխարէն վերադարձրեց նրան այն մուրհակը, որ խզել էր սուա-խշխանուհուց: Առաջ Լուարսաբը իւր կնոջը չէր տանում, պահանջելով որ հաշիւները մաքրեն. բայց վերջը, երբ անզօր եղաւ մի բան անելու, համակերպեց հանդամանքներին ու տուն տարաւ իւր Դարեջանին:

Էլիսաբէդի ուրախութեանը չափ չը կար, երբ տեսաւ որ Լուարսաբը արև-չը տեսածի փոխարէն մի տղեղ կին բերաւ: «Հի՛, մեռնե՛մ Աստուհն», ասում էր նա իր մարդուն. հի՛, մեռնե՛մ ես, առաջ պէտք է ինձանից լաւը բերէիր և յետոյ այնպէս պարծենալիր: Հի՛, մեռնե՛մ Աստուհն: Իսկ վերջն արդէն, ինչպէս ձեզ յայտնի է, կանանց շնորհով եղբայրները կուեցան ու բաժանեցան:

IX

Այդպէս ամուսնացաւ մեր Լուարսաբը: Թէպէտև զօրով եղաւ այդ, թէպէտև օժտի մէջն էլ խաբեցին ու արև-չը տեսածի տեղ տղեղ Դարեջանը կպցրին, բայց այու ամենայնիւ—երևի նորա ճակատին այդ էր դրած—նա մտածեց ու խոնարեց բազդի բերմունքի առաջ: Իսկ վերջը, ինչպէս քեզ էլ յայտնի է, ընթերցո՛ղ, դրանք արդէն միմեանց սիրեցին: Գոնէ դրանք իրանք այնպէս էին կարծում, թէ սիրում են միմեանց: Լաւ արարած է վրացի մարդը. նա հաւասարապէս հաշուում է թէ՛ բազդի, թէ՛ անբազդութեան հետ: Ոչ մէկի համար իւր գլուխը կը տաքացնի և ոչ միւսի համար կելւ կանի և կը մնայ ամեն տեղ մի տեսակ անտարբեր ու պնդերես. շատերը այդ անտարբերութիւնը ու պնդերեսութիւնը անւանում են «գոհունակութիւն»: Մի մարդ էլ ասել է թէ գոհունակութիւնը երջանակութիւն է: Շատ անգամ են ասել ինձ պատկառելի ծերունիք թէ իրանք նոր մարդկանցից զոնէ այն առաւելութիւնը ունին, որ գիտեն զո՛հ մնալ եղածից: Իսկ ես լռել եմ ու մտածել՝ «գոհունակութիւնը մարդուն սպանող մի հիւանդութիւն է. երջանիկ է նոր երիտասարդութիւնը, եթէ նա եղածով բաւականացողը չէ. թէ որ մի յոյս կայ՝ էլի դրա մէջ պէտք է

լինի: Գոհացողները բաւականանում են նրանով՝ ինչ որ կայ, այդ պատճառով նրանցից աւելի շատերն են երջանիկ երևում, մինչդեռ դժգոհները՝ դժւար, այն պատճառով որ դրանք միշտ աւելի լաւն են փնտռում, քանի որ լաւին հետևում է աւելի լաւը, գերադասին՝ աւելի գերադասը:

Բայց մեր ամուսինները այդպիսիներէ՞ց չէին. դրանք իրանց կենցաղավարութիւնից աւելի լաւ կենցաղավարութիւն երկրիս վրայ չէին երևակայում: Սրանք գոհ եղողներինցն էին. ոչոքին ոչինչ պարտ չէին, ոչոքի հետ կաք ու կռիւ չունէին: Միայն մի դարդ ունէին սրտում՝ զաւակ չունէին Ահա՛ Լուարսաբն արդէն քառասուն, Գարեջանը քառասուն և մէկ տարեկան է, բայց դեռ ևս Աստուած նրանց մի ժառանգ չը շնորհեց: Եստ թերթեց իշխանուհին Կարաբաղին գիրքը, շատ խոտ-մոտ ընդունեց ու Լուարսաբին էլ իմացրեց, ոչինչ չ'օգնեց: Ենչու են իզուր գլխները տուաքացնում, ասում էր նրանց մասին չարասիրտ էլիսաբէղը. Սողոմոն խնայողնի գիրքը որ բլբլացնում էր ու սատանայութիւններ անում՝ նա է գլխին խբել. Աստուած վրդովւած է նրանց վրայ, այլ ևս ոչինչ ճար չի լինի:

Իսկ մեր ամուսինները յոյսը չէին կորում: Լսեցին թէ քաղաքում (Թիֆլիսում) մի գրբաց կայ, որ կարող է իմանալ նրանց անգաւակութեան պատճառը: Թէև որդեճնութեան ժամանակն արդէն անց էր կացել, բայց և այնպէս նրանք մի մարդ թուցրին դէպի քաղաք, հետը դնելով մի բաղդադի թաշկինակ, որի վրայ գիր է բաց անում գրբացը բացակայ եղողների համար և որը, ինչ ասել կ'ուզի, նորա մօտ է մնում վերջը: Երեք օրից յետ ծառան պատասխան բերեց թէ՛ Խաչը ձեզանից խոտվել է: Եւ այն էլ ո՞ր խաչը. Թելէթինը ¹⁾, ասում է գրբացը: Ամուսինները, այդ լսելուն պէս, միաժամանակ ու միաբերան՝ երեսը խաչակնքելով՝ ասացին.

—Ո՞րտեղից որտեղ հարցրեց մեզ, փա՛ռք քեզ, փա՛ռք քեզ: Ասացին ու նորից երեսները խաչակնքեցին:

¹⁾ Թիֆլիսից մի քանի ժամ հեռու գտնուող Թելիթի հայոց ս. Գէորդ վանքը մեծ հռչակ ունի Կախեթի վրացիների մէջ:

—Ա՛յ Աստուած անիծի, ո՞րտեղից որտեղ հարցրեց,—կրկնեց
Լուարսաբը:

—Խաչի մասին ի՞նչպէս ես «անիծել» ասում:

—Մեղա՛յ Աստուծոյ, մեղա՛յ Աստուծոյ,—խաչակնքեց Լուար-
սաբն իւր երեսը մի քանի անգամ: ա՛յ Աստուած անիծի, որովհետեւ
սովոր եմ, ինքն իրան է ասում, մեղայ Աստուծոյ, մեղա՛յ:

—Հիմա՛յ ի՞նչ ես ասում, Լուարսա՛բ, գնա՛նք թէ չէ:

—Որ հեռու է՞:

—Ի՞նչ անենք, երեւի Աստու իմքն այդ է եղել:

—Արի հէնց այստեղ նեկրիսի Աստուածածինն համբուրե՛նք:

—Բայց Թելեթի խաչը կը վիրաւորւի, կասի թէ «ես ապսպրեցի
որ ինձ մօտ գան, իսկ նրանք այնտեղ զնացին»:

—Ճիշտ է, կը վիրաւորւի: Սրտապակաս կը մնայ. դեռ ես իմ
մարդ տեղովս սիրտս կը պակասէր, իսկ նա որ խաչ է—աւելի կը ցաւի,
մեռնե՛մ ես նրա զօրութեանը:

—Հէնց այդ է, է՞:

—Հապա ի՞նչ անենք:

—Պէտք է գնալ:

—Բայց հեռու է, քո արևը:

—Հիմա՛յ թէ գնում ենք, գնա՛նք, թէ չէ այդպէսութիւնով
կը բարկացնես նրան:

—Ճի՛շտ է, ճի՛շտ. ո՛հ, մի՛ բարկանար, ո՛վ Թելեթի խաչ,
փա՛նք անունիդ, կը դամ, կը դամ և կը փառաբանեմ անունդ:

Հաւատացին զրբացի խօսքին. Թէդօյին լծել ուէին սալը, մի
կարպետ ծածկել ուէին զլիսին, մի լաւ ոչխար կապեցին սալի պո-
չին և, Աստու անունը տալով, ճանապարհ ընկան քաղաքի մեծ ու-
ղիով՝ ամառնային մի գեղեցիկ երեկոյ: Սալի մէջ նստած էին իշ-
խանուհի Գարեջանն ու նրա աղախին Լամազիսէուլը: Մի ծառայ
և Լուարսաբն իւր որձ ձիու վրայ հեռուում էին սալին ծանրաքալ:
Մի պատերազմականի տեսք ունէր այդ ժամին մեր առանց այն էլ
սիրելի Լուարսաբը, թէև նա զբւած էր ձիու վրայ բամբակի պարկի
պէս: Մէջքին կապած ունէր մի վրացական թուր և մի երկայն,
լէզգու խանչալ, յետևն էլ մի սևազաւոր ատրճանակ: Հագել էր սև
շալի չուխայ, որի քղանցները տղամարդավարի խոթել էր նրա զբր-

պաններում: Նալարի ծալրերը մտցրել էր Աարաբազի բարձր ձան-
րաւոր, սպիտակ կօշիկներում, սրնգների վրայ կապել էր երկայն
փնջերաւոր կապիչներ, սրգէս մի զինեւաձառ: Գլխին ծածկած ու-
նէր ղալմուխի կապոցա գլխարկը, որ, կախեթեցոց ձաշակով, մի կողմը
կոտրել ու ձակատի մօտ ներս էր ծալել, որովհետև շոգում էր. մի
խօսքով, եթէ թրի մէջ ցցւած մի խնձոր էլ ունենար ձեռքում բռնած՝ ձիշա
մեծ պասի երկու շաբթւայ ղէջն (կարնաւայ) կը լինէր ոտից մինչև զլուխ:

Այդ դուրթեան մէջ բարձրացան նրանք հինգերորդ օրը Քելէթ,
համբուրեցին և հէնց հետևեալ օրն էլ յետ գնացին: Երբ նրանք
մօտեցան քաղաքին ու կախեթի ձանապարհը բռնեցին՝ իշխանուհի
Գարեջանը գէմ տւեց մէջը սայլի կողքին, չոքեց ու նայեց քաղա-
քին: Աւարտաբը բնած էր սայլում, նրան էլ զարթեցրեց:

— Աւարտաբ, մի տե՛ս ինչ տեսարան է: Այսպիսի մեծ աշխարհ
կը լինի՞ որ այստեղ է, փա՛սք քեզ, Աստուած: Բոլոր շինուածիւնները
քար ու կրից են երևում:

Իշխանուհին գեւ ևս քաղաք չէր տեսել:

— Հապա չէ՛ ծղոտից հիւսւած կը լինի:

— Մի նայիր, է՛, քանի՛ եկեղեցի կայ:

— Գիտեմ, մի՞թէ մէջը չեմ եղած:

— Աւաջին անգամ որ մտար մէջը, քարեր կուլ տալ չը տախն 1):

— Ինչպէ՛ս չէ. երեք այնպիսի քար կուլ տւի, որ հազիւ
մարտեցի:

— Էլ փորձանքի չը հանդիպեցա՞ր:

— Էլ ինչ փորձանքի պէտք է հանդիպէի, քանի որ քար-կուլ
տւած էի. ուրիշ բան կը լինէր, եթէ կուլ տւած չը լինէի:

— Այդ խօս պղպէս, բայց լաւ տեսնելու բան է երևում:

— Աւա ինչու չը պէտք է լինի, երբ որ ամեն ազգի ժողովուրդ
այդտեղ է վխտում. թուրք, պարսիկ, հրէայ, օս, հայ, սուս՝ ձան-
ճերի պէս են վժվժում:

— Ճի՞շտ է, հասա՞: Դեռ այդ ոչինչ. այդտեղ մի դորձիք են
գտել, որ ինքն իրան տախտակներ է սղոցում:

— Հիմայ էլ այդ հնարիր:

— Գլուխս չը մեռնի՛:

— Ի՞նչպէս, մի՞թէ ինքն իրան:

— Ինքն իրա՛ն:

— Ոչ մա՞րդ է ու ոչ աղամո՞րդի:

— Ոչ:

— Հապա սղոցն ո՞վ է բռնում:

— Ստոանան ու քաջքը:

— Մի՞թէ ուռմներն են հնարել այդ:

— Հապա չէ ու քո աէգր Դաւիթը:

— Տէր, ողորմեա՛, Տէր, ողորմեա. ձեռնածութիւն որ անում են, ա՞յն էլ ես տեսել:

— Ո՞րը:

— Այ որ ասում են թէ վազող ձիու վրայ մի մարդ է կանգնում, նոցն մարդու վրայ մի երկրորդը, նրա վրայ էլ մի երրորդը, չորրորդը...

— Այդ ի՞նչ դժւար է. ես քի՞չ եմ կանգնել փոքր միջոցիս՝ վազող ձիու վրայ, — պարծեցաւ Կուարսաբը:

— Այ քո արև՛ը, դրո՛ւստ քո բանն էր այդ:

— Աստուած վկայ, ուղիղ է. հիմայ այլ ևս այնքան ջան չէ մնացել մէջս, թէ չէ խիոյն ցոյց կը տայի քեզ:

— Մի՛ պարծենար, սիրելիս, ես խօ լաւ զիտեմ, ինչ որ ես:

— Մի՞թէ ես պարծենալու համար եմ ասում: Ես նորա համար ասի, որ քո ձեռնածութիւն ստածդ մի մեծ բան չէ: Դրանից աւելի այնպիսի զարմանալի բաներ կան որ...

— Սրինա՞կ:

— Ո՞րն ասեմ, հազար բան:

— Ասա է՛լի, որ ես էլ իմանամ:

— Շատ է:

— Սրինա՞կ:

— Ես ի՞նչ զիտեմ, հազար բան:

— Սրինա՞կ:

1) Վրաստանում սովորութիւն կալ, որ առաջին անգամ քաղաք (Թիֆլիս) գնացողը պետք է մանր քարեր կուլ տայ, որպէս զի աշնտեղ փորձանքներն չը հանդիպի: Մի ժամանակ սոյն գրքի զրոյլիս էլ կուլ են տալ աւել:

—Ե՛հ, ո՛վ կը համարէ, շատ է: Երանի՞ քեզ. ո՛ւհ, այս ինչ շոգ է:

—Որովհետև մեր անմեղ Լուարսաբը ոչինչ չը գիտէր որ ասէր, խօսքը կտուրը գցեց: Պլխարկն հանեց ու սրբեց նրանով իւր ճակատի ու երեսի քրտինքը: Յետոյ չիբուխը պատրաստել տւեց և մի այնպիսի խրխրոց հանեց, որ մարդ կը կարծէր թէ մի քանի օր անքուն էր մնացել:

X

Հինգերորդ օրը բարով տուն վերադարձան մեր երջանիկ ամուսինները, հետը բերելով, ի հարկէ, զաւակ ունենալու յոյսը: Բայց անցաւ երեք ամիս, երեխան փորումը չը վժվժաց. անցաւ վեց ամիս՝ Գարեջանի զէրիան չը նեղացաւ. անցաւ ինն ամիս՝ Գարեջանի փորը չը ցաւեց: Բայց էլի յոյսը չէր կորում Գարեջանը. այնքան զանազան գոյնի և զանազան ձևով աղօթած քարեր կապեց ու զէրիայի ծոցին կարեց, որ ճիշտ որ պէտք է յոյս ունենար, և ունէր էլ: Եթէ մինչև այդ ժամանակ չէր ունեցել, այդ այն պատճառով էր, որ Լուարսաբը խաչին անարգեց, «հեռու է» ասելով: Ապա թէ ոչ, եթէ այդ անարգանքը եղած չը լինէր, հիմայ Գարեջանը մի երեխայ կ'ունենար զոգում նստած: Էուարսաբը տխուր էր. դեռ այդ ոչինչ որ որդի չէր ունենում և խաչը նրան խաբեց, ապսպրեց իւր մօտ ու որդի չը տւեց. նորա ցաւն այն էր որ իւր եղբայր Գաւիթն ասել էր թէ «այն անտէրը երբ պէտք է սատակի, որ նորա կալւածների վրայ իշխեմն: Այդ էր Լուարսաբին սպանողը, թէ չէ անզաւակ լինելը էլի մի մեծ դժբաղդութիւն չէր նորա համար:

Մի անգամ այդպէս յուսահատուած պառկած էր Լուարսաբը մէջքով մի թախթի վրայ, իսկ զիմացի թախթի վրայ Գարեջանը նստել զուլպայ էր մանում: Շատ տխուր էր ու լուռ, աչքերը ձգած դէպի առաստաղը ու մտածմունքի մէջ: Մի գլուխ նորա վրայ էր մտածում թէ ի՞նչպէս շարմարեցնի որ մի որդի ունենայ:—«Միթէ ես ճիշտ զաւակը նորա համար եմ ուզում, որ զաւակ ունենամ,—ասում էր նա ինքն իրան. չէ՛, քո արևը, Գաւիթի ջգրու եմ ուզում, չեմ կամենում որ նա իմ կալւածների վրայ ուրախանայ: Ուզում եմ նորա վրէժն առնել, ապա թէ ոչ՝ շատ էլ չէի ցաւի ան-

զաւակութեանս համար, մի՛թէ քչերն են առանց զաւակի. ե՛ս էլ թո՛ղ նրանց մէջը լինէի. բայց չեմ ուզում որ Դաւիթն ուրախանայ, Դաւիթը»:

Այդ ինքն իրան ասելուց յետոյ, շուռ եկաւ դէպի Դարեջանը վհատած և մի ցաւալի ձայնով ասաց.

— Հիմաչ պէտք է Դաւիթը մարսէ՞ այն խօսքերը... նա պէտք է ուրախանա՞յ մեր կալածներով... Դարեջա՛ն, ցաւդ տանեմ, թէ ինձ կը սիրես, ասում եմ, մի արու զաւակ ծնիր, զոնէ Դաւիթի ջգրու. ծնի՛ր, որ ուրիշ ոչինչ չը լինի: Մի նորա վրէժն հանել տուր ինձ ու յետոյ ուզում ես սպանի՛ր ինձ: Յաւդ տանեմ, ի սէր քո կին անւան, թէ ինձ կը սիրես, է՛լի...

— Կը ծնեմ, զու չը մեռնես, կը ծնե՛մ թէ որ այդպէս է, — պատասխանեց իշխանուհին այնպիսի մի ձայնով, որ կարծես թէ ճիշտ նորա ձեռքումն էր որդի բերելը: Այս զեշեր երազումն մի ծերունի որ մինչև ոտները սպիտակ թղթի նման մաքուր մորուք ունէր — մի դեղ լամացրեց ինձ ու ասաց. «բազմացի՛ր որպէս Յակոբը». ես իսկոյն նորա ծնկներին փաթաթեցայ, քո փոխարէն էլ փաթաթեցայ:

— Իրա՞ւ, — գոչեց յուսադրեաճ Լուարսաբը-իրա՞ւ քո աչքովդ տեսար:

— Ահա՛, ինչպէս քեզ եմ տեսնում:

— Հոգո՛ւղ մեռնեմ... ուրեմն յո՞յս կայ, Դարեջան ջան:

— Ի հարկ է, քա՛:

— Հա՛, հոգո՛ւղ մատաղ, հոգո՛ւղ, — հաւատաց ու ժպտաց

Լուարսաբը: Ի՞նչպէս ասաց:

— Բազմացի՛ր, ասում է, որպէս Յակոբը:

— Յակոբն ո՞վ էր:

Դարեջանը չը գիտէր թէ ով էր: Միայն այնպէս լսել էր եկեղեցում. բայց թէ ո՞վ էր նա, ի՞նչ էր, ե՞րբ էր — այդ մասին նա ոչինչ չը գիտէր: Բայց անգիտութիւնը չը կամենալով յանձն առել՝ ստախօսութիւնը գերադասեց «չը գիտեմ»-ին: Ինչպէս որ բոլոր վրացիք սովոր են անել նոյն օրինակ դէպքերում:

— Ո՞վ էր, — ասաց Դարեջանը, մի՛թէ զոնէ եկեղեցում չես լսել... նա Աբրահամի ինամու ազգականի որդին էր:

— Լա՛ւ, որ ասել է թէ բազմացի՛ր որպէս Յակոբը, — ի՞նչ է ուզեցել ասել:

—Իբր թէ այն էր ուղում ասել թէ՛ բազմացիր, — բացատրեց Պարեջանը:

—Ա՛յ, մեռնեմ նորա լեզւին. ուրեմն յոյս կա՞յ:

—Պարձեա՛լ. մի՛ գիտացիր այդպէս, մի՛. մի՛ լինիր անհաւատ, մեղք է:

—Ել չեմ լինի, չէ՛, միայն թէ որդի ծնես, պատրաստ եմ լեզուս էլ կրծեի, միայն թէ դու Պաւթին չուրախացնես:

—Աստուած ողորմած է, ասում եմ որ չեմ ուրախացնի:

—Ա՛խ, երանի՛ թէ իրօք դու ծնէիր:

—Ելի՛, մի՛ լինիր անկոտորում, ի՛նչ եղաւ քեզ, ա՛ մարդ, ինչպէս դու սուրբ մարդու խօսքերին չես հաւատում:

—Ա՛յ, Աստուած անիծի, ես ինքս ինձ ուղում էի մտքումս ասել—Աստուած է վկայ— և յանկարծ բերանիցս դուրս թուաւ. ա՛խ, երանի...

—Ելի՛:

—Փի՛է, Աստուած անիծի, քիչ էր մնում, որ նորից սխալէի... զխե՞ս, որովհետեւ շա՛տ եմ ուղում՝ դորա համար, ապա թէ ոչ... է՛հ, շուռ դամ քնեմ, թէ չէ խօ զիտեմ լեզուս բնութիւնը. էլի մի բան դուրս տալ կը տայ ու Աստծուն բարկացնել կը տայ:

—Այս էլ Թիւթիւնը չը լինի՞. այնքան բերանդ բացիր, այնքան դուրս աւիր, որ խռովեց մեզանից և ահա՛ մինչև օրս էլ որդի չունեցանք:

—Բայց չէ՞ որ ես յետոյ իսկոյն աղաչեցի, որ չը խռովի: Ի՛նչու չը ներեց. ի՛նչ անենք որ ասի թէ «հեռու է», սխալւեցայ. ասած է, թէ քահանան էլ կը սխալի ալէյուրա ասելիս:

—Լա՛ւ, լա՛ւ, ինչ եղել է, եղել է, գոնէ հիմայ չը բարկացնես:

—Ուրեմն կը քնեմ:

—Քո կամքդ է:

Լուարսաբը շուռ եկաւ և մի վոթը միջոցից յետոյ բարձրացրեց մի փառաւոր խրտոց:

Երանի չը քնէր: Երազումը մի սարսափելի բան տեսաւ: Տեսաւ որ Պաւթիւթը այլ ևս ուրախութիւնից օտի վրայ չի կանգնում որ նա որդի չունեցաւ. ման է գալիս ամեն տեղ ու միշտ միևնոյնը կրկնում. այն անտէրը երբ պէտք է սաստակի, որ նրա կալածների վրայ

իշխեմ: Լուարսաբի սիրտը ցաւում է, վրդովւում, արիւնը կոկորդն է խփում: Ի՞նչ անի. «Ո՛հ, Աստուած, ասում է նա երազում սրտի դաւով, ի՞նչ յանցանք ունեցայ քո առաջ, ա՛յ օրհնւած, որ ինձ զաւակ չես տալիս. դու հրամայեցիր՝ և ես եկայ Քելեթ համբուրելու, տասներկու արասանոց ոչխար մորթեցի և երկու արասու խտակ մամ վառեցի քեզ համար: Ուրիշ ի՞նչ պէտք է անեմ. ժամ պատարագից առանց այն էլ չեմ չէի մնում, պաս չեմ կտորել, ամէ՛ն տարի սուրբ հաղորդութիւն եմ ընդունել ու խոստովանել: Դէհ, մեր քահանային հարցրու, թէ ես մի մեղք եմ արել: Մի՛թէ ինձ պէտք է Դաւիթի բաժին շինես... Ո՛վ կարող է համարել այն մեղքերը որ նա զործել է աշխարհումս. անցեալ տարի Յովհաննէս Մկրտչի գլխատման օրը միս կերաւ, զեանի վրայ որ հացի կտոր է նկատում, չի վեր աւնում ու չի համբուրում, կարելի է ոտ էլ դնի վրան ու արորէ: Զօրհնւած խաղող է ուտում, մինչև ալլախերպութեան օրը չի համբուրում, այնպիսի որկրամոլ է, որ Զատիկի օրը, առանց՝ սպասելու որ քահանան գայ ու սեղան օրհնի, վրայ է ընկնում ու լափում. ճիշտ է, հաղորդելով հաղորդում է, բայց ի՞նչ սգուտ. երեք օր է պատրաստում, միմիա՛յն երեք օր, հապա այդ ի՞նչ հաղորդութիւն է: Այս բոլորը դու զիտես, ո՛վ օրհնւած Աստուած և էլի նրա կողմն ես օրհնի՛ դատաստանը: Հա՛, իրաւ մի բան էլ մոռացայ. մի որսկան շուն ունի, որին իր ամանիցն է ուտեցնում և էլի իրան քրիստոնեայ մարդ է համարու՛մ: Ես խօսումնեմն այդպիսի մեղքեր չեմ զործում, ի՞նչու ես ինձանից խոսվում: Միժեռնակ ասես՝ նրան է անիծում¹⁾, հոպոպ ասես՝ նրան է անիծում, ծածառակոտիտն էլ, քուռակն էլ—ինչ ապականութիւն ասես որ նրա մէջ չկայ: Իսկ ես—դու խօսաւ զիտես, Աստուած,— որ ոչոք չի անիծել ինձ, ի՞նչու ես ուրեմն խոսվում: Գուցէ նրա

1) Մեղանում մի այսպիսի համոզում կալ, որ եթէ առանց գինի խմելու առաջին անգամ ծիծեռնակին հանդիպես՝ ծիծեռնակը կ'անիծէ. քուռակ որ տեսնես, խսկոյն պէտք է մի քարի վրայ բարձրանաս, թէ չէ նա կ'անիծէ. հոպոպին գլուխը սանրած պէտք է հանդիպել և ալն: Լուարսաբն, ինչպիսի և հազարաւոր ուրիշներ, այդ անիծելի լանցանք է համարում. այդ պատճառով էլ նա այդպիսի մի սգետութեամբ Դաւիթին մատնում է Աստուծոյ:

Մանթ. Հեղինակի

Համար որ Թեթի զնալիս սկսեցի հպարտ հպարտ խօսել. բայց չէ՞ որ իսկոյն էլի զղջացի...»

Այդպէս զանդատուում էր երազի մէջ Աստուծուն Լուարսաբը: Յետոյ տեսաւ որ իբր թէ Աստուած հիմնաւոր համարեց նրա զանգատը և իւր համակրութիւնը ուղղեց դէպի նա: Եւ ահա իբր թէ ութ ամիս է ինչ որ Դարեջանը չղի է. մի ամիս էլ, միմիայն մի ամիս էլ՝ և Լուարսաբը որդի կունենայ, Դաւիթի աչքը դուրս կը գայ: Ուրախանում է Լուարսաբը երազում, որ իւր զանգատը տեղն հասաւ և ուրախութիւնից ոտի վրայ չի կարողանում կանգնել: Դաւիթն և նրա կինը ջգրու տաքւում են: Իբր թէ երկու շաբաթն էլ անց է կացել և մնում է զարձեալ միայն երկու շաբաթ որ Դարեջանը սլառկի: Ուրախանում է Լուարսաբը, սակայն—ահա դժբաղդութիւն— Լուարսաբը հիւանդանում է և սաստիկ հիւանդանում, այնպէս որ մինչև անգամ մեռնում է: Բայց այնպէս է մեռնում, որ ամեն բան զգում է. լսում է որ Դարեջանը մի սոսկալի ձայնով լալիս է և զիւղի լալիան կանայքն էլ սրտացաւ կերպով դամ են քաշում: Ասում է որ այն կողմը, մի անկիւնում Դաւիթն ու Էլիսաբէզը ծիծաղում են, թուշկոտում և իւր բոլոր կահ կարասիքը իրանց տուն փոխադրում: Լուարսաբի արիւնը կոկորդն է խփում, ուզում է վեր թուշել, բայց իմանալով որ մեռած է, տեղից չի շարժւում:— «Վաղը կալուածները վրաս կը հաստատեմ, ասում է բարձր ձայնով Դաւիթը. Լուարսաբը քրտնքաքամ է լինում այդ խօսքերի վրայ, տանջւում է, ուզում է ասել թէ՛ «մի՛ տաք, Դարեջանը չղի է, որդի կ'ունենայ», բայց իմանալով որ մեռած է, ոչինչ չի ասում: Մի զարհուրելի դրութեան մէջ է խեղճ կենդանի-մեռել Լուարսաբը. ինչ կարող է անել ննջեցեալը—«Վա՛յ, ի՛նչ ժամանակ մեռա՛յ... այն ժամանակ երբ Աստուած հաճեցաւ ինձ մի որդի շնորհել, —ասում է երազում ինքն իրան Լուարսաբը—ա՛խ, երանի մի կենդանանայի ես հիմա՛յ»...

Բայց ո՞ւր է կենդանանալը. ահա՛ դազազն էլ բերին, ահա՛ մէջը զրին և նա, դազազում զրած և զարդարւած, հանգստանում է թախտի վրայ: Երբորդ օրը քահանաներ էլ եկան, վեր քաշեցին նրան ու տարան երգելով ու լաց լինելով: Այդ երգերի ու լացի մէջ նա լսում է Դաւիթի և նրա կնոջ ուրախ ուրախ տեղտեղանքը: Ասում է այդ բոլորը և զգում, որ արդէն վերջին աղօթքն ասացին

ու գերեզմանատուն տարան. ուզում է ասել «մի՛ թաղէք ինձ», բայց իմանալով որ մեռած է, ոչինչ չի ասում: Ահա՛ վայր թողին խեղճ Լուարսաբին հողի մէջ, նա լսում է որ Դաւիթը՝ կանգնած գերեզմանի ափին՝ ասում է դատաւորին՝ «վաղը կալածները կը յանձնես ինձ», բայց Էլիսաբէզը բարկանում է նրա վրայ. «ի՞նչ ես դուրս տալիս, ի՞նչու ես վաղան զցում, քանի որ այսօր ե եթ կարող ես ընդունել: Լուարսաբը լսում է այդ բոլորը, հոգոց է հանում, նեղանում է, տանջւում, սառը քրտինք հանում, զողլողում, սարսուռում մի կողմից ահից, միւս կողմից բարկութիւնից որ Դաւիթին է մնում քրուրզն ու մէջգանը» (լիուլի ազատութիւն): «Մի, երանի մի կենդանանալի՛», — ասում է իւր սրտում Լուարսաբը:

Բայց ո՛ւր է կենդանանալը: Ահա՛ հող էլ ամին վրան, առաջ մի մի բուռ էին ածում ու դազաղի տախաակից բխբխոց հանում, բայց յետոյ նա նկատում է, որ արդէն թիերով են հող թափում: Լուարսաբի սիրտը նեղանում է, շունչը արգելում, դազաղում այլ ևս օդ չի մնում, մի բոպէ էլ՝ և նա արդէն կը վերջանայ: Բայց ո՞վ է օգնողը: Լսում է որ ժողովրդի ձայնը-ձունը հետզհետէ կտրւում է, ամենքը գնացին և միայն Լուարսաբին ձգեցին այնտեղ, հողով ծածկւած: Նորա սիրան սկսեց տռփալ, երբ նա նկատեց որ Դարեջանն էլ, իւր սիրելի Դարեջանն էլ, ուրիշների պէս, նրան բարձի թողի արեց ու նորա հեռ չը թաղեց: Լուարսաբի սիրտը կտոր-կտոր եղաւ. նա սկսեց լալ. «մի՞թէ այդ յոյսն ունէի նրանից, ասում է նա իւր սրտում—կա՛ց, դու էլ կը գաս արքայութիւն, կը չիշեցնեմ քեզ այդ ամենը»: Այդ մտքի հեռ եղած միջոցին նա լսում է ու ականջ դնում. տեսնում է որ Դաւիթն ու Էլիսաբէզը ձեռք ձեռքի են սուել ու նորա զեռ ևս թաց գերեզմանի վրայ պարում: «Հը՛, սատակեցա՞ր թէ չէ» — գոչում են նրան վերեւից: Հիմայ արդէն այլ ևս համբերել չը կարողացաւ, սիրտը կրակ ընկաւ. մի գարհուրելի կերպով շարժեց, ուզում էր այնպէս վերկենար, որ դազաղի խոփն ու վրայի հողը դուրս պոկեր, գերեզմանից վեր ելնէր ու նրանց խաղք խալտաւակ անէր: Այդ օրօրելու և տանջելու միջոցին նա յանկարծ վեր թռաւ, իբր թէ գերեզմանից դուրս ընկնելու համար, և թախտից դրժիաց աշիւտաւոր յատակի վրայ: Միայն այդ ժամանակ նա աչքերը շեց, երազի ահը զեռ ևս պտոցտ էր գալիս զլսում,

մնաց այնպէս տխմարի պէս շարած ու բերանը բացած՝ փուլած չտտակի աղիւսների վրայ: Ծիծաղելի՛ էր. այնպէս էր թուլացել, այնպէս էր ապշել ու սառը քրտինքով ծածկել, որ երկար ժամանակ մտքի չ'եկաւ և ոչ միայն չ'աշխատեց վերկենալ, այլ և բոլորովին չը շարժւեց: Այնպէս էր վախեցած, որ մեռելի գոյն էր ստացել իւր քրտնած երեսին: Նորա վայր ընկնելու վրայ, ինչ ասել կ'ուզի, սենեակը շարժւեց. Գարեջանը, որ քունը տարել էր միւս թախտի վրայ, սենեակի շարժելուց զարթեց. չը գիտենալով թէ Լուարսաբն ինչ գրու թեան մէջ է՝ ձայն տւեց՝ քա՛ Լուարսաբ, լսեցի՞ր, երկրաշարժ էր:

Լուարսաբը դեռ ևս իւր երազով էր զբաղւած, ձայն չը տւեց, Գարեջանը նստեց և միայն այդ ժամանակ նկատեց, որ Լուարսաբը ընկած է աղիւսների վրայ ապշացած ու տխմարի պէս աչքերը շուած: Գարեջանի գոյնը թուաւ:

— Վա՛յ քո Գարեջանին, այս ի՛նչ է պատահել, չարդ տանէ իմ կենդանի գլուխս:

Լուարսաբը Գարեջանի ասածն էլ չը լսեց: Նորա գլուխն սկսեց պտտոյտ գալ և նա կարծում էր թէ այդ բոլորը դեռ ևս երազի շարունակութիւնն է. այդ պատճառով նա ոչ բան էր լսում և ոչ տեսնում, թէպէտև աչքերը շուած դարմանում էր և մտածում. «չէ որ ինձ թաղեցին, բայց կարծես թէ իմ սենեակումս լինեմ. այս ի՛նչպէս է պատահեր»:

Այդ մտածումների մէջ ուշքն ու միտքը ցիր ու ցան եղաւ: Այդ պատճառով էլ, փոխանակ պատասխանելու, նա չառեց իւր վախեցած աչքերը Գարեջանին. նա զգում էր թէ տեսնում է իւր կնոջը, բայց միևնոյն ժամանակ չէր ուզում հաստատել թէ առաջը Գարեջանն է կանգնած: Գարեջանը սարսափեց, մի դուցէ լսելագարւել է, անցաւ նորա մտքովը: Իսկոյն թախտիցը ներքև թուաւ ու վրայ ընկաւ ձգւած Լուարսաբին:

— Ի՛նչ եղաւ քեզ, ցա՛ւդ տանեմ ևս, ցա՛ւդ, ձայն հանիր, հողուդ մատաղ, թէ չէ էլ չը գիտեմ թէ ի՛նչ պէտք է անեմ:

— Վա՛յ... ասաց ու ձեռքը շարժեց Լուարսաբը, իբր թէ ուզում էր հասկացնել թէ «հեռացիր, ուզում եմ դեռ ուշքի գալ»:

Ասաց, ձայնը կտրեց և սկսեց, առանց մի շարժում անելու,

աչքերը չուած և բերանը բաց՝ մտածել, որ կարողանար մտաբերել ինչ որ հետը պատահել էր: Այնպէս յանկարծ և այն զրու-թեան մէջ զարթողը քիչ քիչ գլխի ընկաւ թէ ինչ էր այդ երազի էութիւնը և ուզեց ամբողջովին ըմբռնել:

—Հոգուդ մեռնե՛մ,—աղաչում էր Դարեջանը. շուտ ասա՛ թէ չէ ահից մեռայ:

Լուարսաբը ուշադրութիւն չը դարձրեց նորա վրայ, նա սկսեց ինքն իրան և բարձր ձայնով՝

—Ես մեռայ: Դարեջանն առաջ լալիս էր, իսկ յետոյ, երբ որ ինձ թաղեցին ու ամենքը ձեռք վերցրին ինձանից, Դարեջանն էլ դաւաճանեց ինձ: Մի՞թէ այդ յոյսն ունէի նրանից. մենակ թողեց ու ինձ հետ չը թաղեց... թէ՞ սիրում էր ինձ, թո՞ղ համբերէ՛... այն անհոգի Դաւիթը... այն քաւթար հարսս... պար բռնեցին էլի՞, էլի՞, թո՞ղ համբերեն... թէ որ մեռած չը լինէի, ևս ցոցց կը տայի նրանց... բաց ի՞նչ կարող էի անել, քանի որ մեռած էի...

Նստ աջգլխի բանդազուշանքներ արեց մեր Լուարսաբը: Իսկ Դարեջանը ապուշ ապուշ նայում էր նրան, առանց հասկանալու թէ ի՞նչ է ասում:

—Հոգուդ մեռնե՛մ, Լուարսաբ,—ասաց Դարեջանը դողդողալով. երազո՛ւմն այն ժամանակ դուրս չեկաւ, երբ հող թափեցիր վրաս ու մենակ թողիր այն սև հողի տակ:

—Ի՞նչ ես ասում, այ մարդ, ի՞նչ, մի հասկացրու, տեսնե՛մ:

—Ի՞նչ պէտք է հասկացնեմ. դատարի լաց լինելը մի գրոշ չ'արժէ, պէտք է հետս թողուէիր: Ձե՞ս ամաչում, էլ ի՞նչպէս ես երեսիս նայում:

—Վա՛յ, քուանամ ես ու կուրանա՛մ, ճղաւեց Դարեջանը և դուրս ընկաւ պատշգամբ որ ծառաներին կանչէ, որովհետև նա համոզւեց թէ սատանան աքացի է տւել նրա գլխին ու խելագուրկ արել: Նա ի՞նչ գիտէր թէ Լուարսաբը դեռ ևս իւր երազի հետն է:

—Օգնեցէ՛ք, օգնեցէ՛ք:

Դռու՛մ էր Դարեջանը պատշգամբից, իւր գլխին տալով՝ զլխաբաց ու զզզւած:

—Օգնեցէ՛ք, վա՛յ գլխիս, վա՛յ քեզ, քաւթար Դարեջան:

Գոռում էր իշխանուհին ու խփում իր գլխին, ինչքան որ ոյժ ունէր: Լուարսաբը այդ գոռոցի վրայ լիապէս սթափւեց: Նա վեր թռաւ աղիւսներից և այնպէս քրքրւած դուրս ընկաւ, որպէսզի իմանայ թէ ի՞նչ է պատահել Գարեջանին: Գարեջանը՝ Լուարսաբին տեսնելուն պէս՝ կարծելով թէ նա իւր յետևիցն է ընկել, ոտը զցից սանդիտին, սայթաչքւեց նրա վրայ և խրխրալով գլորւեց ներքև: Այդ աղմուկի և վիզիցի վրայ ծառաները ժողովեցան:

— Բռնեցէ՛ք, կապեցէ՛ք, — գոչում էր կողքերը ջարդած Գարեջանը. բռնեցէ՛ք թէ չէ կ'ուտէ մեզ: Վա՞յ իմ քաւթար գլուխ, այս օրին էլ հասայ, որ մարդս խելագարւեց:

Ճղաւում էր խեղճ իշխանուհին ու տալիս ուժով իր գլխին, կարծես թէ այդ գլխի մեղն էր Լուարսաբի խելագարւելը: Լուարսաբը զարմացաւ. այդ տեսարանը դիտելով՝ նա ցամաքեց. այս անգամ էլ նա էր կարծում թէ իր կինը խելագարւել է: Խեղճը սկսեց լաց լինել. նա փափուկ սրտի տէր էր:

— Ինչ ես գոռում, ա՛՛ կին, — ձայն տւեց նա հեւալով ու տխուր՝ Գարեջանին (ինքն արդէն կատարելապէս ուշքի էր եկել). ո՞վ է խելագարւել, հոգուդ մեռնե՛մ, ես լիովին սթափւեցայ:

Գարեջանը նայեց, տեսաւ որ Լուարսաբը դարձեալ այն Լուարսաբն է, ո՛չ խելագար, ո՛չ խելօք, սչ փլաւ, ոչ չլաւ. բայց էլի մի քիչ կասկածի մէջն էր: Խելագարը մի մի անգամ խելօքանում է, — մտածեց նա իւր սրտում:

— Հապա մի լաւ նայի՛ր ինձ, — ձայն տւեց նա ներքևից ու աչքերը շռեց:

— Ահա՛, հոգուդ մեռնեմ, — ասաց ու նայեց Լուարսաբը:

— Մի փոքր առաջ ի՞նչեր էիր խօսում:

— Ե՛րբ, ցաւդ տանեմ:

— Աղիւսների վրայ պառկած ժամանակդ:

— Երազ էի տեսել ու աշխատում էի մտաբերել:

— Բայց ի՞նչու էիր աղիւսների վրայ ձգւել:

— Վատ երազ տեսայ. իբր թէ ինձ թաղում էին և ես ուզեցի գերեզմանից դուրս թռչել. այդ պատճառով թախտից վայր ընկայ:

-- ձի՞շտ ես ասում, ցաւդ տանեմ, — բացականչեց Գարեջանը.

վա՛յ, ամօթ ինձ, ամբողջ աշխարհը գլխիս հաւաքեցի, ասելով թէ մարդս խելագաւել է:

Գարեջանը բարձրացաւ վեր Լուարսաբի մօտ և խփոյն խնդաց: Լուարսաբն էլ ատամները կրճտացրեց:

—Մի՞թէ ճիշտ խելագար էիր կարծում ինձ, ցաւդ տանեմ,— հարցրեց Լուարսաբը:

—Ճիշտ խելագար էի կարծում, շարդ տանեմ ես:

—Ա՛յ, Աստուած անիծի, իսկ ես քեզ էի կարծում խելագար: Փա՛ռք Աստուծոյ, երկուսս էլ լաւ ենք: Սանյխոսի վրայ որ գլորեցա՛ր:

—Ի՛նչ վնաս. քեզ այսպէս ուշքի վրայ տեսնելով, ամեն բան մոռացայ:

—Ես էլ այնպէս:

—Վոյ, ցաւդ տանեմ, ցաւդ, ճիշտ որ դու խելագարէիր՝ ես ի՛նչ պէտք է անէի,—ասաց Գարեջանը և, յափշտակած ուրախութիւնից Լուարսաբի սթափուելու վրայ, կմշտեց նրա թուշը:

Լուարսաբի քէֆն եկաւ և, որպէս զի յետ չը մնայ նրանից գզւանքի մէջ, ինքն էլ կմշտեց ու մի քաղցր ձայնով և ժպտալով «ըհը՛» արտասանեց: Այդպէս անցաւ այդ անցքն էլ:

XI

Լուարսաբը պատմեց նրան այդ երազը, ինչպէս որ եղել էր, գլխից մինչև վերջը: Գարեջանը այնպէս մեկնեց այդ երազը, որ ճիշտ ինն ամսից յետոյ պէտք է զաւակ ունենար:

—Այդ ի՛նչպէս,— հարցրեց Լուարսաբը:

—Դու երազումդ լաց էիր լինում, այնպէ՞ս չէ,— հարցրեց հիմայ Գարեջանը:

—Լաց էի լինում:

—Ե՞ս էլ էի լաց լինում:

—Դո՛ւ էլ:

—Լաց լինելը ուրախութեան նշան է: Ես ու դու ուրիշ ինչ ուրախութիւն պէտք է ունենանք, եթէ ոչ մի զաւակ ծնելը. ուրեմն պէտք է որդի ծնւի մեզ և մեր ուրախութիւնն էլ այդ ձևով կատարւած կը լինի:

—Իրա՛ւ, չէ՞ որ լացը ուրախութեան նշան է: Անպատճառ.

ասածիդ պէս կը լինի: Ա՛հ, մեռնեմ այն երազի հոգուն, թո՛ղ
Պաւթի աչքը դուրս գայ: Թո՛ղ հիմայ պարգայ. ա՛խ, Աստուած,
դու գիտես հիմայ:

Այդ միջոցին Լամազխատուլը դուռը բացեց ու ուրախացած
ներս ընկաւ սենեակը:

—Աղջիկ-պարոն, աղջիկ-պարոն,—վրայ տւեց աղախինը—Ձամ-
չիշելիլի որդու համար, որին կձեց կատաղի շունը, մի բժիշկ-կին
են բերել և ասում են թէ այն կինը գրբացութիւն է և իմանում:
Քուցէ կամենաք նրան գիր բաց անել տալ. ասում են թէ ինչոր
մարդս սրտումն ունենայ և ինչ նորա ճակատին գրւած լինի՝ իսկոյն
կը գուշակէ:

—Այ, շաքարը քո բերանում, իմ Լամազխատուլ, շաքարը քո
բերանում,—վրայ բերեց ուրախացած Պարեջանը—գնա՛ այս բուպէիս
այտոեղ հրաւիրի՛ր, ասա՛ թէ փող էլ կ'ընծայեն:

Աղախինը շուռ եկաւ ու վազ տւեց:

—Պարեջան, ցաւդ տանեմ, երազը իրականանում է,—գոչեց
ժպտալով ուրախացած Լուարսաբը. վա՛, էլ ի՞նչ ես ուզում, Աս-
տուած ինքն իրան գրբաց է ուղարկում քո դուռդ: Հապա այդ
ի՞նչի նշան է:

—Հապա՛, որ քեզ ասում էի ու դու չէիր հաւատում. հապա՞
ինչ չուսով էի քեզ ասում թէ որդի կ'ունենամ: Քանի՛ ժամանակ է
որ սիրտս իմաց էր տալիս:

—Իմն էլ շատ ժամանակ է որ իմաց է տալիս, դու մի՛ ասա
որ այսպիսի բան է եղել: Ա՛յ, հիմայ դուրս կը գայ Պաւթի աչքը ա՛յ:

—Ինչ մի այնպիսի վիշտ ունին, որ ինձ ստիպեցին հիւանդիս
թողնել ու այդպէս շտապով իրանց մօտ կանչեցին:

Հարցնում էր ճանապարհին Լամազխատուլին մի մարմինը ոլո-
րած, փոքրիկ, կուչ եկած ու բերանը բաց սրտաւ կին:

—Ես ի՞նչ իմանամ. խօ գիտես, նրանք անորդի են...

—Այդ ես առանց քեզ էլ գիտէի,—ընդհատեց նորա խօսքը
վարպետութեամբ փորձառու ու նենգաւոք գրբացը:

Յիմար Լամազխատուլը զարմացաւ. ո՞րտեղից իմացաւ, մտա-
ծեց նա:

— Ուրեմն այն էլ կ'իմանաք, որ քաղաքի գրբացի մօտ մարդ ուղարկեցին ու նա ասել էր թէ Թելեթ գնացէք, — ասաց աղախինը ու նայեց նրան ապշած, որպէս զի տեսնէ թէ նա ի՞նչ կ'ասէ:

— Ի հարկէ, հոգիս, հասցա մեր արհեստն ի՞նչ է. հացը դրանով եմ ուտում ու այդպիսի բաներ պէտք է չ'իմանամ, — պատասխանեց վարպետ պառաւը այնպիսի մի միամտութեամբ, կարծես թէ իրօք առաջուց գիտէր:

— Այն էլ զիտե՞ս, որ Թելեթումն էինք:

— Ասացի թէ մեր արհեստն այդ է, որդի: Դրանով ենք ապրում, ի՞նչպէս թէ չ'իմանանք:

Շատ էր ուրախացել գրբացը, որ մի այդպիսի տխմար աղջկան հանդիպեց, որից բաւական կարևոր տեղեկութիւններ դուրս քաշեց ճանապարհին: Իսկ աղախինը սաստիկ զարմանում էր այդ կնոջ գուշակելու ընդունակութեան վրայ: Ցիմարը ամենևին մտքովը չ'անցկացրեց, որ ինքն էր նրան ամեն բանի մասին զլլի գցողը և որ առանց իրան նա ոչինչ չէր կարող գիտենալ:

Աղախինը անցկացրեց նրան ախոռի մօտով: Գրբացը աչք ածեց ախոռի շուրջը ու աչքով նշան դրեց մի ինչ որ փոսացած տեղին. «այս լաւ կը լինի», — ասաց նա իւր սրտում:

Մարդ ու կին սպասում էին անհամբերութեամբ գրբացին. վերջը նա էլ եկաւ: Հէնց որ տուն մտաւ ու նրանց գլուխ աւեց՝ խնդոյն վրայ տւեց հետագայ ճարպիկորէն մտածած խօսքերը՝

— Ուրուրին հարցրին՝ ի՞նչը կը գերադասես՝ ձագերդ, թէ երկու ամիս ծարաւ մնալը. — ծարաւ մնալը, պատասխանեց նա: Զորուն հարցրին. դո՞ւ ինչը կը գերադասես. — անորդութիւնը: Զեզ ոչ ոք այդպիսի հարց չի տւել, էլ ինչո՞ւ որդի չէք ունենում, ո՞վ անիծեց ձեզ այդպէս:

Ամուսինները նայեցին միմեանց երեսին զարմացած. ո՞րտեղից իմացաւ նա այդպէս շուտ — մտածեցին նրանք: Լուարսաբն առաջ բերանը բաց պահեց, մինչև զլլի կ'ընկնէր թէ բանն ինչումն է և երբ զլլի ընկաւ՝ վախեցածի պէս երեսը խաչակնքեց ու արտասանեց այնպիսի մի եղանակով, ինչպէս որ մենք սովոր ենք անել կայծակի և որոտման միջոցին:

— Օրհնեա՛լ է, Տէր, քո անու՛նը. այս ի՞նչ եմ լսում ձեր

ցաւը տանեմ... ա' կին, մի՞թէ մեր սրտումն էիր նստած...

Գրբացը նրան չը պատասխանեց. այնպէս էր երևում թէ նա այդպիսի գովասանքներին ամենևին կարևորութիւն չէր տալիս: Նա շուտ եկաւ ու մի տեսակ հոգածութեամբ ասաց աղախինին՝

—Մի քրեղանով ջուր բեր այտեղ, մի սև կոթաւոր զանակ, մի քիչ էլ ածուխ ու նոր ցորեն:

Մինչև որ աղախինը կը բերէր այդ բաները, մարդ ու կին մնացին այնպէս լեզուները փորերն ընկած: Նրանք կարծում էին թէ այդպիսի ճիշտ գուշակութիւններ անել անկարելի է առանց սատանայի մասնակցութեան: Կարելի՞ է մի՞թէ սատանայի անունը տալ ու ահից լեզուն փորը չը ձգել:

Աղախինը բերեց ամենը: Պառաւը ներքև նստեց, զցեց քրեղանի առաջ մի հատ ցորեն, ձեռքն առաւ դանակն ու ածուխը ու սկսեց շրթունքներն իրար տալ, իբր թէ աղօթում էր: Յետոյ նա աչքը շուրջ ջրի վրայ: Մեր ամուսինները ահով ու պատկառանքով սպասում էին թէ ինչ պէտք է ասէր իրանց բազդի գիրը:

—Քաղաք մարդ էք ուղարկած եղել զբբացի մօտ. շա՛տ լաւ էք արել, — սկսեց սատանայ-պառաւը. զբբացն էլ լաւն է պատահել, ճիշտ է գուշակել, որ Թելեթիցն է եղել:

Հիմա՞յ արդէն իսկ որ վախեցան մարդ ու կին. սկսեցին միմեանց երեսին նայել. երբէք նրանք լսած չէին այդպիսի հրաշալի սրտագիտութիւն:

Պառաւ կինը, իբր թէ ամենևին այդ բաները չը նկատելով, շարունակում է իւր շրթունքների շարժելը ու մի մի ցորենի հատիկ է գցում ջրի մէջ:

—Լա՛ւ էք արել, — սկսեց նորից զբբացը—լա՛ւ էք արել, որ զբբացին հաւատացել էք ու Թելեթ էք գնացել համբուրելու: Արորմա՛ճ կենայ նրա զօրութիւնը, բաց...

Այտեղ պառաւն իւր խօսքն ընդհատեց և, իբր թէ կամենալով ջրի մէջ բան կարդալ, աչքն աւելի շուրջ:

—Բայց ի՞նչ, — վրայ բերին մարդ ու կին միաբերան:

—Բայց այն, որ զբբացը կատարեալ գուշակող չէ եղել, մի քիչ պակաս է ունեցել, չի կարողացել բոլորը գուշակել, թէ չէ ինչո՞ւ պէտք է Թելեթը չ'օգնէր ձեզ:

—Յիշո՞ւմ ես, Դարե՛ջան, որ առաջ դու ինձ էիր մեղադրում այդ բանի մէջ, հիմա՛յ դուրս է գալիս որ իմ մեղը չէ եղել, —ասաց Լուարսաբը իւր կնոջը, առանց իւր ապշած աչքը զրբացից հեռացնելու:

—Կա՛ց, ի՞նչ դորա ժամանակն է. այստեղ վախից հոգիս դուրս է գալիս, այս ի՛նչ զարմանալի՛ կին է եղել սա...

Ճիշտ էր ասում Դարե՛ջանը, թէ այնպէս վախեցած էր:

—Այո՛, զրբացի մեղն է, —սկսեց նորից սատանայ պառաւը: Նա որ լաւ գլխի ընկած լինէր, հիմա՛յ երեխան ձեր գոգումը նստած կուեննայիք: Այո՛, նստած կ'ուեննայիք, եթէ...

Այստեղ էլ իւր խօսքն ընդհատեց ճարպիկ կինը ու աւելի չուեց իւր աչքը ջրի վրայ: Լուարսաբն ու Դարե՛ջանը ականջ դարձան:

—Այո՛, Թե՛լեթը կարող էր օգնել — ողորմած կենաց նրա զօրութիւնը — Թե՛լեթը կարող էր օգնել, — երկարացրեց նորից զրբացը, առանց իւր աչքը ջրից յետ քաշելու — եթէ միայն ձեր տանը «ջադու»¹⁾ չը լինէր:

Լուարսաբն ու Դարե՛ջանը՝ հանգած ահից՝ միաժամանակ և միաբերան բացականչեցին՝

—Վա՛յ անժամանակ քանդած օջախ...

—Մի՛ վախենաք. հիմա՛յ այն ջադուն այլ ևս վտանգաւոր չէ, ես նրան ձեռքիս ունեմ:

—Հասցա ցոյց տուր ինձ, թէ որ ձեռքիդ ունիս, —ասաց նրան Լուարսաբը. բայց որովհետեւ ինքը վախենում էր նրան տեսնել՝ դիմեց Դարե՛ջանին. ես ինքս չեմ կարող տեսնել, ես աչքերս կը փակեմ, իսկ դու մի լաւ գննիր նրան:

—Չէ՛, հոգուդ մեռնեմ, դո՛ւ ինքդ տե՛ս, իսկ ես աչքերս կը փակեմ, — պատասխանեց ահից գոյնը թուած կինը:

—Մի՛ վախենաք, — հանգստացրեց նրանց զրբացը. մի՞թէ ձիշտ ձեռքումս ունիմ ջադուն, ջադուն ձեր բակումն է:

—Ո՞րտեղ է, ձեզ մատա՛ղ լինիմ, ո՞րտեղ. դէհ, տղերք, օգնեցէք, — զուաց պարոնը:

¹⁾ Մի որ և է հմալած իր, որով ուղում են կապել սրա նրա բաղը:
Ծանօթ. Թարգ.

—Ախոռի յետև որ մի փոս կայ, ջաղուն այնտեղ է դրած...
աւելացրեց հանգիստ կերպով զրբացը:

—Տղերք, շուտով, տղերք, այ ձեր ցաւը տանեմ ես, տղերք,
թէ ձեր պարոնից լաւութիւն էք ուզում տեսնել, տղերք, թէ որ
չուխէք էք ուզում՝ ախոռի յետևը մի փոս կայ... դէ՛, շուտ արէք,
տղերք, ձեր ցաւը տանեմ, տղերք...

Փռուում էր սենեակում ահաբեկ եղած Լուարսաբը, իսկ միւս
կողմը Պարեջանի դողն էր սկսել ու շրթունքները կապտել. այ-
նուամենայնիւ, նա կարողացաւ զարձեալ ասել իր մարդուն՝

—Այստեղ ի՞նչ ես գոռում, ո՞վ է լսողը. գնա՛ դուրս և ծա-
ռաներին ուղարկիր:

—Ձէ՛, հոգուդ մեռնեմ, հիմայ դու դուրս գնա՛, իսկ յետոյ,
եթէ ուզենաս, ես կարող եմ քառասուն անգամ էլ դուրս գնալ:

—Դուրս գնա՛, ի՞նչիցն ես վախենում, ջաղուն խօ չի կարող
քեզ խեղդել, — ասում էր նրան իշխանուհին, բայց ինքն աւելի էր
վախենում:

— Ձէ՛, հոգուդ մեռնեմ, դու գնա՛. ի՞նչ է, թէ Աստուած կը
սիրես դու գնա՛, դուրս գնա՛ թէ ինձ կը սիրես:

—Ձե՞ս ամաչում որ դու ինձ, կին արարածիս, ուղարկում ես.
դու պէտք է զլխարկ ծածկե՞ս ու մա՞րդ անւանե՞ս:

—Ի՞նչ ժամանակ մարդութիւն է, ի՞նչ ես դուստայիս, ասում
են թէ տանս մէջ ջաղու կայ:

—Ես կը կանչեմ ծառաներին, — սաց զրբացը — էլ ի՞նչ էք
յուսահատում դրա համար:

—Հա՛, ցաւդ տանեմ, դու կանչիր, մենք խօ, տեսնում ես,
թուլացել ենք, — աղաչում էր Լուարսաբը. իսկ հիմայ որ մենք
երկուսս սենեակում մնանք՝ խօ ոչինչ:

—Ոչի՞նչ, ոչի՞նչ:

Գրբացը դուրս գնաց ու ծառաներին ուղարկեց ջաղուն հանե-
լու: Ծառաները շատ ման եկան ախոռի չորս կողմը, բայց ոչ մի
փոս չը տեսան: Եկան և պարոնին ասացին թէ այնտեղ փոս-մոս չը կայ:

—Վա՛յ գլխիս, — ճչաց Լուարսաբը. տեսէ՛ք, ջաղուն սրանց
աչքն էլ է կապել, — ասաց նա. դուք էլ եկէք, որ ձեր աչքով տեսնէք:

—Ձէ՛, հոգուդ մեռնեմ, մենք այնպէս էլ կը հաւատանք քեզ, —

ասաց Վուարսաբը, որ վախենում էր այնտեղ գնալ. առանց մեզ գնա՛. դու տես, միևնոյնն է իբր թէ մենք ենք տեսել:

Պատու կինը դնաց ծառաների հետ միասին և փոքր միջոցից յետոյ վերադառնալով մի ինչ որ հին շորի կտորը ձեռքին:

—Այտեղ չը բերե՛ս,—գոռում էր Վուարսաբը և մի անկիւնում թագ կենում—այտեղ մի՛ բեր. այրի՛ր այդտեղ և եթէ:

Չարուն այրեցին:

XII

Հետևեալ օրը Վուարսաբը կանչեց իւր մօտնախորդ օրւայ ծառաներին ու մի աջապիսի խօսակցութիւն սկսեց.

—Ճիշտ փոս կար այնտեղ:

—Այո՛, պարոն, ճիշտ կար այնտեղ,—սպառնալուսեցին տղերքը, որ արդէն ընտելացած էին համակերպել իրանց տիրոջ հետ:

—Ձէ, ձեր երկու աչքով տեսաք թէ այնպէս:

—Երկու աչքով, ճիշտ այնպէս, ինչպէս ահա՛ հիմայ քեզ ենք տեսնում:

—Տէր ողորմած Աստուած, այս հասակի մարդ այտեղ եմ՝ ծերացել և ես այնտեղ ոչ մի փոս չէի տեսած... Այսպէս էլ բան կը լինի՞, ի՞նչպէս իմացաւ նա:

—Նորա արհեստն է այդ, ցաւդ տանենք, ու դրանից իմացաւ,—սպառնալուսեցին ծառաները:

—Երևի դորա համար, թէ չէ... ա՛յ Աստուած անիծի... մի ասա՛ցէք՝ դուք մինչև օրս այնտեղ փոս տեսե՞լ էիք:

—Ինչ որ չի եղած, ո՞րտեղից պէտք է տեսնէին,—փնթփրնթացրեց մի ինքնահաւան երիտասարդ, որ կանգնած էր մի փոքր հեռու, ձեռքը խանշալին դրած. այնտեղ փոքրերը մի քիչ հող են չանգրտել և այն սատանան փոս է անւանում դրան. ինչո՞ւ են այդպէս զարմանում:

Այդ, ի հարկ է, այնպէս ասաց, որ Վուարսաբը չը բեց:

—Քեզ ինչ,—փոփոսց նրան մի տարիքաւոր և փորձուած ծերունի, տեսնո՞ւմ ես պարոնն ուրախացաւ, որ այնտեղ փոս է եղած. թո՛ւղ նա կարծէ թէ փոս կայ, քեզ ի՞նչ: Մառապ եմ, տէր իմ,—զարձաւ յետոյ պարոնին այդ նենգաւոր ստրուկը—ես ոչ փոս էի տե-

սել այստեղ և ոչ նորա մասին լսել. պորտո այստեղ եմ կտրել և այս հասակի մարդս հոգիս էլ այստեղ պէտք է յանձնեմ, ցաւդ տանեմ, բայց ձեզ յայտնի պէտք է լինի որ դա պոչաւորի զործ է:

—Մի՞թէ նա պոչ էլ ունէր:

—Ի հարկէ. պոչաւորների տօնի գիշերը՝ ճիակոկոլորին¹⁾, հեծնում են—այ Աստուած անիծի նրանց—աւելի վրայ ու թռչում իրանց մեծի մօտ: Ասում են թէ Զիդորաշլիլի մայրը աւելի վրայ հեծած բււխարի մէջ է բարձրանում, ինչպէս ձիւ վրայ հեծած:

—Այդ ես էլ եմ լսել: Ի՞նչքան բան կայ աշխարհումս սովորելու, տէր ողորմած Աստուած: Եւ Լուարսաբը խաչակնքեց երեսը: Ուրեմն Զիտուրաշլիլին զբբացութիւն էլ կ'իմանայ, — աւելացրեց նա:

—Ձէ, ամենքը չեն իմանում, ցաւդ տանեմ. երբ որ պոչաւորների տօնի գիշերը նրանք այնպէս ընծաներով գնում են իրանց պետի մօտ, այն պետը դիմում է մէկին ու առում. է՛յ, դո՛ւ, տալիս եմ քեզ զբբացութեան շնորհք, մի ուրիշին ասում է. տալիս եմ քեզ բժշկելու իրաւունք: Այդպէս է լինում նրա մօտ, տէր իմ:

—Երևի այդպէս է, ապա թէ ոչ՝ ի՞նչպէս կարող էր նա իմանալ թէ այստեղ փոս կար: Երևում է խելօք է դրանց պետը:

—Ասում են թէ Սողոմոն իմաստունիցն էլ խելօք է:

—Մի՞թէ չի նկատում, Տէր ողորմած Աստուած, — խաչակնքեց նա երեսը ու մտաւ սկնեակի, Դարեջանի մօտ:

—Լսեցի՞ր, ա՛ կին թէ ի՞նչեր արեց այն անպիտան, անատամ պառաւը, ասաց նա իր կնոջը. պէտք է կարծել որ դա իրանց մեծաւորի առաջին ստորադրեալն է. ա՛, Աստուած անիծի, այս ի՞նչ տեսայ, ձեր ցաւը տանեմ:

—Լա՛ւ, էլ միտս մի՛ բեր թէ Աստուած կը սիրես. մինչև հիմայ ահից դեռ ևս մարմինս վշաքաղում է:

—Ահա՛ թէ ի՞նչ է նշանակում գուշակող լինել. այսքան բազմութիւնը իմ տանս մէջն է պորտը կտրել ու մինչև օրս դեռ ևս

¹⁾ Այդպէս է կոչւում աւագ—չորեկշաբթի օրուայ կրակ վառելու սովորութիւնը. այդ կրակի վրայից թռչողը իրան ապահովացրած է համարում փտանգների դէմ: Ծանօթ. թարգ.

մի մարդ չը գիտէր թէ այնտեղ փոս կար: Այդ ի՞նչ արեց, ձեր ցաւը տանեմ:

—Մեղա՛յ Աստուծոյ, բայց անկարելի է որ նրա մէջ սատանայ չը լինի նստած:

Սատանայի անունը չիշելիս, մարդ ու կին երեսները խաշակնքեցին ու երեք անգամ թքեցին սատանայի վրայ:

—Իսկ հի՛մայ... ի՞նչ ասեմ, հի՛մայ էլ որ որդի չըծնւի մեզ՝ մի շափից դուրս մեծ աստուածային բարկութիւն կը լինի,—ասաց Լուարսաբը:

—Է՛հ, դու էլ... էլ ինչ խօսք կարող է լինել այդ մասին: Ես այնքան եմ հաւատում, որ կարծես թէ որդիս արդէն գոգումն նստեցրած ունենում: Էլ ի՞նչ ասես, որ չիմացաւ նա... արի՛ ու մի՛ հաւատա:

—Հապա՛, ես էլ դրա համար եմ ասում, է՛... էլ ի՞նչ պէտք է լինէր մեր ճարը, եթէ Աստուած—մեռնե՛մ նրա իմաստութեանը—գրեացութիւնը սահմանած չը լինէր: Էլ ո՞վ կարող էր ջադուն գտնել:

Երկունն էլ լռեցին, բայց և այնպէս երկունն էլ զմայլում էին իրանց մտքում երեկւայ հրաշալի դէպքի վրայ: Վերջն էլի Լուարսաբն սկսեց.

—Դարեջա՛ն, չը լինի թէ ջրո՛ւմն էր տեսնում նա, հը՞, դու ի՞նչ կ'ասես:

—Կարելի է որ ճի՛շտ... դու չը մեռնես, հէնց ջրումն է եղել տեսնելիս:

—Ինչ ուզում ես ասա՛, բայց ես այնպէս եմ համոզւած:

—Ասածուն է յայտնի, գուցէ ճիշտ այդպէս լինի:

—Ի՞նչ ասեմ, ես մի այդպիսի կասկած ունեմ:

—Քո արևը, որ այդպէս կը լինի:

—Ի՞նչ ասեմ, խելքս այդպէս կտրեց:

—Իմ սիրոս էլ է այդպէս իմաց տալիս, Լուարսաբի արևը:

—Չը լինի այն էր, որ ցորենի հատիկները ջուրը գցելիս ինչոր շրջաններ էր կազմւում:

—Կարելի է որ այդպէս էր, ճիշտ այդ կը լինէր:

—Ի՞նչ շայտ:

—Քո ասածը:

—Չէ՞ որ ասացի, — վրայ բերեց Լուարսաբը՝ ուրախացած իւր ճիշտ զուշակութեան վրայ. ճիշտ այդպէս պէտք է լինի, թէ չէ այն կինը խօսատանայ չէր, որ այդպիսի հրաշքներ գործէր:

—Այդպէս պէտք է լինի, թէև—մեղայ Աստուծու—ես սատանայութիւն համարեցի:

—Չէ՛, զու չը մեռնես. ի՞նչպիսի սատանայ էր որ պոզեր չունէր: Սատանան պէտք է պոզեր ունենայ:

—Ե՛՛հ, մի՞ թէ այդ ես էլ չը գիտեմ, այնպէս մտքովս անցաւ:

—Հա՛, այդ ուրիշ բան է:

Երկուսն էլ լռեցին, երկուսն էլ համոզեցան որ ինչ որ երէկ՝ գրբացի ներկայութեամբ՝ անհասկանալի էր իրանց, այն այսօր գուշակեցին ու հասկացան:

—Բայց ե՛ս էի զուշակողը, գիտե՞ս, — պարծեցաւ Լուարսաբը: Թէպէտև Գարեշանը սիրում էր Լուարսաբին, բայց և այնպէս նա կամենում էր որ զուշակողի անունը ինքը վայելէ և ոչ թէ Լուարսաբը. մարդս յիմար թէ խելօք՝ միշտ ինքնասէր է:

—Մի՞ թէ ես էլ չէի կարող զուշակել, եթէ ուզէի, — վրայ բերեց Գարեշանը. չէի ուզում, թէ չէ ես երէկ և եթ զուշակած պրծած էի:

—Հիմայ էլ դրա մասին կ'երկարացնես:

—Հաւատա՛, ճիշտ եմ ասում:

—Ե՛՛հ, քեզ հետ խօսուել չի կարելի. ինքը Աողոմոն իմաստուն էլ որ գայ, իսկոյն կ'ասես՝ «ես քեզանից խելօք եմ»: Հիմայ ինչ կը լինի որ այս մի անգամ էլ զու գիջողութիւն անես: Օտար խօսեմ, չէ՞ որ քո մարդդ եմ:

Ել չը գիտեմ, զիջում արեց Գարեշանը թէ ոչ, գիտեմ միայն որ Լուարսաբը խիստ նեղացաւ Գարեշանի բժականորութիւնից:

XIII

Պրբացը շատ համոզեցուցիչ կերպով ամուսիններին հաւատացրեց, թէ նրանք զաւակ պիտի ունենան: Այդ յոյսի դէմ նրանք ամենափոքր կասկած էլ չէին ընդունի: Այդ հաւատը մինչև այնտեղ հասաւ, որ մի գեղեցիկ օր Գարեշան այնպէս կարծեց, թէ փորումը

երեխայ շարժեց: Ինչ ասել կուզի որ ուրախացած իշխանուհին իսկոյն և եթ Նուարսաբին աւետեց:

—Իրաւ շարժւե՞ց, — վրայ բերեց ուրախութիւնից խելքը կորցրած Նուարսաբը:

—Ի՛նչ ես ասում, չարող տանեմ ես... քիչ էր մնում որ ծանրաբարոյ տեղովս ուրախութիւնից թռչկոտէի. բայց իսկոյն յիշեցի որ փորս կարող է աւերւել, — և դու դեռ էլի չե՞ս հաւատում:

—Վո՛յ, հողիդ ուտեմ ե՛ս, ապրես որ չես վեր թռչել, թէ չէ փորդ կ'աւերւէր: Ի՞նչպէս կարողացար այն ուրախութեան մէջ այդքանը միտդ բերել: Իսկ ես — Աստուած վկայ — վեր կը թռչէի և այն էլ այնպէս, որ եթէ վայր դրմփայի, վարունդի պէս կը արաքւէի: Դաւթի աչքը թո՛ղ դուրս գա՛յ. թո՛ղ գայ և պարգայ հիմա՛յ: Ար այդպէս է, մենք այսօր մի լաւ քէֆ անենք, մի լաւ կարմիր գինի բաց անել տանք, որպէս զի մեր որդու կենացը խմենք: Առռո՛ւ, գողաց Նուարսաբը և որովհետև իւր սովորութեան համաձայն նա պառկած էր թախտի վրայ մէջքի վրայ՝ մի ոտը վեր բարձրացրեց և մինչև որ «ուռան» չաւարտեց, ոտը չ'իջեցրեց:

Այդ պատահեց ճաշելու մօտերքը: Բացանել տւին կարմիր գինին և ամուսինները, լի հաւատով թէ ժառանգ պէտք է ունենան և Դաւթենց աչքը պէտք է դրանով հանեն — ճաշի վրայ մի լաւ ուրախութիւն քաշեցին: Շատ զւարթացաւ մանաւանդ Նուարսաբը ու մի լաւ հարբեց: Ելիսարէդն ասում էր թէ Դարեջանը սիրում էր գինի խմել. այդ չը գիտեմ, բայց այն ճաշին նա էլ վայելեց մի երկու դաւաթ: Նուարսաբը նախ կուլ տւեց երեք գաւաթ իրարու վրայ դեռ ևս չը ծնւած երեխայի կենացը և «Ալավերդին» էլ Դարեջանի մօտ դնաց: Թէպէտև սա էլ մի քիչ խմած էր, բայց և այնպէս կանացիութեան պատիւը պահելով, բաժակը վերցրեց, բայց ամբողջը չը խմեց:

—Խմի՛ր, ցաւդ տանեմ, — ասում էր հարբած Նուարսաբը — հիմայ քէֆս մի՛ փչացնիր: Ի՞նչպէս կարելի է որ մեր որդու կենացը չը խմես. ես ու դու էլ որ չը խմենք՝ հապա ո՞վ պէտք է խմի. Աստուած մեզանից կը վիրաւորւի, կասի թէ նրանց որդի եմ տալիս ու նրանք նորա կենացը չեն խմում. մի՛ բարկացնի սղորմած Աստը-

ծուն, հազիւ հազ մի լաւ աչքով է նայել մեզ վրայ: Իմ քէֆն էլ մի՛ խանգարիր, խմիր, թէ ինձ կը սիրես:

Ասաց ու նորից դէմ տւեց նրան բաժակը:

Դարեջանը ընդունեց բաժակը. բայց այնպիսի մի ամօթխածութեամբ, աչքերի խաղով ու համեղ ժպտով, որ ես խնդն գլխի ընկալ թէ իշխանուհին առանց այդ էլ արդէն կոնծած էր: Ընդունեց և կուլտուեց: Մի ծիծաղելի բան էր իշխանուհին. գինին հեղձահեղ նրան կալում էր, թշերը կարմրատակել էին, բերանին կնքւել էր մի ժպտ, որ նրանից չէր հեռանում, ներքևի շրթունքը վայր էր իջել ու բերանից ջուր կաթեցնում,—մի խօսքով Դարեջանը քէֆով էր:

Լուարսարն հարբեց: Արձակեց գինուց թուլացած իւր լեզու սանձը ու սկսեց անխելք անխելք զուրս տալ: Դարեջանը շարունակ գլուխը տմբտմբացնում էր ու ծիծաղում:

—Վախեթի հոգի՛ն սիրեմ ես, —ասում էր հարբած Լուարսարը, լեզուն կապ գցելով, —դա որ չը լինէր՝ այս գինին էլ չէր լինի. այն ժամանակ ես էլ ի՞նչացու կը լինէի. էլ ո՞վ կը չիշէր իմ հուշակած անունը: Եթէ այսօր որ և է տեղ Լուարսար անունը չիշուում է՝ այս գինուց պէտք է շնորհակալ կենամ դորա համար. թէ այսօր ես մարդ եմ՝ ահա՛ այս սև խաղողի հեղուկով եմ մարդ: Իմ չափ խմող ամբողջ Արաստանում չը կայ: Ես որ երգել իմանայի՛ ամբողջ Վախեթի գինին ինձ չէր չաղթի. ցաւն այդ է որ չը գլտեմ, է՛: Երգը գինին մարսել է տալիս, ապա թէ ոչ ուրիշ կողմից ի՞նչս է պակաս. ստամոքսս լաւ խմողի ստամոքս է, մինչև չորս չափ կարող է տանել: Դու խօ չիշո՞ւմ ես այն իմէրէլին որ եկաւ այստեղ, իբրև Դադիանիի «հաւատարմատար»: Նա ոչ թէ «հաւատարմատար» էր— դու չը մեռնես, որ չէ—այլ նրան Խմերեթից զօրով ուղարկել էին այստեղ, ասելով թէ զնա Վախեթ, այնտեղ Լուարսար Քաթարիձէ անունով մի զև մարդ կայ, երանի՛ դու մի նրան հարբեցնես՝ կէս Խմերեթը քեզ կը տանք: Ինձ տեսնելուն պէս, նա հասկացաւ թէ ինչ պտուղ եմ ես, այդ պատճառով իրան «հաւատարմատար» կոչեց, որպէս զի իւր անունը չը կոտորի: Պարծանք չը համարես, բայց իմ անունը մինչև Քուրքաստան է դուրս գնացած, գովասանքս մինչև Խմերեթ հասած: Եւ ես, այս անշնորհք Լուարսարդ, այն տեղն

Հասցրի այն ցանցառ իմերէլին, որ, որ... մի զլուխ իմ անունով էր երգում: Նա ինքն իր բերանով ասաց ինձ. «դե ես դու»: Նա մատու էլ ոլորեց ու ականջիս փսփսաց. «գրաւ ր տարար, կէս Իմերէթը քոնը պէտք է լինի»: Ինչ ասել կուզի, եթէ ես գանգաւ տայի, կէսը դուրս կը բերէի, բայց այն ժամանակ ի՞նչպէս էր պէտք Իմերէթը, քանի որ մեր պապական կալւածներն էլ անտէր էին մնում: Սակայն Հիմայ այլ եւս անտէր չեն մնալու, մատաղ լինեմ ես քո փորիդ, Հիմայ այնտեղ մի փոքրիկ Թաթարիձէ ունիս նստացրած, որ կարծեմ արդէն կարմիր գինու մեջ ձգւում է: Մհ, ցաւդ տանեմ, արի՛ մի այդ քո քնքշիկ շրթունքներդ ծծե՛մ... Հիմայ խօ որդի ունեցանք, ե՛կ մի քիչ էլ դորա հարսանիքի վրայ մտածենք: Գիտե՞ս ինչ, Գարեջան. դու խօ իմաստուն կին ես ու ոչ էլ ես եմ—փառք Աստուծու, տիմար. հէնց որ տասնըորս տարեկան դատնայ թէ չէ, շուտով կը դառնայ, դու մէկ ձեռաց հաշիւի, թէ երբ կը դատնայ—պտակե՛նք: Ինչ հարկ կայ երկար սպասել: Գու խօ անպատճառ մի լեզգ-գինկայ կը պարես, ես էլ, քո արեւը, մէկ այնպէս վեր ու վայր թռչկոտեմ, որ ահագին թող բարձրացնեմ... Գիտե՞ս լետոց ինչ պատասխանեցի ես այն յաղթւած իմերէլին. գնա՛, ասացի, և ուր որ քոնդ ասես՝ այնտեղ էլ իմն ասա՛. իմերէլներին էլ կասես որ, ինչ որ իրանց վայրի խաղողից հիւթ դուրս կը գայ՝ ինձ մի խմելու հերիք չի գայ. ահա՛ մենք այսպիսի մարդիկ ենք, ասացի, կախեթեցիներս: Հապա՞... լա՛ւ եմ ասել թէ չէ, թէ Աստուածդ կը սիրես:

—Լաւ ու պատուական:

—Ուրեմն արի մի անգամ էլ ծծեմ այդ քո ելակի նման թշերդ: Մեր որդու հարսանիքին խօ լեզգինկայ կը պարե՞ս:

—Ի՞նչու չէ:

—Հա՛, քեզ մատաղ լինեմ: Արի, գիտե՞ս ինչ անենք. երևակայե՛նք թէ Հիմայ հարսանիք է. դէհ, հապա... մէկ քո սիրած «ղիդուր»... ¹⁾ ես էլ դորա համապատասխան երգը կ'երգեմ: Թէ ինձ կը սիրես, պարիր, իբրև թէ հարսանիք է: Ազում ես թո՛ղ էզգինկայ լինի, լա՛ւ. դէ՛հ, շուտ... Չուպրի-չուպար, չուպրի-չու-

¹⁾ Կախեթեցոց սովորակար մի պար է, լեզգինկայից տարրեր:

պար, չուպրի Գարեջա՛ն, ուռու՛... աղա՛, ուռու՛... ես կախեթու
հո-ո-զուն մա-ա-տա-ղ լի-ի-նեմ... որ կո-ո-ն-ծում է թա-ա-սով
զի-ինի... ես այն իմերելի... Գաւիթի... աչքը... կուրանայ... ուռ-
ուա՛... Չուում էր այդպէս հարբած Լուարսաբը ու զուրս տալիս
զանազան բաներ, մինչև որ նորա քունը տարաւ այդ զառանցանք-
ների մէջ:

XIV

Մի՞թէ չը պէտք է վերջացնես, — կը հարցնէ ինձ ներացած և
գուցէ բարկացած ընթերցողը: Կնչպէս չէ, կը վերջացնեմ, բայց գի-
տէ՞ք ի՞նչով. նրանով, որ Լուարսաբի բաղդը կը խորտակուի: Եթէ մի
այդպիսի հաստատուն բաղդ կարող է խորտակել՝ այլ ևս ի՞նչ պէտք
է համարել անխորտակելի աշխարհումն, — կը բացականչէ ինձ հետ
միասին վհառած ընթերցողը:

Միմիայն աշխարհս է, ընթերցող, անխորտակելի և մէկ էլ մի
սիրուն, իմաստուն վրացական աւած. «երջանիկ է հայրենիքը, երբ
որդին հօրից շառաջագէմ է»: Ապա թէ ո՞՞ «մի՛ շեղւիր հին ձա-
նապարհից» առածը Չինաստանից է ներս պրծել մեզ մօտ և ինչ որ
չինական գոյն ունի. նա, ինչ ասել կուզի, անպատճառ մի օր
կը խորտակի Աստու և քո ողորմութեամբ, ս'ի՛ հնասէր, բայց և
այնպէս դարձեալ իմ սիրելի, վրացի մա՛րդ...

Անցաւ բաւական ժամանակ և այս ունայն երկրագնդի անընդ-
հատ շարժումը շատ բան փոխեց մայր-երկրի երեսին: Նրանց որդի
չը ծնեց: Գարեջանը մի պտուաւ կին-բժիշկ գտաւ ու սկսեց դե-
ղեր ընդունել: Բժիշկ կինը մի ինչ որ դեղ տւեց, ամբողջ երկու շա-
բաթ խմացրեց ու երբորդին՝ Գարեջանի ոտերը ձգել տւեց: Խեղճ
Լուարսաբը մնաց այրի: Նա միրուք թողեց, սևեր հագաւ և իւր
ամբողջ երջանկութիւնը թաղեց Գարեջանի հետ: Միայն երկու մսի-
թարութիւն մնաց նրան այս լացնատարած աշխարհում. առաջինը՝
ախորժակ, իսկ երկրորդը այն, որ Լամազիստուլին նստեցրած ունէր
իւր ոտերի մօտ, որ մարտում էր իւր պարոնի ոտի թաթն ու ոլոզը
ու այդպիսով քնացնում նրան՝ նորա քունը տանելիս: Այդ էր նրան
միակ սփոփողը, մինչդեռ նորա փառաւոր փորը վայր իջաւ, այն
կարմիր թշերը զեղնեցին, այն խոշոր եզան-աչքերը անախորժ կեր-

պով թառամեցա՛ն, այն երեքծալ կղակը թզան չրի պէս դարձաւ, այն իւր սովորական, իրան միայն յատուկ, ժպիտը դէմքից անհետացաւ—մի խօսքով՝ այն կտրիճ տղամարդը փչացա՛ւ: Վիշտն այնպէս գիտէ: Վերջը, այլակերպութեան տօնի օրը, իւր կնքահայրը, սատանի պէս, կէս լիւր սունկ բերեց նրան ընծայ: Վշտից, զորս զուպատւիրեցեր, մի լաւ լափեց այդ սունկը, աղիքների բորբոքում ստացաւ ու ի Տէր հանդեաւ:

Մեռաւ Լուարսաբը, ինչպէս մեռնում են շատերը մեզանից, որոնք ոչ իրանց ապրելով են մի բան աւելացնում աշխարհին և ոչ մեռնելով՝ պակասեցնում:

Ջնջեց երկրիս երեսից այդ երկու անձնաւորութիւնների կեանքի հետքը: Ի՞նչու էին եկել ու ի՞նչու գնացին. մի՞թէ նրանք կէս դար նորա համար ապրեցան, որ չորս հատ տախտակ ու երեք զազ զետին ձեռք բերէին: Վամ թէ քարի վրայ գրել տային, թէ «մինչև 18... թւականը ապրում էին իշխան Լուարսաբ Թաթքարիձէն ու նորա ամուսին—իշխանուհի Վարեջանը ու յետոյ վախճանեցան»: Իսկ ուրիշ ի՞նչ կարող է մեզ ծանուցանել թէ զրանք մի ժամանակ եղել են ու ապրել այս աշխարհում: «Վարդացո՛ղ, թողութիւն արէք»—զրւած է նորա տապանաքարին: Մի՞թէ կէս դար նորա համար ապրեցան, որ վերջն էլ «թողութիւն» խնդրեն: Ես հիմաչ եմ հասկանում թէ ի՞նչու հնուց ի վեր վրացու տապանաքարի վրայ «թողութիւն արէք» է գրւած լինում: Այդ ներելու և խղճալու սովորութիւնը ունեցել է իւր միտքն ու հիմքը, բայց ես չեմ թարգմանի, ընթերցող. թէ լաւ սրտի ու մտքի տէր ես, ինքդ էլ կարող ես զլիսի ընկնել, իսկ եթէ ոչ՝ ասելն էլ աւելորդ է: Ի զուր պէտք է սիրտդ ցաւացնեմ ու բարկացնեմ, իսկ այդ բարկութիւնը կարող է աչքերդ այնպէս կապել, որ եթէ մի ուրիշի սիրտը քեզանից էլ աւելի ցաւի՝ նրա խօսքերը գաւաճանութիւն կը համարես:

Ես վերջացրի, իսկ դու ինչ ուզես արա՛, ընթերցող: Ուզում ես բա՛ց, երբ կարգաս սոյն պատմութիւնը: Երկուսի՛ փաստերն էլ կարող ես այս գրւածքում գտնել: Եթէ երբևիցէ նայել ես շուրջդ ու տեսածիդ վրայ գատողութիւնդ վարժեցրել, զիտած կը լինես որ յաճախ նոյն և մի նիւթը մէկին ծիծաղացնում է, միւսին լացեցնում: Ես տեսայ մի օր մի պառաւ, աղքատ, մերկ, ոտերը տոպր-

որքած կին: Ո՞վ գիտէ թէ ինչ տեսակ մի դժբաղդութիւնից նա իւր գլուխը արբեցութեան էր տեսել ու այդ արբեցութեան մէջ ընդմիջա կորցրել իւր մարդութիւնն ու ազամորդութիւնը: Նս տեսել եմ թէ ինչպէս քաղաքի աղերքը բռնում էին նրան ու մի հինգ-գրոշանոց տալով՝ պամպուլի սկս խաղացնում: Նս տեսել եմ, որ դրանցից շատերը ծիծաղել են, իսկ մի քանիսն էլ՝ ողորմելի կնոջ այդ օրինակ դրութիւնը տեսնելով՝ իրանց սրտումը լաց եղել: Ո՞վ էր դրանցից աւելի արդարը. ծիծաղողը, թէ լաց եղողը: Երկուսն էլ, որովհետեւ առաջինները միմիայն իրանց աչքով էին տեսնում և աչքի համար, արդարեւ, ծիծաղելի էր: Իսկ միւսները տեսնում էին համ աչքով, համ մտքով, և դեւար թէ մտքում ծիծաղը գար: Աւրեմն երևում է, որ և մի նոյն դէպքը կարող է համ ծիծաղելի համ ողբալի լինել, նայելով թէ մարդն ինչ շտուկութեան տէր է: Եթէ այնքան կամքի ոյժ կ'ունենաս որ ամենազառն ճշմարտութեանն էլ կարողանաս բաց ձակատով նայել ու թշուախն և մոլորածին խղճով՝ այդպիսի ծիծաղելի դէպքերը աւելի ջաճախ լացացնել էլ կը տան քեզ. իսկ եթէ ոչ՝—ծիծաղի՛ր ինչքան սիրտդ ուզի: Ծիծաղի՛ր ու հետն էլ բարկացի՛ր այս դրեւած քի հեղինակի վրայ ու բամբասիր ինձ—չէ՞ որ դու սովոր ես բամբասել—իբր թէ ես դուրսնում եմ վրացութեան, որովհետեւ պատմում եմ քեզ նրա ծիծաղելի գործերը ու չեմ ծածկում մի քանի կարծամիտ հայրենասէրների նման: Գիտեմ, ընթերցող, որ ձեր մէջ, մեր դժբաղդութիւնից, քիչ կը գտնեն այնպիսիներ, որ ճշմարիտ խօսքի վրայ ուշադրութիւն դարձնեն. գիտեմ, բայց և այնպէս կ'ասեմ քեզ երեսիդ, իբրև քեզ սիրող, որ Լուսարսարն և Գարեջանը քո գոգումը են ծնել ու քո ստիկքով մնել: Ուզում ես նեղացիր ինձանից, ուզում ես չէ: Նրբ նրանց վրայ ծիծաղում ես, նոյնն է թէ դիտիդ վրայ ես ծիծաղում: Իսկ երբ լաց լինում—դա լաւ նշան է. երևում է, վշտանում ես, որ մենք այդպէս ենք, երևում է, որ ուղղելու ցանկութիւնդ թեւաւորում է: Ծայ Աստուած, որ այդպէս լինի:

Եթէ ես քեզ սիրում եմ, ընթերցող, այդ նրա համար է, որ չոյս ունեմ թէ ուղղելու մտադրութիւնը այսօր թէ վաղը պէտք է զարթնի քո մէջ: Այդ չոյսը մի՛ խլիր ինձանից, մի՛ կարծիր թէ այս վէպի նպատակն է քեզ բարկացնել. նա ուզում է միայն քեզ ցոյց

տալ—ինչքան որ ինքը կարողութիւն ունի—քո պակասաւոր ու վատ կողմերը, որպէս զի դիտենաս թէ ինչդ պէտք է ուղղես: Մինչև որ հայելու մէջ չը նայես կամ մի ուրիշը չը նկատէ, խօ չես կարող իմանալ թէ դէմքիդ վրայ մի անկարգ բան կայ: Քող այս վէպը հայելի լինի, իսկ ես—եթէ կ'ուզես—նկատողը: Ուշադրութեամբ նայիր մէջը, որպէսզի բան նկատես: Քայց պէտք է այն էլ իմանաս, որ միայն թշնամիդ կարող է ծածկել, եթէ երեսիդ վրայ անկարգ բան տեսնէ, իսկ բարեկամը իսկոյն հայելի կը բերի քեզ համար, որպէս զի ուղղես ու հասարակութեան մէջ չ'ամաչես: Ես էլ քեզ հետ բարեկամի պէս վարեցայ, հայելի բերի: Մի՞թէ պէտք է դրա համար խռովես ինձանից. ի՞նչ անենք թէ հայելիս կոտրած ու բծաւոր դուրս կը գայ. ես տւի այն, ինչ որ ունէի. ինչպէս որ կարողացայ, այնպէս ծառայեցի. բայց եթէ, ի վերայ այսօր ամենայնի, գարձեալ ուղում ես խռոված կենալ—քո կամքդ է: Ես քո խռովելուց չեմ վախենում, այլ միայն այն ժամանակ կը վհատեմ, երբ նկատեմ թէ հրասթափուել եմ քո մէջ, որ դու այն չես եղել ինչ որ ես կարծում էի: Այն ժամանակ ես, ձեռքերս խաչած, միմիայն այս կ'ասեմ՝ ես կանչեցի, իսկ կը լուսանայ թէ ոչ—այդ Աստուծոն է յայտնի: Եթէ դու չը խռովէիր, մենք շուտ կարող էինք գուշակել թէ երբ պէտք է լինէր այդ լուսանալը:

Ուրիշ կողմից ողջ մնաք ու ներողամտութեամբ չիշեցէք ձեր խոնարհ ծառային:



ՅՈՎՀԱՆՆԵՆԿՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Կուրծքս երբեմն եռ է գալիս և յուզում,
Ես մնում եմ անշարժ, ինչպէս մի արձան,
Միտքս թռչում դէպի երկինք և սուզում
Տիեզերքի խորութեան մէջ անսահման:

Ամփոփում է յանկարծ երկիր բովանդակ,
Եւ սիրատենչ կուտի կուրծքին է փարում.
Խոնարհւելով իջնում մինչև ոտնատակ,
Աշխատողի տխուր ճակատը համբուրում:

Յետ է թռչում և մոլորած դեգերում
Քաղցրալուչիկ խոր անցեալի լուռ ծոցում,
Եւ թրթռում արդէն լռած երգերում,
Սառն ու տխուր շիրիմները շօշափում:

Հետաքրքիր ցանկութիւնով թևառած
Ապագայի մթութեան մէջ խարխափում,
Եւ, մի սաստիկ տենչով լեցուն, սաւառնած
Երանութեան սահմանները թևածում:

Թռչում է միտքս,
Կորչում է միտքս,
Եւ չեմ հասկանում՝
Ինչ եմ ցանկանում:

Մ Ի Կ Ր Ո Ւ Ն Ե Ր Ը

Ո. ԲԱՆԱՂԵԱՆԻ

II

Լիբելիս վարդապետութիւնը ֆերմենտացիայի մասին: Պաստէօրի փորձերը: Saccharomyces: Mycoderma acetii: Vibrion: Գեանի ամենանշանաւոր միկրոօրգանից մէկը: Տարափոխիկ հիւանդութիւնների պատճառը: Անդհանուր հայեացք միկրոօրգանի գործունէութեան վերայ:

Մանօթանալով միկրոօրգանների կեանքի հետ, գիտնականները հետաքրքրեցան ալէն դերով, որ կատարում են այդ մանր էակները: Այս ճշմարիտ, ինչ է նշանակում, որ ամեն մի փշացող կամ առհասարակ փոփոխուող նիւթի մէջ գտնուում են մեծ թւով բախտերիւմներ:

Արդ գինին շահարձ սկսում է դառնանալ, քացախակ, մի խօսքով սկսում է խորին կերպով փոփոխուել, վերցնելով այդ գինուցը մի կաթիլ և դիտելով միկրոօրգանի տակ, մենք կը տեսնենք, որ այդ գինին պարունակում է իւր մէջ անթիւ միկրոօրգաններ:

Արդ խաղողի շիրան, այդ քաղցր և թանձր հեղուկը, սկսում է «եփ գար» և երեք շուրս օրից վատու, կորցնելով իւր քաղցրութիւնը և թանձրութիւնը, ստանում է նոր շատկութիւններ, դժւար չէ նկատել, որ այդ փոփոխուող հեղուկի մէջ ներկայ են բազմաթիւ մանր էակներ:

Արդ մի որ և է անասունի դիակ սկսում է լուծուել, արտադրելով անտանելի գազեր, համուշաժ եղէք, որ կը դառնէք այդ դիակի վերայ անհամար բախտերիւմներ և ալլն:

Հարցը նրանումն է թէ արդեօք բախտերիւմները մի որ և է կերպով մասնակցում են նիւթերի վերափոխուել փոփոխութիւններին, թէ ընդհակառակը՝ նրանց ներկայ լինելը բոլորովին պատահական է: Ուրիշ խօսքերով այդ փոփոխութիւնները կարող էին կատարուել առանց միկրոօրգանների, թէ ոչ:

Արդևի վերամանացի քիմիկոս Ալբրիխը, խօսելով նույն հարցի մասին,

վճռողական կերպով չափոնեց, որ վերալիչեալ փոփոխութիւնները բոլորովին անկախ են կենդանի էակների ներկալ լինելուցը: Նորա կարծիքով, միկրոբները պատահմամբ են գտնուում փոփոխուող նիւթերի մէջ:

Ի գէպ է ասել, որ Վիբիսը այնպիսի մեծ ծառայութիւններ էր մատուցել գիտութեանը, նա այնպիսի երեւելի քիմիկոսի հուշակ էր ստացել գիտնականների մէջ, որ նորա կարծիքը իշխում էր գիտութեան մէջ, Նորա կարծիքը մինչև անգամ ջնջում էր միւս գիտնականների մտքերը. սաստիկ վտանգաւոր էր համարուում Վիբիսին հակառակ մտքեր չափոնելը: Այդ էր պատճառը, որ փոփոխուող նիւթերին վերաբերեալ Վիբիսի մտքերը չուսով գրաւեցին բոլոր միւս գիտնականներին: Նորա վարդապետութիւնը դարձաւ, ինչպէս ասում են, գիտութեան վերջին խօսքը:

Այսպէս էր իրերի գրութիւնը, երբ չանկարծ առաջ եկաւ մի գիտնական և համարձակ կերպով իրան չափոնեց իբրև հակառակորդ Վիբիսի վարդապետութեան: Այդ գիտնականը նոյն Պատտէօրն էր, որ մի քանի տարի դրանից առաջ խորտակել էր «ինքնակամ ծագման» թէօրիան: Կարծես այդ մարդուն վիճակած էր իւր բոլոր, կեանքում փչրել մեծ գիտական նախապաշարմունքներ:

Պատտէօրը վէճի հրաւիրեց Վիբիսին, որը և շտապեց ընդունել այդ հրաւերը: Այժմ առանձին կարեորութիւն չը կալ հետեւել այդ վիճաբանութիւնների բոլոր մոմենտներին: Բայց մի քանի գլխաւոր կէտերի վերաջ կանգ առնելը անհրաժեշտ է:

Վէճը գլխաւորապէս վերաբերուում էր այն երևոյթներին, որոնք նկատուում են խաղողի շիրալի կամ գարեջրի շիրալի եփելու ժամանակ:

Քիմիական տեսակէտից փոփոխութիւնը, որ կատարուում է շիրալի հետ եփման ժամանակ, կապանում է հետեւեալ հասարակ իրողութեան մէջ:

Շիրալի մէջ կալ բաւականի շատ շաքար, որի պատճառով հէնց շիրան լինում է քաղցր և թանձր: Նրբ սկսուում է եփումը, շաքարը լուծուում է երկու աւելի հասարակ նիւթերի, այն է ալկոհոլի և ածխաթթւատի: Ուրեմն եփման ժամանակ շաքարը կամայ կամայ անհետանում է, իսկ անհետացած շաքարի քանակութեան համեմատ գոյանում են ածխաթթւատ և ալկոհոլ:

Ածխաթթւատը, դալ լինելով, արագութեամբ դուրս է գալիս հեղուկից: Գուրս թռչող գալը սաստիկ շարժում է հեղուկը ալնպէս, ինչպէս շարժում է գոլորշին՝ դուրս թռչելով եփ եկող ջրից: Այդ արտաքին նմանութիւնն է պատճառը, որ շիրալի փոփոխութիւնը նոյնպէս անւանել են «եփում»:

Այսպէս ուրեմն շաքարից դուացած նիւթերից մնում է հեղուկի մէջ միայն ալկոհոլը, իսկ ածխաթթւատը անհետանում է: Նրբ եփ դալը վերջանում է, այն ժամանակ հեղուկի մէջ ըստ մեծի մասին էլ չի լինում շա-

քար, իսկ վերջինի փոխարէն լինում է ալկոհոլ: Այդ ժամանակից սկսած հեղուկը անւանւում է գինի:

Բայց քիմիայից չափոնի է, որ չաքարը ինքն ըստ ինքեան, առանց արտաքին ուժի, չի լուծուում: Ուրեմն այն ինչ արտաքին ուժ է, որը լուծում է չաքարը շիրալի մէջ:

Ահա այդ ուժն էր, որի մասին տարբեր կարծիքներ էին չափոնում Լիբիխը և Պաստեօրը:

Վաղուց արդէն բոլոր գարեջուր պատրաստողներին չափոնի էր, որ գարեջրի շիրան եփ տալու համար հարկաւոր է շիրալի մէջ ածել մի նիւթ, որին անւանում էին ֆերմենտ:

Ուրեմն եփ գալու պատճառները կամ, աւելի լաւ է ասել, չաքարի լուծման պատճառը պէտք էր որոնել հէնց այդ ֆերմենտի մէջ, որովհետեւ դա էր եփ ածողը:

Երբ սկսեցին միկրոսկոպի տակ քննել եփուող նիւթը կամ ֆերմենտը, տեսան որ նա բաղկացած է անթիւ մանր օրգանիզմներից: Խաղողի շիրալի մէջ նոյնպէս գտան եփման ժամանակ միևնույն օրգանիզմները մեծ քանակութեամբ, թէև այս դէպքում մարդիկ ֆերմենտ չեն աւելացնում:

Ինչպէս արդէն տեսանք, Լիբիխը այն կարծիքի էր, թէ միկրոբները ոչինչ ներգործական դեր չեն կատարում հեղուկի վերօլիչեալ փոփոխութիւնների մէջ: Երբ կարծիքով ֆերմենտը խսկական լուծողն է չաքարի, բայց ֆերմենտը լուծում է չաքարը ոչ թէ այն պատճառով, որ բաղկացած է կենդանի օրգանիզմներից, այլ որովհետեւ ինքը ֆերմենտը ընդունակ է հեշտ լուծել...

Ինչպէս, օրինակ, չարժուող մարմինը, գիպչելով մի ուրիշ մարմնին, շատ անգամ նրան էլ հաղորդում է շարժում, այնպէս էլ լուծող ֆերմենտը ընդունակ է հաղորդել չաքարին լուծելու չափութիւնը:

Ուրեմն, Լիբիխի կարծիքով, շիրան եփ տալու համար հարկաւոր չէ որ անպատճառ ֆերմենտ աւելացնեն. ամեն մի լուծող օրգանական նիւթ ընդունակ է լուծել չաքարը, ուրեմն և ընդունակ է եփում արտադրել շիրալի մէջ:

Իսկ ինչ վերաբերում է կենդանի օրգանիզմներին, նրանք ոչ թէ միայն չեն օգնում եփմանը, այլ մինչև անգամ խանգարում են:

Ահա թէ ինչու մն է կապւում Լիբիխի վարդապետութիւնը:

Պաստեօրը իւր կողմից բազմաթիւ փորձերով ապացուցեց, որ Լիբիխի կարծիքը բոլորովին հեռու է իրականութիւնից: Նա վերցնում էր մի ապակի անօթ, լցնում շիրալով, հեռացնում վերջինից վերօլիչեալ կենդանի օրգանիզմները, (մեռացնելով նրանց եփ տալով հեղուկը կրակի վերայ) և քիտու կողպում անօթը: Այս դէպքում հեղուկի մէջ եփում չէր առաջանում երկար ժամանակների ընթացքում: Բայց երբ բացանելով անօթի բերանը, նա դրում էր հեղուկի մէջ մի չնչին քանակութիւն նոյն օրգանիզմների (որոնք

անւանւում են Saccharomyces), մի երկու օրից փտող հեղուկը սկսում էր եփ գալ:

Պարզ է, որ եփում արտադրողը հէնց նոյն Saccharomyces օրգանիզմն է:

Ուրեմն պատահական չէ ալն հանգամանքը, որ եփման ժամանակ շիրալի մէջ ներկայ են լինում մանր էակները. եթէ չը լինէին այս վերջինները, չէր լինիլ և շաքարի լուծումը, չէր լինիլ շիրալի եփումը:

Բայց հետաքրքրելի է իմանալ, ինչպէս են կարողանում եփում արտադրել շիրալի մէջ վերափոխեալ Saccharomyces օրգանիզմները:

Հետևեալ փաստերը լուսաբանեցին այդ հարցը:

Նս վերև ասացի, որ լինում են աէրոբ բակտերիաներ, որոնք սպրում են օդի օդնութեամբ, և անաէրոբ բակտերիաներ, որոնց համար օդը հարկաւոր չէ: Աչստեղ պէտք է աւելացնեմ, որ լինում են և միջին տեսակի մանր էակներ, որոնք կարող են ապրել և՛ օդի օդնութեամբ և՛ առանց օդի, նախձ շրջապատող սպարմաններին:

Ահա հէնց այդ տեսակ օրգանիզմների թւին պատկանում է և մեզ հետաքրքրող Saccharomyces-ը ¹⁾. Երբ նրան թուլ են տալիս աղատ ապրել հեղուկի երեսին, նա զարգանում է օդի օդնութեամբ, իսկ երբ ընկղմում են նրան հեղուկի խորքերը, ուր նա զրկւած է բոլորովին օդից, նա շարունակում է զարգանալ առանց օդի:

Պատետօրը նկատեց, որ երբ Saccharomyces-ը զարգանում է հեղուկի երեսին, աղատ օդուելով օդից, նա շատ թուլ կերպով է լուծում շաքարը. իսկ երբ նրան զրկում են օդից, ընկղմելով հեղուկի մէջը, ալն ժամանակ նա սկսում է ահաղին քանակութեամբ լուծել շաքարը: Այս փաստը Պատետօրը հետևեալ կերպով է բացատրում:

Երբ Saccharomyces-ը զարգանում է շիրալի երեսին, նա ստանում է իւր շնչառութեան համար հարկաւոր թթւածինը օդից. իսկ երբ նրան զրկում են օդից, նա սկսում է իւել, պոկիլ թթւածինը շաքարից (որը բաղկացած է ածխածինից, թթւածինից և ջրածինից): Իսկ շաքարը կորցնելով իւր թթւածինի մի մասը, սկսում է լուծուել:

Ուրեմն շաքարի լուծուելու պատճառը այդ մանր էակների շնչառութիւնն է:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, Պատետօրի կարծիքները բոլորովին հակառակ են Վիբրիսի վարդապետութեանը. մինչդեռ վերջինս ոչինչ նշանակութիւն չէր տալիս կենդանի էակներին, Պատետօրը ընդհակառակը եփ-

¹⁾ Պէտք է նկատեմ, որ բուսաբանները մի փոքր զանազանում են Saccharomyces-ը բուն բակտերիաներից: Բայց Saccharomyces-ը իւր գործունէութիւնով այնքան նման է բակտերիաներին, որ ինձ անհնարին էր նրան բակտերիաներից բաժանել:

ման երևութները բացառապէս վերադրում է նոյն էակներին: Այս վերջինները, ընկնելով շիրալի մէջ, սկսում են զարգանալ ու բազմանալ, կատարելով իրանց կենսական պահանջները կամ, ինչպէս ասում են, իրանց Ֆիզիոլոգիական պահանջները (օրինակ շնչառութիւնը): Այդ պահանջներին բաւարարութիւն տալու համար կենդանի էակները օգտոււմ են շրջապատող նիւթերից, զլիսառլապէս շաքարից, որը ենթարկւում է իւրին փոփոխութեան:

Ուրեմն այդ մանր գործիչների անթիւ լիզէօնների ենք պարտական, որ կարողանում ենք գինի և գարեջուր պատրաստել ¹⁾:

Այս լուսաբանեց այն գաղափարը, որը դարերի ընթացքում տանջում էր գիտնականներին: Այս ճշմարիտ, մի քանի դար մեզնից առաջ սատիկ հետաքրքրում էր գիտնականներին եվուսմբ: Քանի-քանի փորձեր արւեցան եվուման պատճառները գտնելու, բայց բոլորը մնացին անաջող մինչև վերջին ժամանակները, երբ վերջապէս Պաստէօրին աջողւեց բացատրել այդ երևութը:

Այդ առաջին օրինակն էր, որ մեծ փոփոխութիւնը բնութեան մէջ վերադրում էին մանր էակների ազդեցութեանը:

Բայց գուցէ միայն Saccharomyces-ը չէ, որ ընդունակ է հիմնաւորապէս փոփոխել շրջապատող նիւթերը: Գուցէ բնութեան մէջ լալն կիրպով տարածւած միկրօրքներից շատերը նոյնպէս մեծ դեր են կատարում, արտադրելով իրանց շուրջը այս կամ այն փոփոխութիւնները: Մի խօսքով, գուցէ միկրօրքների դերը բնութեան մէջ այնքան էլ կրաւորական չէ, ինչպէս կարծում էին շատերը:

Ահա այն հարցը, որը գրաւում էր Պաստէօրի բոլոր ուշադրութիւնը: Նա ձեռնարկեց նորանոր հետազօտութիւնների, որոնք շուտով ցոյց տւին, որ նորա ենթադրութիւնները անհիմն չէին: Գիւտերը սկսեցին հետեւել մէկը միւսին զարմանալի արագութեամբ:

Ո՞րն է լալտնի, որ եթէ գինին դնենք տաք սենեակում բաց անօթի մէջ, նա մի քանի օրից վատ սկսում է քայտալել: Քիմիական հետազօտութիւնը ցոյց է տալիս, որ այդ դէպքում գինու ալիօճուրը փոքր աւ փոքր անհետանում է, իսկ նորա փոխարէն գոլանում է նոր նիւթ-քայտալաթիւտատ: Ի՞նչպէս է կատարւում այդ փոփոխութիւնը, ինքն ըստ ինքեան, թէ ընդհակառակը այստեղ էլ միևնոյն բանն է կատարւում, ինչ որ լինում է շիրալի փոփոխութեան ժամանակ:

Վաղուց արդէն նկատել էին, որ քայտալտող գինու մէջ ներկայ են լինում շատ մանր էակներ, մեզ արդէն ծանօթ Saccharomyces-ից անհամաստ աւելի մանր: Պաստէօրը հիմնաւոր փաստերով ապացուցեց, որ այդ

1) *Steu Pasteur, Etudes sur la bière, Paris, 1876.*

միկրոքնների ներկայ լինելը քաղցածու գիծու մէջ պատահական չէ. խորին փոփոխութիւնը, որին ենթարկուած է գիւնին, կատարուած է չէնց նոյն օր-
գանդիցմների ազդեցութեան տակ:

Ինչպէս Saccharomyces-ը փոփոխուած է չիրալի շաքարը ալկոհոլի և
ածխածխածնաթթուի, այնպէս էլ Mycoderma aceti (ալգպէս ևն անւանուած
քաղցածուցն միկրոքնները) փոխուած է գիւնու ալկոհոլը քաղցածուցն:

Նրկար կը անկր կանգ առնել այն բոլոր գիւտերի վերայ, որոնք չա-
ջորդեցին Պաստէօրի հետազոտութիւններին:

Բացատրեցին շատ փոփոխութիւններ, որոնք կատարուած են գարե-
ջրի, գիւնու և ուրիշ հեղուկների մէջ: Բանից դուրս եկաւ, որ ալգ փոփո-
խութիւնները կատարուած են նոյնպէս զանազան բակտերիաների ազդեցու-
թեան տակ: Փոքր առ փոքր պարզուած էր բակտերիաների գործունէու-
թեան մութը պատկերը:

Կալ մի երևոյթ այնքան տարածւած, որի հետ ամենքը ծանօթ են-
Չը նալած դրան, ալգ երևոյթի բնաւորութիւնը որչափ միայն վերջին ժա-
մանակները: Մեզ չալտնի է, որ երբ մեռնուած է մի որ և է կենդանի, նորա
դիակը չի մնում անփոփոխ, ալ սկսուած է մի քանի օրից չետու լուծել,
հոտել: Այս երևոյթը կատարուած է նոյնպէս բակտերիաների ազդեցութեան
տակ: Ալգ միկրոքնները, որոնք սաստիկ մանր են և անւանուած են վիբրիօն
(vibron), սպասուած են մի որ և է գիւտի, որ թափուեն նորա վերայ և լուծեն,
արտադրելով անտանելի զաղեր:

Նոյնպէս հետաքրքրելի է այն գիւտը, որը արեցին երկու Փրանսիացի
գիտնականներ՝ Շլէօզենգ (Schloesing) և Միւնց 1877 թւին: Ահա ինչու մն
է կալանուած ալգ գիւտը:

Յալանի է, որ բոլորի գարդացման համար հարկաւոր են ի միջի
ալցոց բորակածնալին (աղոտալին) նիւթեր. և թէ ալգ նիւթերը չը լինեն՝
գետնի մէջ բոլորը չեն կարող մեծանալ, զարգանալ: Բոլորի ալգ կարիքին
բաւականութիւն տալու համար երկրագործները և ալգագործները պարար-
տացնում են իրանց հողերը անասունների աղբով, որը պարունակում է
իւր մէջ և աղոտալին նիւթեր: Բալց ալգ նիւթերը գտնուած են աղբի մէջ
մի ալգպիսի գրութեան մէջ, որ նրանցով բոլորը ուղղակի օգտուել չեն
կարող: Հարկաւոր է, որ նրանք բոլորովին փոփոխուեն, ընդունեն նոր ձև,
որպէս զի կարողանան պիտանի լինել բոլորի համար:

Հէնց ալգ տեսակ փոփոխութիւն իսկապէս կատարուած է գետերի
մէջ և ալգ բանը գիտնականները վաղուց գիտէին. բալց թէ ո՞վ է ալգ
փոփոխութիւնը կատարողը՝ ալգ չը գիտէին: Շլէօզենգ և Միւնց ցոյց տւին,
որ ալգ մեծ և օգտակէտ փոփոխութիւն կատարողը մի տեսակ միկրոք է
(bacillus nificans), որը անագին քանակութեամբ տարածւած է գետնի
վերևի շերտերում: Հասկանալի է, որ ալգ մանր գործիչները մեծ ծաւա-

լուծիւն են անում մարդկանց, որովհետև, առանց դրանց, բոլորը շատ տեղ կը մեռնէին առանց կերակուրի:

Վերջին ժամանակները սաստիկ աղմուկ բարձրացրին հետազոտութիւնները, որոնք վերաբերում են տարափոխիկ հիւանդութիւններին: Բուրոյովին անսպասելի էին այդ հետազոտութիւնների հետևանքները: Բանից դուրս եկաւ, որ տարափոխիկ հիւանդութիւններ արտադրողը նոյնպէս միկրոբներ են: Այս վերջինները, մի որ և է կերպ ընկնելով մարդու կամ անասունների մարմնի մէջ, սաստիկ բազմանում են և բոլորովին քայքայում են նրանց առողջութիւնը: Իմ նպատակներից դուրս է խօսել տարափոխիկ հիւանդութիւնների մասին բժշկական տեսակէտից. այստեղ մեզ կարող են հետաքրքրել միմիայն վերոյիշեալ հիւանդութիւնները արտադրող միկրոբները և նրանց կեանքը:

Այս հարցի ուսումնասիրութիւնը սկսում է մօտաւորապէս 20 տարի մեզինից առաջ: Անհնարին էր այդքան կարճ միջոցում բացատրել այս հարցին վերաբերեալ բոլոր երևոյթները. զի ոչ շատ բան անորոշ է և սպասում է նոր հետազոտութիւնների: Այդ պատճառով տարափոխիկ հիւանդութիւնների մասին ես կը խօսեմ համառօտ կերպով:

Այդ հիւանդութիւնների գլխաւոր չտկանիչը նրանց վարակիչ լինելն է: Հիւանդութիւնը արագութեամբ փոխում է, տարածում է հիւանդ անասունից առողջների մէջ: Ահա ինչպէս է կատարւում վարակիչ հիւանդութիւնների փոխելը: Ես վերև արդէն ասացի, որ այդ հիւանդութիւնների պատճառը բակտերիաներն են, որոնք տարածւած մարմնի մէջ, գլխաւորապէս արևնի մէջ: Եթէ քննենք, կը տեսնենք որ նա լցւած է միկրոբներով: Անասունների մեռնելուց չեսույ, միկրոբները շուտով դիակից տարածւում են գետնի մէջ, խոյ գետնից օդի և ջրի մէջ: Սղը, շնչառութեան ժամանակ, մտնելով առողջ անասունների թոքերի մէջ, չալանի բան է, տանում է իւր հետ և իւր միջի միկրոբներին: Այդ բոլորից սկսած, անասունը վարակւած է: Իսկ ջուրը տարածում է վնասակար բակտերիաներին ստամոքսի մէջ: Բացի դրանից, միկրոբներ մտնում են անասունների մարմնի մէջ և ուրիշ միջոցներով օրինակ կերակուրի հետ:

Կան մի ակոսակ միկրոբներ (*bacillus anthracis*), որոնք մի սաստիկ վտանգաւոր տարափոխիկ հիւանդութիւն են արտադրում անասունների մէջ: Այդ հիւանդութիւնը մեծ վնասներ է հասցնում անասնապահութեանը Ռուսաստանում, Իտալիայում և Ֆրանսիայում:

«Լինում են տարիներ, երբ միմիայն Ֆրանսիան կորցնում է այդ հիւանդութիւնից 15-ից մինչև 20 միլիօն ֆրանկ»¹⁾:

1) Տես. Валери Радо—Луи Пастеръ, переводъ съ франц. Ի դէպ է տեսել, որ այդ գեղեցիկ գրքոյից շատ տեղեկութիւններ եմ վերցրել յողւածիս համար:

Այս հիւանդութիւնը, որը Ռուսաստանում անւանում է (сибирская чума) (սիբիրական ախտ), պատճառում են երկար, թեւի նման և անշարժ միկրոբներ:

Բայց ինձ կարող են հարցնել, թէ ինչպէս են ապացուցանում, որ անպատճառ ալը միկրոբներն են հիւանդութեան պատճառը:

Այդ բանը ապացուցանելու համար երկու միջոց կալ. 1) քննելով միկրոսկոպի օգնութեամբ վերոյիշեալ հիւանդութիւնից մեռած անասունի արիւնը, մենք կը տեսնենք, որ վերջինս լցած է երկար միկրոբներով: 2) եթէ վերցնենք ալը միկրոբները պարունակող հեղուկներից մի քանի կաթիլ և սրտիենք առողջ անասունի կաշւի սակ, առողջ անասունը կը հիւանդանալ միևնոյն հիւանդութիւնով:

Ահա ինչպէս է տարածւում շատ անգամ ալը հիւանդութիւնը: Հիւանդութիւնը պատճառող միկրոբները տարածւած են լինում դաշտերում և արօսատեղերում խոտերի վերայ: Անասունների արածելու ժամանակ միկրոբները խոտի հետ մտնում են նրանց ստամոքսը և ալըպէս վարակում:

Հիմալ մի փոքր կանդ առնենք մի ուրիշ սարսափելի վարակիչ հիւանդութեան վերայ. խօսքս խոլերայի մասին է:

Կերմանացի երևելի գիտնական-Վոխը գտաւ խոլերան արտադրող միկրոբները (*Spirillum cholerae asiaticae*): Վերջիններս շատ նման են ստորակէտին ալը պատճառով նրանց շատ անգամ անւանում են Վոխի ստորակէտ:

Այս երկու օրինակը բաւական են դաղափար տալու համար տարափոխիկ հիւանդութիւնների էութեան մասին: Կ'աւելացնեմ միմիայն, որ բարակացաւը, տիֆը և միւս վարակիչ հիւանդութիւնները բոլորն բացատրւում են ինչպէս սիբիրական ախտը և խոլերան, այսինքն նրանք նոյնպէս արտադրութիւն են դանազան միկրոբների:

Այդպիսով ահագին հետաւանքներ ունեցաւ միկրոբների կեանքի ուսումնասիրութիւնը: Կ'ինկարծութեան, երկրադործութեան և բժշկականութեան համար բացւեցան նոր և լայն հորիզոններ:

Առաջ, երբ վերև նկարագրւած բաղմամբիւ երևութիւնների իսկական պատճառը չապնի չէր, գիտնականները շատ անգամ լինում էին անորոշ գրութեան մէջ, չ'իմանալով թէ ինչ միջոցի դիմեն այս կամ այն երևութիւնը փոփոխելու համար: Եւ ալը բոլորովին բնական է, որովհետև մի որ և է երևութի փոփոխութեան համար ըստ մեծի մասին հարկաւոր է իմանալ նրա իսկական պատճառը:

Բերեմ մի օրինակ ալը միտքը լուսաբանելու համար:

Առաջ երբ գինեգործը չը գիտէր գինու քացախիւնը պատճառը, նա չէր էլ կարողանում գրական միջոցներ հնարել ալը մնասակար փոփոխութեան առաջն առնելու համար: Բանը բոլորովին ուրիշ է այժմ, երբ արդէն գիտենք, որ քացախիւնը պատճառը կենդանի կակներ են:

«Եթէ այդ փոփոխութեան պատճառը միկրոբներն են, ասում էր Պաստէօրը, ուրեմն մենք կարող ենք նրա առաջն առնել, ոչնչացնելով միկրոբներին»:

Այդ նպատակին հասնելու համար Պաստէօրը հետեւեալ միջոցին դիմեց. նա սկսեց տաքացնել գինով լիքը շիշերը: Բարձր ջերմութեան ազդեցութեան տակ սպանւեցին քացախեցնող միկրոբները. լետու Պաստէօրը կամաց կամաց սառցրեց շիշերը: Փորձը ցույց տուաւ, որ այդ գինին իրաւ էլ չի քացախում շատ տարիների ընթացքում, եթէ միայն շիշերը լաւ կողպած են:

Այժմ այս միջոցը ընդհանրացրած է և լայն կերպով գործադրւում է գինին և գարեջուրը պահպանելու համար զանազան վնասակար փոփոխութիւններից:

Այդ միջոցը ի պատիւ հնարողի անւանում են pasteurisation.

Այդպէս ուրեմն միկրոբները բնութիւան մէջ սնդորձ, կրաւորական դեր չեն կատարում. ընդհակառակը նրանք մեծ փոփոխութիւններ են անում իրանց շուրջը: Թէև այդ օրգանիզմներից ամեն մէկը այնքան չնչին է, որ միայն միկրոսկոպը կարող է տեսանելի անել նրան մեր աչքերի համար, բայց երբ նրանք գործում են խմորվին, երբ անթիւ միկրոբների ուժերը միանում են, այն ժամանակ գոյանում է մի վերին աստիճանի սարսափելի ուժ:

Մտարեւոյն խոլերայի միկրոբներին. որքան քիչ ժամանակ է նրանց հարկաւոր ամբողջ քաղաքներ և գաւառներ աւերելու համար:

Այդ էակներից շատերը ունեն, եթէ կարելի է աչքով տեսնել, իրանց մասնադիտութիւնը: Մի տեսակ օրգանիզմներ (saccharomyces) լուծում են շաքարը ալիոհոլի և ածխածնածառի, միւսները (mycoderma vini) լուծում են ալիոհոլը ածխածնածառի և ջրի, երրորդների ազդեցութեան տակ լուծւում են գիակների բարդ օրգանական նիւթերը և այլն:

Նրանց գործունէութեան մէջ մի բան ընդհանուր է, այն է որ նրանք (միկրոբները) ըստ մեծի մասին լուծում են բարդ օրգանական նիւթերը աւելի հասարակ մասերի:

Յույց տալու համար, թէ ինչ մեծ գիտնական նշանակութիւն ունի այդ փաստը, ես ստիպւած եմ մի փոքր հեռանալ գլխաւոր նիւթից և մի քանի խօսք ասել մի կողմնակի երևոյթի մասին, այն է բույսերի կերակրելու մասին: Աէաք է նկատել, որ այդ բանում բույսերը սաստիկ զանազանում են անասուններից: Մինչդեռ վերջինները կերակրւում են բարդ օրգանական նիւթերով (ալբումին, շաքար...), բույսերի կեանքը պահպանելու համար նոյն նիւթերը անօգուտ են:

Բույսերը կերակրւում են միմիայն հասարակ նիւթերով. նրանց հա-

մար հարկաւոր է զլիաւորապէս ածխաթիւատըր և ջուրը: Ածխաթիւատըր ստանում են բոյսերը օդից, իսկ ջուրը և մի քանի հասարակ միներալալին նիւթերը՝ գետնից: Ահա այդ հասարակ նիւթերից են կազմում բոյսերի մէջ բարդ օրգանական նիւթերը, որոնք հարկաւոր են անասունների համար: Կլիաւորապէս այդ բարդ նիւթերից են կազմւած բոյսերը և անասունները:

Հասկանալի բան է, որ բոյսերը, ստանալով օդից և գետնից հասարակ նիւթերը և փոխելով նրանց բարդ բաղադրութիւնների, քիչացնում են նոյն հասարակ նիւթերի քանակութիւնը գետնի և օդի մէջ: Այս վերջինները փոքր առ փոքր աղքատանում են հասարակ նիւթերով: Եւ եթէ դեռինք ու օդը մի որ և է կերպ լետ չը ստանալին նրանցից խլած հասարակ նիւթերը, կը գար այնպիսի ժամանակ, երբ էլ չէին կարող զարգանալ և ապրել նոր բոյսեր: Կերակուր չը լինելու պատճառով, բուսականութիւնը կ'անհետանար երկրագնդի երեսից, կ'անհետանալին նոյնպէս և կենդանիները, որովհետև վերջիններս չեն կարող ապրել առանց բոյսերի: Մի խօսքով բոլոր օրգանական աշխարհը կը ոչնչանար, եթէ հնար չը լինէր նորից վերադարձնել օդին և գետնին նրանից խլած հասարակ նիւթերը:

Բաղաւորապէս նրանց վերադարձնելու հնարը կա, և այդ բանը մեզ մասամբ արդէն չափոնի է: Մենք վերստեանք, որ նրանք քաղքալում են, լուծում են բարդ օրգանական նիւթերը աւելի հասարակ մասերի:

Քաղքալելով կենդանիների և բոյսերի դիակներում գանուղ բարդ նիւթերը, միկրոբները նորից ազատում են այն հասարակ նիւթերը, որոնց բոյսերը իրանց կեանքի ժամանակ խլել էին օդից և գետնից: Պէտք է աւելացնեմ, որ քաղքալելու գործը միայնակ չեն կատարում միկրոբները. նրանց հետ միասին լուծում են բարդ նիւթերը բորբոսներ (սպորանգիան) անւանուղ բոյսիկները: Ազատւած հասարակ նիւթերը նորից սկսում են կերակրել զարգացող բոյսերին, փոխելով վերջինների մէջ բարդ նիւթերի, իսկ բոյսերի և կենդանիների մահից լետու, միկրոբները թափւում են դիակների վերա, և քաղքալելով նրանց, նորից ազատում հասարակ նիւթերը: Եւ այդպէս կրկնում է անվերջ:

Ահա ինչ հսկայական դեր են կատարում այդ մանր էակները բնութեան մէջ: Ուրեմն միկրոբների գործունէութիւնից կախւած է բոյսերի, կենդանիների և նոյն իսկ մարդկանց գոյութիւնը...

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՎԷՊ

ՄԱՐԿ ՏՈՒԷՆԻ

I

ԳԱՂՏՆԻՔԻ ԲԱՆԱԼԻՆ

Գիշեր էր: Մեծ վաղեմի աւատական ամրոցում խաղաղութիւն էր տիրում: Վերջանում էր 1222 թւականը: Ամրոցի ամենաբարձր աշտարակներից մէկի ծայրում միայնակ մի լոյս էր վառւում: Այդ տեղ այդ պահուն կատարում էր ընտանեկան զաղտնի մի խորհուրդ: Խստաբարոյ հին բարոն Ալիզենշտայնը նստած էր բազկաթռուի վերայ, խորատուզած մտածմունքների մէջ: Յանկարծ նա քնքոյշ ձայնով ասաց.

—Սիրելի աղջիկս:

Մի ազնիւ կերպարանքով երիտասարդ, որ հազած էր սոնից մինչև զլուխ ասպետական զգեստ, պատասխանեց.

—Ի՞նչ է, հայրիկ:

—Սիրելի աղջիկս, հասել է ժամը, որ ես պէտք է բանամ այն գաղտնիքը, որ վրդովել է քո մատաղ կեանքը: Թող յայտնի լինի քեզ, որ այդ գաղտնիքի արմատը գտնւում է այն հանգամանքներում, որոնք ես քեզ այժմ կը բացատրեմ: Իմ Ուլրիխ եղբայրս Բրանդենբուրգեան զուքան է: Իմ հայրը մահւան անկողնում կապեց, որ եթէ Ուլրիխը որդի չունենայ, թագաւորական գահը պէտք է անցնի իմ սերունդիս՝ այն ենթադրութեամբ, որ ես որդի կ'ունենամ: Իսկ եթէ մեզնից ոչ մէկը որդի չի ունենալ, այլ միայն աղջիկներ, գահը կը մնայ Ուլրիխի աղջկանը՝ եթէ միայն նա անբիծ

բարոյականութեան տէր լինի: Հակառակ դէպքում՝ պէտք է ժառանգի իմ աղջիկը, եթէ նոյնպէս անարատ անուն պահպանի: Աստի ես և իմ պառաւ կինս Չերմեանոյ սրտով շատ ենք աղօթել, որ Ամենակարողը պարգևի մեզ արու զաւակ: Բայց մեր աղօթքները չը լսեցին: Մուսկիտի գու մեզ զաւակ: Ես յուսահատուած էի. ես տեսնում էի, որ թանգազին դանձր իմ ձեռքից դուրս է գալիս, դիւթական ցնորքը իբրև մի ծուխ կորչում է: Իսկ ես ինչպէս մեծ յոյսեր ունէի! Աւրիխ եղբայրս հինգ տարի վայելել էր ամուսնական կեանք. բայց դեռ չէր ունեցել իւր կնոջից ո՛չ արու և ո՛չ էգ ժառանգ:

«Բայց ես շուտով հաշուեցի, որ դեռ բոլորը կորած չէ: Իմ գլխում ծագեց հետեւեալ փրկակար ծրագիրը: Դու ծնեցիր կէս դիշերին: Միայն բժիշկը, դպեակը և վեց աղախիները դիտէին քո սեռը: Մի ժամ էլ չանցաւ, որ ես նոցա բոլորին էլ կախել տւի: Հեռեւեալ առաւօտը բոլոր բարոնները իմանալով, որ ինձ որդի է ծնել, որ պէտք է ժառանգ դառնայ Բրանդենբուրգեան դքսութեան, ուրախութիւնից խելքները կորցնում էին: Գաղտնիքը պահուած էր շատ խիստ կերպով: Քո մօրաքոյրը դարձաւ քո դպեակը և այնուհետև այլ ևս ոչինչ վախենալու տեղիք չունէինք:

«Երբ որ քո ինն տարին լրացաւ, Աւրիխին էլ աղջիկ ծնեց: Մենք որոմեցինք և թէև սիսեցինք մեզ միսիթարել նորանով, որ կարմրուկը, ծաղիկը, բժիշկները և ուրիշ մանկասպան աղէտները իրանց անելիքը կանեն, բայց միշտ էլ յուսախաբւում էինք: Աղջիկը ապրում էր և մեծանում կարգին... Բայց ի՞նչ ենք շատ հոգս անում: Մի՞թէ գու մեր որդին չես. մի՞թէ մեր սիրելի Կոնրադը չէ ապագայ դուքսը: Քեզ՝ չը նայելով, որ քսանեութ տարեկան աղջիկ ես, սիրելիս, երբէք ուրիշ անուն չենք տւել, այլ միայն Կոնրադ:

Այժմ հասել է այնպիսի ժամանակ, որ եղբայրս ուժասպառ է դառնում և իրան թող է զգում: Պետական հոգսերը նորան չափազանց չոգնեցնում են, ուստի նա ցանկանում է, որ դու դնաս նորա մօտ և իրապէս դառնաս դուքս, թէկուզ այդ անունը դեռ ստացած չը լինես: Մառաներ քեզ համար պատրաստ են. հէնց այսօր երեկոյեան ճանապարհ ընկի՛ր:

Բայց լաւ լսիր ասածներս և մտքումդ պահիր իւրաքանչիւր-

խօսքս: Մեզանում մի օրէնք կայ, որ նոյնքան հին է, որքան ինքը Քերմանիան, որ եթէ մի որ և է կին բազմի դուքսական գահի վերայ, թէկուզ մի վայրկեան նախ քան հրապարակապէս օծելիլ ժողովրդի առաջ—նա ենթարկուած է մահաւան պատժի: Զը մոռանաս այս նախազգուշութիւնը: Մի՛ զուրս դալ խոհեմութեան սահմաններից, քո վճիռները յայննիր նախարարական աթոռից, որ գտնուած է գահի ստորոտում: Այդպէս եղի՛ր մինչև օծելիլ և բոլորովին ապահովանալի: Թէև դժւար հաւատալի է, որ երբ և իցէ քո սեռը իմացւի, բայց և այնպէս պէտք է իմաստնաբար վարուես այս խաբուսիկ և խորամանկ կեանքում, զգոյշ տանելով գործերդ:

—Ոհ հայր: Մի՛թէ այդ պատճառով իմ կեանքը կզել է մի խարդախութիւն: Մի՛թէ կեանքիս միակ կոչումն է եղել իմ քրոջը նորա բարձր իրաւունքներից զրկել: Խնայի՛ր ինձ, հայր, խնայի՛ր քո հարազատ զաւակին:

—Ի՞նչ, չարածձի: Իմ քեզ թագ տալու փոխարէն՝ ա՛յդ ես ինձ պարզեւ ապխտ: Հօրս գերեզմանով երգում եմ, որ քո արաստեքը իմ ուրախութեան սազ չի գալիս: Իսկոյն ճանապարհ բնկիր դուքսի մօտ գնալու և Աստուած մի արասցէ իմ նախագիծներին դուզէ՛մ գնաս:

Բայց, ընթերցող, վերջ տանք այս բացատրութիւններին: Բաւական է ասեմ, որ ազնիւ և համակրելի օրիորդի ոչ աղաչանքը, ոչ համոզելը և ոչ արտասուքը մի լաւ հեռեւանքի չը հասցրին: Ոչ մի բան աշխարհքումն չէր կարող տեղից շարժել յամատ ծեր բարոն Ալիւզենշտայնին: Ի՞նչ անէր աղջիկը՝ ճրառւմ սրտով՝ նա զուրս եկաւ ամրոցի դռներից, մութ գիշերով, շրջապատուած զինուած իշխանների սասկետական գնդով և ծառաների մի փայլուն խմբով:

Աղջկայ գնալուց յետոյ՝ ծեր բարոնը նստել էր լուռ մի քանի ժամանակ և յետոյ դարձաւ իւր կնոջը հեռեւեալ խօսքերով՝

—Հանդամանքները մեզ համար լաւ են յարմարում: Ահա արդէն երեք ամիս է անցել այն օրից, որ ուղարկել եմ ճարպիկ և գեղեցկադէմ կոմս Ղեցինին իմ եղբորս աղջկայ մօտ, Կոնստանդնուպոլիս մօտ, մի երկիւղալի յանձնարարութիւնով: Եթէ նորա գործը չը չաջողւի, մեր բանը շատ էլ լաւ չի լինիլ: Իսկ եթէ յաջողւի, այն ժամանակ ոչ մի ոյժ չի կարող այլ ևս արգելք լինել, որ մեր աղ-

ջիկը դքսուհի ճանաչի, եթէ մինչև անգամ չար բազդը նորան վճռած լինէր երբէք դուքս չը լինելու:

— Իմ սիրտը, նկատեց կինը, մուշկ նախազգացումներից սաստիկ նեղանում է. բայց դեռ կարող է լաւ լինել:

— Դէհ, հոգս մի անիլ, սիրելի ամուսինս: Թող ազուաները ինչքան ուզում են, այժմ կրկուան: Գնանք քնելու և երազելու Բրանդենբուրգի և մեր ապագայ մեծութեան մասին:

II

ՅՆԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՏԱՍՈՒՆՔՆԵՐ

Նախորդ գլխում պատմած դէպքից վեց օր յետոյ՝ Բրանդենբուրգի տէրութեան փառաւոր մայրաքաղաքը փայլում էր ռազմական շքեղութիւնով և թնդում էր հաւատարիմ ժողովրդի ուրախ աղաղակներից: Քաղաքը և ժողովուրդը սօսում էին երիտասարդ Կոնրադի, իբրև թագաժառանգի, գալուստը:

Մերունի դուքսի սիրտը լքցւած էր ցնծութեան զգացմունքով, որովհետև Կոնրադի գեղեցիկ գէմքը և նուրբ շարժողութիւնները առաջին անգամից իսկ գրաւեցին ծերունու սէրը:

Պալատի ընդարձակ դահլիճներում խոնւած էին պալատականները և զմայլւած ողջունում էին Կոնրադին: Բոլոր շրջապատողներից բուրում էր մի այնպիսի ուրախութիւն և երջանկութիւն, որ Կոնրադի տրտմութիւնը և երկիւղները փարատեցին և անվրդով քաւականութեան զգացմունքի փոխեցին:

Բայց պալատի հետու օթեաններից մէկում տեղի ունէր մի բոլորովին ուրիշ տեսարան: Լուսամուտի մօտ կանգնած էր դուքսի միակ աղջիկը, դքսուհի Կոնստանցիան: Նորա աչքերը կարմրած էին և ուռած և աղի արտասունք էին թափում: Օրիորդը միայնակ էր: Յանկարծ նա սխեց հեկեկալ և բարձրաձայն արտասանեց՝

— Խարդախ Գեցի՛ն. նա ինձ խաբեց. փախաւ և հրաժարեց դքսութեան տիրոջուից: Առաջ ես չէի հաւատում նորա գնալուն. բայց այժմ, աւաղ, կասկածել անկարելի է: Մհ, իսկ ես ինչպէս սաստիկ, ինչպէս խելագար կերպով, նորան սիրում էի: Ես սիրաս նորան աւի, թէև հաստատ գիտէի, որ իմ հայրը, դուքսը, երբէք

Համաձայն չի լինիլ՝ ինձ մարդու տալ նորան: Այո, ես նորան սիրում էի. իսկ այժմ... այժմ ատում եմ: Այո՛, ատում եմ հոգուս խորքից: Ոհ, Տէր Աստուած, ի՞նչ պէտք է լինի իմ վիճակը: Ես կորայ, անդարձ կորայ: Ես կը խելագարեմ:

III

ԳՕՐԾԸ ԲԱՐԴԻՈՒՄ Է

Անցան մի քանի ամիսներ: Բոլոր հպատակները միաձայն գովում էին երիտասարդ Կոնրադի կառավարչութեան ընդունակութիւնը և փառաբանում էին նորա դատական իմաստութիւնը, նորա զթառաստ վճիռները և այն մեծ համեստութիւնը, որ նա ցոյց էր տալիս իւր այդ բարձր դիրքում:

Ծերունի դուքսը շուտով յանձնեց նորան բոլոր գործերը և վերին խորհրդում նստում էր ինքը առանձնակի և հպարտ ինքնագոհութեամբ լսում էր, թէ ինչպէս է նորա ժառանգը առաջին նախարարի աթոռից դատավճիռներ կարդում դուքսի անունով:

Նստ պարզ էր, ի հարկէ, որ մի այդպիսի սիրւած մարդ, ինչպէս Կոնրադն էր, որ փառաբանւած էր ամենից և շրջապատւած էր անհամեմատ աւելի մեծ յարգանքով, քան միւս մեծամեծները,— պէտք է իրան երջանիկ զգար: Բայց—զարմանալի բան—նա երջանկութիւն չէր իմանում: Եւ գիտէք ինչո՞ւ: Արովհետեւ նա նկատեց, որ զքսուհի Կոնստանցիան սկսել էր նորա վերայ սիրահարել: Բոլոր մնացած աշխարհի սէրը նորա համար ուրախութիւն էր, իսկ սամիայն վտանգ էր սպառնում: Բացի այդ՝ նա նկատեց, որ ծերունի դուքսն էլ արդէն զուշակել է իւր աղջկայ զգացմունքները և արդէն մտածում էր ամուսնացնելու մասին: Կոնստանցիայի տխրութիւնը օրեցօր նւազում էր, նորա աչքերում սկսում էր յոյսը և վերակենդանութիւնը ցոլալ աւելի և աւելի և նորա վաղուց ժպիտը կորցրած շրթունքներում սկսում էր խաղալ ուրախութիւնը:

Կոնրադը զլուիւր կորցրեց: Նա անիծում էր իրան, թէ ինչու նա անձնատուր լինելով իւր բնական հակումներին, սկսեց մօտենալ իւր սեռակից անձին: Նա ցանկացել էր այդ ընկերութեան մէջ իւր տխուր, տաղտկալի ժամերը մոռանալ. բայց անսպասելի վտանգ առաջացաւ դորանից:

Այժմ նա սկսեց իրան հեռու պահել իւր հօրեղբոր աղջկանից: Բայց այդ հանգամանքը աւելի վատացրեց բանը, որովհետեւ, որչափ նա հեռու էր փախչում, այնքան աւելի Կոնստանդիան նորան աշխատում էր հանդիպել: Առաջ Կոնրադը զարմանում էր այդ բանի վերայ, բայց յետոյ սկսեց վրդովմունքի մէջ ընկնել: Աղջիկը նորան կատարելապէս հալածում էր, նորան հեռուում էր, աշխատում էր նորա մօտը լինել ամեն ժամ և ամենուրեք, օր ու գիշեր: Բայց աղջիկը աւելի էր անհանգիստ, քան կարելի էր կարծել: Մի գաղանիք կար, որ դեռ ոչ ոքի յայտնի չէր:

Այսպիսի յարաբերութիւններ երկայն շարունակել չէին կարող: Բոլոր շրջապատողները նկատում էին և միմեանց ականջին քչիւում էին: Մերունի դուքսը սկսեց անհանգստանալ: Խեղճ Կոնրադը երկիւղից իրան կորցրել էր և մի սուէրի էր նմանում:

Մի անգամ, երբ Կոնրադը դուքս էր գալիս իւր սենեակից, որ գտնուում էր կից պատկերազարդ դահլիճին, Կոնստանդիան նորան հանդիպեց և բռնելով նորա ձեռքը, բացականչեց՝

—Անդուժ, ինչու էք դուք ինձնից փախչում: Ես ինչ եմ ձեզ արել, կամ ասել, որ կորցրել եմ ձեր նախկին բարեկամութիւնը, որ ունէիք դէպի ինձ: Կոնրադ, ինձ միք ատի՛ւ, այլ խղճացէք իմ տանջած սիրտս: Ես քեզ սիրում եմ, Կոնրադ: Այժմ ուզում եմ՝ ինձ ատիր, բայց իմ խօսքը արդէն աւել է, իմ բերանից թոկ է:

Բայց Կոնրադը մնաց համր, ինչպէս մի փայտ: Կոնստանդիան մի րոպէ տատանմունքի մէջ կանգնած նայում էր, յետոյ իւր կերպ բացատրելով Կոնրադի լռութիւնը, յանկարծ փայլեց վայրենի ուրախութիւնով և փարելով Կոնրադի վզին, ասաց՝

—Դու համաձայն ես, դու հաւանում ես: Դու կարող ես ինձ սիրել, դու ինձ սիրելու ես: Ա՛խ, ասա, դու իմն ես լինելու, իմը սիրելի Կոնրադ:

Կոնրադը մի ծանր հոգոց հանեց: Նորա երեսը հիւանդոտ դուրստութիւն տուցաւ և նա սկսեց զողալ, ինչպէս աշնան ծառի տերև: Վերջապէս, յուսահատ կերպով մերժեց խեղճ աղջկան հետևեալ խօսքերով.

—Դուք չը դիտէք, ինչ էք պահանջում: Դա երբէք, երբէք կարելի բան չէ...

— Եւ ինքը փախաւ, ինչպէս մի յանցաւոր, [Թողնելով դքսուհուն մեծ զարմանքի մէջ: Մի րոպէ անցած Կոնստանցիան սկսեց լալ և հեկեկալ իւր եղած տեղում. իսկ Կոնրազը նոյնը անում էր իւր սենեակում: Երկուսն էլ յուսահատուած էին: Երկուսն էլ պետում էին, որ շուտով զաղտնիքները բացւելու են վտանգաւոր կերպով:

Կոնստանցիան փոքր առ փոքր ուշքի եկաւ, զրսուեց և ինքն իրան այս մտածմունքներին եկաւ:

— Ի՛նչպէս ես դիմանամ, երբ տեսնում եմ, որ այն րոպէին, երբ ես կարծում էի, [Թէ իմ սէրը հայեցրել է նորա սառցապատ սիրտը, նա արհամարհում է իմ զգացմունքը: Ես նորան ատում եմ: Նա ինձ դէն հրեց, նա, սիրւածը, դէնը շարտեց ինձ, ինչպէս սոփքով քշում են շանը:

IV

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐ

Փամանակը անցնում էր: Բարի դուքսը կրկին վշտերի մէջ ընկաւ: Կոնստանցիային և Կոնրազին այլ ևս միասին տեսնող չէր լինում: Դուքսը մոտտանջւում էր:

Ամենակարող փամանակը կամաց-կամաց դարձրեց Կոնրազին նորա թշերի կարմրութիւնը, նորա հայեացքի զւարթութիւնը և նա շարունակում էր զեկավարել բարձր կառավարութեան գործերը լուսաւոր, անդադար ամրացող խելքով:

Յանկարծ մի օտարոտի քչփռոց սկսեց տարածւել պալատից դուրս: Նա քանի գնում էր մեծանում էր և բարձրաձայն դառնում: Բաղաքի բամբասաւերները արդէն էլ ձեռք չէին քաշում և ասէկոսիներին մեկնութիւններ էին տալիս: Կուրը ծայրէ ի ծայր անցաւ բոլոր դքսութիւնը: Իսկ լուրը ահա ինչ էր.

«Դքսուհի Կոնստանցիան երեխայ է ծնել»:

Երբ որ Կոնրազի հայրը, բարոն Կլիւզենշտայնը իմացաւ այս լուրը, նա երեք անգամ շարժեց իւր փետրազարդ սաղաւարթը և բացականչեց:

— Կեցցէ դուքս Կոնրազը: Այսուհետև թագը նորա փերաց ապահովւած է: Դեցինը—ապրի. նա իւր յանձնարարութիւնը լաւ կատարեց և թշուառականը արժանի է իւր վարձատրութեան:

Եւ նա տարածեց այս լուրը ամեն կողմ: Եւ քառասունութ ժամից յետոյ նորա կալւածների բոլոր ժողովուրդը պարում էր և երգում և, ի պատիւ այդ մեծ գործի, կազմեց ճրագալոյց և այդ բոլորը գոռոզ և երջանիկ բարոն Կլիզբենշտայնի հաշուով:

V

Ս Ա Ր Ս Ա Փ Ե Լ Ի Ա Ղ Է Տ

Պէտք է մեծ դատաստան լինէր: Բրանդենբուրգի բոլոր իշխանները և բարոնները ժողովւած են դուքսի պալատի դատաստանական ատենանր: Բոլոր տեղերը, որտեղ կարելի էր նստել կամ կանգնել, բռնւած են:

Կոնրադը—հագած բոսորագոյն ծիրանին սպիտմակ աքիսորթ շրջանակով—նստած էր աւագ նախարարի աթոռի վերայ, իսկ նորա երկու կողմից պետութեան ծայրագոյն դատաւորները:

Մերունի դուքսը խիստ հրամայել էր, որ իւր աղջկայ դատաստանը կատարւի առանց կողմնապահութեան, իսկ ինքը սրտի վշտից անկողին պառկեց: Նորա օրերը հաշւած էին: Խեղճ Կոնրադը շատ խնդրեց, որ նորան ազատեն մի այնպիսի դատատանից, որտեղ պէտք է քննւի նորա հօրեղբոր աղջկայ յանցանքը. բայց նորա աղաչանքը իզուր անցաւ:

Այդ բոլոր բազմամարդ ամբոխի մէջ ամենափշտալի սիրտը—Կոնրադինն էր: Իսկ ամենաուրախը—նորա հօր սիրտն էր: Հայրը՝ աղջկանից զաղտնի՝ եկել էր կանգնել և սպասում էր իւր տան վիճակւած ուրախութիւնը տեսնելու:

Երբ հարկաւոր յայտարարութիւնը արին և բոլոր պահանջւող ձևականութիւնները կատարեցին, դատաստանի մեծ նախագահը արտասանեց.

— Յանցաւոր, ոտքի կանգնիր:

Դժբաղդ դքսուհին վերկացաւ և կանգնեց առանց քողի ահագին ամբոխի առաջ: Նախագահը շարունակեց.

— Օգոստոսփառ դքսուհի, մեր տէրութեան մեծ դատաւորների առաջ յայտարարւած է և ապացուցւած, որ ձեր բարձրութիւնը ամուսնական սուրբ կապից դուրս երեխայ էք ծնել, որի հա-

մար մեր երկրի հին օրէնքը սահմանել է մահւան պատիժ, եթէ միայն նորին բարձրութիւնը, մեզ կառավարող դուքսը և հրամայող բարի Կոնրադը չեն ներիլ ձեզ բարձրագոյն վճռով: Յանձնեցէք ձեզ նորա զթասրտութեան:

Կոնրադը զողալով մեկնեց գաւազանը: Այդ վայրկեանին նորա կանացի սիրտը լքցւեց կարեկցութիւնով դէպի շարաբազդ յանցաւորը և նորա աչքերում երևացին արտասուէքներ: Նա արդէն ուզում էր բերանը բանալ և խօսել, երբ դատաստանի նախագահը շտապով յայտնեց նորան.

— Աչ այտոեղ, ոչ այտոեղ, ձերդ բարձրութիւն: Օրէնքը պահանջում է, որ դքսի տան անդամները դատավճիռ կարդալը, ում և վերաբերելիս լինի, կատարեն գահի բարձրութիւնից:

Սարսափը պատեց խեղճ Կոնրադի սիրտը — և նորա հօր երկաթեայ մարմնով անցաւ մի սարսուռ: Եւ ահա ինչու:

Կոնրադը չէր թագադրւած: Այդ վարմունքով նա ուրեմն պէտք է իսպառակէր գահը: Նա տատանւում էր և երկիւղից զունատում: Բայց պէտք էր ծիսակատարութիւնը պահպանել: Կոնրադի վերայ էին դարձրած շրջապատողների զարմացած հայեացքները: Եթէ նա շարունակի տատանել՝ այդ հայեացքները կասկածաւոր կը դառնան: Նա բարձրացաւ գահի վերայ. առաջ մեկնեց իւր գաւազանը և արտասանեց.

— Յանցաւոր: Մեր օգոստափառ Տէր, Աւրիխի, Բրանդենբուրգեան դուքսի անունով՝ ես կատարում եմ ինձ վերայ դրւած բարձր պարտականութիւնը: Աւշադրութեամբ լսեցէ՛ք իմ խօսքերը: Մեր հայրենիքի հին օրէնքով, եթէ դուք կը թագցնէք ձեր յանցանքի գործակցին և չէք յայտնիլ դատաստանին, դուք անխուսափելի կերպով կ'ենթարկուէք մահւան պատժի: Զիջեցէ՛ք այս սպառնալիքին և ազատեցէ՛ք ձեզ քանի ուշ չէ: Յայտնեցէք ձեր երեխայի հօր անունը:

Բոլոր ժողովականներին տիրեց մի այնպիսի խոր լռութիւն, որ կարելի էր կարծես սրտերի բաբախումը լսել: Այդ ժամանակ դքսուհին հանդարտ շարժեց իւր աչքերը ատելութիւնով, և մատը ուղղելով դէպի Կոնրադը, ասաց.

— Ահա այս մարդն է:

Կոնրադին սպառնացող սարսափելի վտանգը, որի դէմ առնելու

Համար նա միջոց և յոյս շունէր, նորա վերայ այնպէս մի սառն դող բերաւ, որ կարծես մահուան պաղութիւնն էր:

Ի՞նչ երկրային ոյժ կարող է այժմ նորան փրկել:

Մեղադրանքը հերքելու համար, նա պէտք է իրան մասնի, որ նա կին է. իսկ չը թագադրուած կնոջ, որ յանդգնել է բարձրանալ դքսական գահը—սպասում է պատիժ: Մի վայրկեանում Կոնրադը և նորա կատաղի ծեր հայրը ուշքից զնացին և գետնին զարկեցին:

Այս սարսափելի, խճճուած վէպի վերջը չի կարելի գտնել ո՛չ այս, ո՛չ մի որ և է ուրիշ գրքում, ո՛չ այժմ, ո՛չ երբ և իցէ սպասուած:

Բանն այն է, որ ես իմ հերոսիս (կամ հերոսուհուս) զրել եմ մի այնպիսի բացառիկ կամ անել զրութեան մէջ, որ էլ չը զիտեմ թէ ինչպէս կարող եմ նորան հանել այդ զժւարութիւններից, և ուստի գերադասում եմ ձեռքերս լւանալ այս զործում և թողնել զո՛հին (այսինքն հերոսիս, կամ հերոսուհուս), որ նա ինքը զուրս պրծնի, կամ մնայ էլի այնտեղ, ինչպէս ինքը կը ցանկանայ: Ի հարկէ՛ սկզբում ես կարծում էի թէ այս փոքրիկ զժւարութիւնը ես հեշտ կը յաղթեմ. բայց բանը ուրիշ կերպ զուրս եկաւ:

ՄԻԽԱԼ ԻՐԻԵՒԻՉ ԼԵՐՄՈՆՏՈՎ

Նորա մահւան յիսնամեակի առիթով

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Մինչև յիսնական թւականները Լերմոնտովի զլիսաւոր գնահատողը Ռուսաստանում եղած է Բելինսկին: Յիսնական թւականներից դէսը սկսում է բանաստեղծի հասարակական գնահատութիւնը: Այնուհետ քանի գնաց՝ աւելի և աւելի մեծացաւ նորա նշանակութիւնը քննադատների աչքում, և այժմ Լերմոնտովը ամենայն իրաւամբ համարւում է Ռուսաստանի առաջին բանաստեղծը Պուշկինից յետոյ: Այդ հասարակական գնահատութեան հետևանքը եղաւ 1889 թ. Պետրիգորսկում հիմնւած Լերմոնտովի արձանը, որ կառուցւեց ամբողջ Ռուսաստանից ժողովւած նւիրատուութիւններով: Այժմ էլ, սոյն տարւայ 15-ին յուլիսի, լրանում է առաջին յիսնամեակը նորա մահւանից դէսը: Այդ առիթով ես կամենում եմ մի քանի խօսք ասել անւանի պօէտի մասին՝ որոշելու համար նորա բանաստեղծական տաղանդի ոյժը և որդիսութիւնը և նորա տեղը սուսայ գրականութեան պատմութեան մէջ: Այդ բանը, ես կարծում եմ, ցանկալի է մանաւանդ այն պատճառով, որ նորա հեղինակութիւնների բովանդակութիւնը շատ և շատ մօտիկ է մեր, կովկասցիներին սրաին, որովհետև իւր նշանաւոր գրւածներին նիւթը նա վերցրել է ուղիղ Կովկասի կեանքից և բնութիւնից: Վե՞տ երկար ժամանակ Լերմոնտովը կը մնայ Կովկասի ամենաշնորհալի երգիչը: Բացի դրանից, նա շատ ծանօթ է մեր հայ հասարակութեան, նորա բազմաթիւ հեղինակութիւնների հայերէն թարգմանու-

Թիւնների շնորհիւ: Կարելի է ասել մինչև անգամ, որ ոչ մի ռուս գրողի շարադրութիւններ այն թւով թարգմանւած չեն հայերէն, որքան Աերմոնտովի գրւածները ¹⁾:

Բայց նախ աշխատենք, որքան կարելի է, բանաստեղծի կեանքի մէջ որոնել այն սլաշմանները, որոնք որոշ ուղղութիւն սուին նորա բնածին մեծ ընդունակութիւններին:

Աերմոնտովը ծնեց Մոսկւայում 1814 թ. նորա հայրը սպայ էր, բաւականին անհոգ և զւարճասէր մի մարդ, իսկ մայրը—Թոյլ բնաւորութեան տէր մի կին: Բայց այն տանը, ուր ծնեց բանաստեղծը, կար մի անձնաւորութիւն, որի կամքն էր կառաւարում ամբողջ ընտանիքը. դա պօէտի մեծ մայրն էր, որք և այրի կալածատէր, թէպէտ հասկացող, բայց չափազանց խտասիրտ և ինքնասած մի կին: Նորածին մանկան կրթութիւնը նա վերցրեց իւր վերայ, հեռացրեց նորան ծնողների ազդեցութիւնից և վարձեց նորա համար մի գերմանուհի դպչեակ:

Այս բանին դէմ չը կացաւ ո՛չ բանաստեղծի մայրը, որ սովոր էր ամեն բանում հպատակել իւր մօրը, ո՛չ էլ հայրը, որին զուցէ ուրախութիւն էլ պատճառեց այն հանգամանքը, թէ որդու կրթութեան գործը առնուով է իրանից, և այսպիսով ուրեմն նորան միջոց է տրւում իւր զւարճութիւնների ետեւից ընկնել: Գուցէ հօր վերաբերմամբ այտոեղ կար մի այլ պատճառ, այդ պարզորոշ յայտնի չէ: Նաու կարելի է, նա յօժարակամ ետ կացաւ իւր գաւակի կրթութիւնից այն պատճառով, որ ինքը՝ այնքան էլ մեծ կարողութեան տէր չը լինելով՝ անկարող էր կատարել իւր հայրական բոլոր պարտականութիւնները: Ինչ և իցէ, մանուկը մեծացաւ տատի ձեռքի տակ: Աերջինս տեղափոխեց Մոսկւայից իւր կալւածքը, Քարխան գիւղը, այնտեղ բնակելու համար: Երկու տարուց յետոյ մեռաւ բանաստեղծի մայրը: Հայրն էլ այդ միջոցներին ապրում էր իւր կալւածքում և միայն երբեմն գալիս էր Քարխան որդու տեսութեան:

¹⁾ Հարկէն թարգմանւած են. «Демонъ», «Маскарадъ», «Пророкъ», «Блѣтъетъ парусъ одинокій», «Три пальмы», «Дума», «У вратъ обители святой», «Ангель», «Вѣтка Палестины», «Воздушный корабль (Չաղ-լիցի), թարգմանւում է— «Герой нашего времени».

Մեծ մօր քմահաճութիւնները և խտասիրտ վարմունքը ստորազրեանքների հետ, այն սառ ընդունելութիւնը, որ նա ցոյց էր տալիս ապագայ պօետի հարազատ հօրը, լաւ հետքեր չը պէտք է թողնէին մանուկ բանաստեղծի սրտում, և իրաւ նա երբէք իւր կեանքում չը կարողացաւ սիրել իւր տատին:

Այսպէս ուրեմն ծնւեց թէ չէ մանուկը, առաջ եկան ընտանեկան անկարգութիւններ, որդու կեղծ դրութիւնը ծնողների վերաբերմամբ. որդու սիրտը դատարկ մնաց հօր ու մօր շերմ ու կաթոզին սիրուց, դադարկ տեղը սակաւ առ սակաւ սկսեց բռնել մի այլ զգացում—առաջին անբաւականութիւնը: Դժգոհութիւնը հետզհետէ, կաթիլ կաթիլ պիտի լցնէ և թունաւորէ բանաստեղծի սիրտը, որ տեղից ժամանակով, ինչպէս շատրւան, դուրս պիտի ցայտեն անբաւականութեան շիթերը: Բայց բարեբախտաբար, ինչպէս ասացի, նորա տատը հասկացող և ուսման գնահատող էր, նա վարձեց իւր թռուան համար դաստիարակներ, որոնց շնորհիւ ապագայ բանաստեղծը դեռ շատ վաղ սկսեց սիրել ընթերցանութիւն և սովորեց մի քանի եւրոպական լեզուներ:

Այսպէս ահա երկու տարբեր պայմաններ արդէն սկզբից որոշեցին Լերմոնտովի բնաւորութիւնը: Մի կողմից մեծ մօր տանը փարթամ արիստոկրատ կեանքը, տատի խիստ յարաբերութիւնները հպատակների հետ, մօր վաղաժամ մահը, հօր բացակայութիւնը և իւր կեղծ դիրքը նորա վերաբերմամբ, նորա քմահաճութիւններին բաւականութիւն տալը ծառաների կողմից—այս բոլորը զարգացրեց բանաստեղծի մէջ ինքնասիրութիւն, քմահաճութիւն և միևնոյն ժամանակ դժգոհութիւն շրջապատող մարդկանցից: Միւս կողմից էսթետիքական-գրական կրթութիւնը ծնեցրեց նորա մէջ սէր դէպի գրականութիւն, գրական ճաշակ և ազնիւ մարդկային ձգտումներ: Այս ուղղութեամբ ահա սկսեց զարդանալ Լերմոնտովի բնաւորութիւնը: Այժմ հասկանալի է թէ ի՞նչու Բեյլինսկին և Բօլենշտեյնը, գերմանացի յայտնի բանաստեղծը և Լերմոնտովի նշանաւոր գնահատողներից մէկը, գտնում են վերջինիս բնաւորութեան մէջ մի տեսակ երկճիւղղութիւն, որ կայանում է նորանում, թէ պօետը միացնում էր իւր մէջ եաստիրութեան և քմահաճութեան հետ ազնիւ հպարտութիւն և ազնիւ ձգտումներ: Այս հանգամանքն է բացատրում

նորա սիրալիր, բարեկամական շարաբերութիւնը մէկի հետ և կձու, վիրաւորիչ վերաբերմունքը միւսների հետ: Աչքի առաջ ունենալով Լեւոնտովի այս տեսակ ծայրայեղ բնաւորութիւնը՝ հասկանալի է դառնում այն բանը թէ ի՛նչու նորա կեանքում մի քանի անգամ տեղի ունեցան մենամարտութեան դէպքեր: Մի բան ևս պէտք է յիշել այստեղ բանաստեղծի մանկական կրթութեան՝ սոցմանները լրացնելու համար, այն է՝ նորա ծանապարհորդութիւնը Կովկասում: Նորա մեծ մայրը իւր հիւանդոս թոռան տարաւ Պետրոգորսկ բժշկելու համար: Կովկասի վիթխարի ձիւնապատ լեռները, սրնթաց գետ ու փոսկները, շքեղ ու ձոխ բուսականութեամբ պճնաւած հովիտները, բնակիչների ազատ անվհեր հողին մեծ տպաւորութիւն արին բանաստեղծի վերայ: Եւ այս տպաւորութիւնները՝ ութ տարի չանցած՝ պիտի իրականանային և, ինչպէս փայլուն աղամաններ, պիտի շղզային նորա բազմաթիւ բանաստեղծութիւնների մէջ:

Այժմ՝ դառնանք Լեւոնտովի դպրոցական կրթութեանը: Երբ նա տասներկու տարեկան դարձաւ, տատը նորան տւեց Մոսկւայի համալսարանի ազնւական պանսիոնը, ուր նա մնաց մօտ հինգ տարի կիսազիշերթիկ: Այստեղ նա սովորում էր շատ լաւ և վերջնական քննութեանը ստացաւ ընծայ: Յետոյ նա մտաւ համալսարան, ուր մնաց միայն երկու տարի: Մի ինչ որ անսխորժ պէպք, որ տեղի ունեցաւ բանաստեղծի և պրոֆեսորի մէջ, պատճառ եղաւ նորան համալսարանից արձակելուն (1832 թ.): Ապա նա մտաւ իւնկերների զինւորական դպրոցը և երկու տարուց յետոյ (1834 թ.) աւարտեց ուսումը սպայի աստիճանով:

Բայց դպրոցական մթնոլորդը ունեցա՞ւ արդեօք մի որոշ կրթիչ ազդեցութիւն Լեւոնտովի վերայ: Դժբախտաբար, ո՛չ այնքան: Ո՛չ պանսիոնում, ո՛չ զինւորական ուսումնարանում չկար առաջադէմ գաղափարներով տոգորւած մի շրջան, որ կարողանար լաւ ուղղութիւն տալ նորա բնաւորութեանը և ընդլայնել նորա աշխարհահայեացքը: Թէպէտ համալսարանում կար մի այդպիսի շրջան, բայց բանաստեղծը նորա ազդեցութեանը չ՛ենթարկեց, ինքն իրան հեռու պահեց նորանից. ընտանիքում ստացած արիստոկրատական կրթութիւնը իւր կնիքը խորը դրոշմել էր նորա բնաւորութեան վերայ: Բայց եթէ նա մի բան զուրս բերեց դպրոցից, այդ էլ ինքնակրթու-

թեան շնորհիւ էր: Նա սիրում էր հեռանալ ընկերներից, առանձնանալ և լիովին տրեւել ընթերցանութեան և մտածմունքների: Այլ թէ դասատան վարժապետները, այլ Պուշկինի և Բայրնի շարադրութիւններն են եղած զլուսաւորապէս Լերմոնտովի դաստիարակ-ուսուչիցները նորա զպրոցական կեանքում:

Աւսումը աւարտելուց յետոյ 1834 թ-ից մինչև 1837 թ. Լերմոնտովը՝ զուսարի աստիճանով սկսում է վարել աղմկալից, բայց բաւականին դադարկ կեանք զւարձասէր մարդկանց շրջանում: Այդ միջոցներին ընթերցող հասարակութեան շատ չնչին փոքրամասնութեան էր յայտնի Լերմոնտովը, իբրև «Հաջի-Աբրէք» պօէմայի հեղինակ (1835). բայց երբ 1837 թ. սպանւեց Ռուսաստանի հռչակաւոր բանաստեղծը, Լերմոնտովը իսկոյն լոյս ընծայեց իւր նշանաւոր ոտանաւորը «На смерть Пушкина», որ զարմանալի արագութեամբ տարածւեց ժողովրդի մէջ: Այս բուռն զգացումների բանաստեղծութեան վերջին տողերը զրգօեցին բանաստեղծի դէմ բարձր դասակարգը, և այս հանդամանքը եղաւ նորան Կովկաս արքտրելու պատճառը: Այդ թւականից դէսը սկսում են լոյս տեսնել նորա հեղինակութիւնները, և Լերմոնտովի անունը բերանից բերան է անցնում ընթերցող հասարակութեան մէջ: Նոյն տարին նա թոյլաւութիւն ստացաւ վերադառնալ Պետերբուրգ մեծ մօր ջանքերի շնորհիւ: Բայց այն դադարկ շրջանը, որի մէջ բանաստեղծը վասնում էր իւր կեանքը, վերջ ի վերջոյ բոլորովին տաղտակացրեց նորան. նա վճուեց թողնել ծառայութիւնը և տրեւել գրական պարասպմունքներին: Բայց ազգականների թախաձանքի շնորհիւ՝ դարձեալ անփոփոխ մնաց նորա զրութիւնը: 1840 թ. մեկամարտութեան համար նորան կրկին արքտրեցին Կովկաս: Իսկ 1841 թ. 15 յուլիսի Լերմոնտովը սպանւեց Պետրոգորսկում և զոհ դնաց մեկամարտութեան մի սպայի հետ:

Լերմոնտովը սկսեց գրել շատ վաղ: Ինչպէս արդէն լիշեցի, նորա վերայ մեծ ազդեցութիւն ունեցաւ Պուշկինը, որին նա սկզբում ձգտում էր նմանել: Բայց միևնոյն ժամանակ պատանի բանաստեղծի մէջ կար մի բան, որ զարգանում և առաջ էր գնում բոլորովին անկախ Պուշկինից, բոլորովին այլ ճանապարհով, քան որով գնում էր «Յւզիկի Օնէզիկի» հեղինակի մուսան: Լերմոնտովի պատանեկան ոչ այնքան յաջող ոտանաւորներում պարզ նշմարւում են նորա բանա-

ստեղծութեան յատուկ մի քանի բնորոշ գծերը. նորա բայրնական դժգոհութիւնը կեանքից և շրջապատող հասարակութիւնից և առհասարակ նորա մռայլ աշխարհայեացքը՝ մելամաղձոտ, տխուր տողերով արտայայտւած:

Ես կը բերեմ այստեղ մի քանի կտորներ Լերմոնտովի պատանեկան ոտանաւորներից, որոնք ցոյց են տալիս թէ ո՞րքան լուրջ խորհուրդներ են զբաղեցնում տանսէհինգ տարեկան բանաստեղծի միտքը:

Къ чему глубокия познанія, жажда славы,
Талантъ и пылкая любовь свободы,
Когда мы ихъ не можемъ употребить!

И сердцу тяжело, и душа тоскуетъ...

Средь бурь пустыхъ томится участь наша ¹⁾.

Միւս կողմից այս սկզբնական ոտանաւորների մէջ նկատուում է Լերմոնտովի բանաստեղծութեան մի ուրիշ բնորոշ կէտը — նորա նոյնպէս բայրնական եռանդուն, անհանգիստ եղանակը՝

Такъ жизнь скучна, когда боренья нѣтъ

..... и понять

Я не могу, что значить отдыхать. ²⁾

Ես ասում եմ «բայրնական» ոչ այն մտքով թէ այստեղ երևում է անզլիացի պօչտի ազդեցութիւնը, ո՛չ — մինչև այդ ժամանակը Լերմոնտովին զուցէ յայտնի էլ չէր «Չայլդ—Հարօլդը», ուր կայ մի այսպիսի տող թէ «հանգիստը դժոխք է կարող հոգու համար» ³⁾ — այլ ես ասում եմ «բայրնական» այն դիտաւորութեամբ, որ ցոյց տամ թէ Լերմոնտովի տաղանդը ունի Բայրնի հանճարին շատ նման յատկութիւններ, ամենևին անկախ այս վերջինից:

Այսպէս են ահա Լերմոնտովի քնարերգութեան առաջին ձայները: Բաց քանի գնում, բանաստեղծը աւելի և աւելի ենթարկւում է Բայրնի ազդեցութեանը: Բայրնի մէջ նա սկսում է տեսնել նոյն իւր դժգոհութիւնը կեանքից և շրջապատող հասարակութիւնից, հիւ-

¹⁾ В. Острогорский. „Мотивы Лермонтовской поэзии“.

²⁾ Նախ սեղից:

³⁾ Брандесъ. „Байронъ“.

սիսային հանձարի քնարից նա սկսում է լսել իրան շատ ծանօթ մեղամաղձոտ ձայներ: Այնուհետև նորա բանաստեղծութեան եղանակները առաւել պարզւում են, տխրութիւնը առաւել որոշւում է և հասնում յուսահատ յուետետութեան: Եւ այսպիսով ահա Լերմոնտովի ստեղծագործութեան առաջին շրջանի՝ զրեածները դրոշմւում են նոյն կնիքով, որով դրոշմւած են լորդ-բանաստեղծի հեղինակութիւնները առհասարակ:

Ժամանակակից սերունդը և առհասարակ մարդկութիւնը իւր ամբողջ էութեամբ պայծառ նշոյլներ չեն տալիս բանաստեղծին պայծառ ապագային հաւատալու: Նորա ապագան մութ է և դատարկ, նա անտարբեր է դէպի շարն ու բարին, վաղորօք ծերացած և բուռնաւորւած գիտութեան թոյնով և կասկածանքներով, նա կ'անցնի՝ մի հատ օգտակէտ հեռք չը թողնելով իւր ետևից („Дума“): Իսկական վեհ հոգին միայն տաղտկանում և տխրում է աշխարհում („Ангель“): Գեղեցիկ և քնքոյշ բնութիւնը փճանում և ոչնչանում է կոպիտ մարդկանց ձեռքում („Три пальмы“): Մարգարէն, առաքինութեան քարոզիցը, հալածւում է մարդկանցից, նորան ծաղրում և քարկծում են, նորա խօսքերը մնում են ձայն բարբառոյ չանապատին: („Пророк“): Ձր կայ մշտական հաստատուն սէր և բարեկամի սիրփիլ: անկեղծ ձայն („И скучно и грустно“): Ատուծոյ անէծքը և նզովքը ծանրացել է մարդկային վիճակի վերայ, և ընկած մարդկութեան էմբլեմը—Պէւր—մոլորւած ու տխուր աստանդում է աշխարհից աշխարհ՝ աշխատելով հանգիստ և ինքնամոռացութիւն զանել, բայց այսպիսով միայն թունաւորում է մարդու ամենաբջանիկ բոսէները և խանգարում նորա սրբազան անդորր հանգիստը („Демон“): Իւր ստեղծագործութեան առաջին շրջանում Լերմոնտովը ուրեմն մօտենում է այն տեսակ բանաստեղծներին, որոնց մասին Ներոպայում ասում են «Համաշխարհային թախծի երգիչներ»¹⁾, որոնց թւին պատկանում են Ներիպիդէս, Բայրն, Լենաու, Հայնէ, Լէօպարդի և այլն: Այդ այն թախիժն է, որ փիլիսոփայութեան մէջ արտայայտւեց Շոպենհաուէրի մուշլ աշխարհահայեցողութեան մէջ: Լերմոնտովի թախիժը չ'ունի այն փիլիսոփայական խորութիւնը և լայնութիւնը,

¹⁾ Н. Стороженко. „Поэзия мировой скорби“.

որ յատուկ է Բայրնին. նորա թախիծը վերջերում սկսեց այլ ուղ-
ղութիւն ստանալ, ինչպէս այդ շուտով մենք կը տեսնենք: Լերմոն-
տովի թախիծը չէ ամփոփում իւր մէջ այնքան բազմաթիւ առար-
կաներ և այնքան խորը չէ թափանցում նոցա մէջ, որպէս Բայրնինը:
Եթէ Լերմոնտովի «տխրագին դեր» թափառում է Կովկասում, Բայրնի
զժգոհ Չայլը-Հարօյլը կամ նոյն իսկ Ռոն-Փուանը շրջում է ամբողջ
Եւրոպա. իսկ նորա Լիւցիֆերը իւր աշակերտ Կայէնի հետ պտտում
է օրիշերքի անսահման տարածութիւնը: Մարդկութեան անեղանելի
տխուր վիճակը Լերմոնտովը բացատրում է կարծես «Աստուածային
անէծքով», մինչդեռ Բայրնը, զննելով բարի և չար իրերի բոլոր էական
պայմանները, տալիս է մեզ մարդկային կեանքի տխուր նկարագիրը, որ-
պէս անհրաժեշտ հետևանք այն կուի, որ մզում են իրար հետ չարն
ու բարին:

Եթէ Լերմոնտովի զժգոհութիւնը շրջապատող հասարակութիւ-
նից արտաչայտում է զլիսաւորապէս «Մեր ժամանակաց հերոս» վէպի
և մանր ստանաւորների մէջ, Բայրնի բարկութեան սլաքները շաղ են
գալիս ամբողջ Եւրոպայի վերայ՝ հիւսիսից մինչև հարաւ, արևելքից
մինչև արևմուտք այն էլ այնպիսի հսկայական գրւածներում, ինչպէս
են «Չայլը-Հարօյլը» և «Ռոն-Փուան»: Բայց երկու բանաստեղծի եզրակա-
ցութիւնն էլ միևնոյնն է. կեանքը—տանջանք է մարդկութեան համար:
«Ռեւ մանկութեան օրերից մենք սկսում ենք թառամել, դեռ մանուկ
հասակում՝ մեզ վերայ ծանրանում է անէծքը. մեր կեանքը—տա-
ռապանք է, մեր կեանքը—բնութեան անվերջանալի սխալներ,—այս-
պէս է արտաչայտում Բայրնը իւր համաշխարհային թախիծը իւր
«Չայլը-Հարօյլի» մէջ: Իսկ Լերմոնտովը արտաչայտում է իւր թա-
խիծը հետևեալ կերպով.

„Богаты мы, едва изъ колыбели,
Ошибками отцовъ и поздимъ ихъ умою,
И жизньъ ужь насъ томить, какъ ровный путь безъ цѣли,
Какъ пиръ на праздниѣ чужомъ“ („Дума“).

Սակայն Լերմոնտովի բնաւորութեան և բանաստեղծութեան մէջ կան
մի քանի բաներ, որոնց շնորհիւ նա երբէք ծայրայեղ չոտևտես չէր
ղաւնալ: Այդ բաներն են—նորա անբացատրելի սէրը դէպի հայրե-

նիք («Люблю я родину»), հայրենիքի փառքը («Бородино», «Два великана», «Спорь»), բնութիւնը առհասարակ և մանաւորապէս կողմասի շքեղ կամ վայրենի բնութիւնը («Демонъ», «Мцыри», «Измаиль-бей» և մանր ոտանաւորներ), կարող, հպարտ և անընկճելի անձնաւորութիւններ («Демонъ», «Мцыри», «Измаиль-бей») և վերջապէս ջերմ հաւատ («МОЛИТВА»): Այս տեսակ բաներ կարողանում են հանդիստ սալ բանաստեղծի հոգուն, թող են տալիս նորան մուսգւել տանջանքների մէջ:

Բելինսկին ասում է թէ Լերմոնտովը վերջին ժամանակներում սկսում էր հետզհետէ հաշտուել աշխարհի հետ, աւելի հանդարտ աչքով նայել մարդկանց վերայ և աւելի խորը թափանցել ժողովրդի ուսումնասիրութեան մէջ. այնպէս որ նա զեռ մեծ սպասելիք ունէր երիտասարդ բանաստեղծից: Իբրև դորա սպացոցց անւանի քննադատը մասնանիշ է անում նորա ժողովրդական ոգով ներշնչւած բարձր գեղարեւտական երկասիրութեան վերայ—«Пѣсня про царя Ивана Васильевича, молодого опричника и удалого купца Калашникова», որտեղ հակադրում են երկու անձնաւորութիւններ. մէկը՝ գոռոզ և հպարտ թագաւորի սիրով, միւսը ուժեղ և հպարտ իւր սեփական արժանաւորութեամբ և պատուի վիրաւորանքով: Ուսանաւորի լեզուն և չափը—բուն ժողովրդական, բովանդակութիւնը խիստ կերպով մտածւած և ծրագրւած, բնաւորութիւնները—որոշ և կենդանի նկարագրւած, աւելորդաբանութիւնների կատարեալ բացակայութիւն, հետաքրքրութիւնը անում է տող առ տող, ինչպէս այլ լինում է միայն հանձարեղ հիղինակութիւնների մէջ: Այս երկը, ի միջի այլոց, նշանաւոր է և այն պատճառով, որ նա պարզ ցոյց է տալիս թէ ինչպէս Լերմոնտովը կարողանում է և խիստ օբյեքտիւ լինել, չը նայելով, որ միւս գրւածներում դժւար է նորա «եսը» բաժանել բովանդակութեան ոգուց, չը նայելով, որ նա սուբյեքտիւ բանաստեղծ է գլխաւորապէս:

Ինչո՞ւմն է կայանում Լերմոնտովի տաղանդի ոյժը, ինչո՞ւմ—նորա ծառայութիւնները, որ նա մատուցել է ռուսաց զրականութեան, և ի՞նչ տեղ է բռնում նա ռուսաց զրականութեան պատմութեան մէջ: Մենք կ'աշխատենք կարճ կերպով պատասխանել այդ հարցերին: Հաւասար գեղեցկութեամբ բոլորովին տարբեր առարկաներ նկա-

բազրեյու կարողութիւնը, բնութեան տեսարանների հրաշալի կենդանապրութիւնը, բնաւորութիւնների որոշ գծերով պատկերացումը, չափ ու սահմանի զգացումը գեղարւեստականի մէջ, ճոխ և շքեղ լեզուն, ձկուն ոճը և զօրեղ ոտանաւորը («СТИХЪ ЖЕЛѢЗНЫЙ», ինչպէս ինքը բանաստեղծը ասում է իւր 1-օր ԿԵՄԲՐՅԱ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԻՄԵՆԻՆ), — այս բոլորը միասին այն պայմաններն են, որոնք որոշում են Վերմոնտովի տաղանդի ոյժը և չափը:

Նորա տաղանդը աւելի, քան Պուշկինինը, ձգտում էր համաշխարհային դառնալու, այն էլ այն չափով, որ շատ քննադատներ հրաժարւում էին նորա մէջ ազգային բանաստեղծի յատկութիւններ տեսնելուց: Բայց սուսաց գրականութեան և հասարակութեան մատուցած նորա ծառայութիւնը, բացի այն բոլորից, ինչ կապւած է առհասարակ տաղանդի հետ, կայանում է և այն բանի մէջ, որ նա նոյն սուս հասարակութիւնը յաճախ իւր հեղինակութիւնների նիւթ է դարձնում («Герой нашего времени», «Маскарадъ», «1-օր ԿԵՄԲՐՅԱ ԻՄԵՆԻՆ»): Արդէս Պուշկինի Եւզենիչ Օնեգինը ներկայացուցիչ է դարուս քսանական թւականների սուսաց հասարակութեան, նոյնպէս և Վերմոնտովի Պեչորինը նոյն հասարակութեան երեսնական թւականների ներկայացուցիչն է:

Վերմոնտովը մեռաւ շատ վաղ, քսանեօթ տարեկան հասակում: Բայց այս կարճ միջոցում նա գրեց այնքան բաներ և գրեց այնպիսի տաղանդով, որ մինչև այսօր նա մնում է ոչ ոքից չը գերազանցւած Ռուսաստանի բանաստեղծը, եթէ չը հաշւենք Պուշկինին:

ԿՈՄՍ ԼԵՒ ՏՈՒՍՏՈՅԻ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

(«Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը» հայերէն թարգ. գրքուկի առիթով),

ՅՈՎ. ՍԱՂԱԹԵԼԵԱՆՅԻ

Կոմս Լև Տոլստոյի վերջին ժամանակներում գրած վիպական գրած-ներում գեղարւեստական տարրը երկրորդական տեղ է բռնում, ծառայելով նորա բարոյագիտական տենդենցիաներին, մի հանգամանք, որը անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ, նորա այդ տեսակի աշխատութիւնները քննական հալեացքով անցնելիս, որովհետև այդ հանգամանքը, բացի իւր սեպհական ուղղակի առաջնակարգ դերից, անխուսափելի կերպով ազդում է և ստեղծագործութեան չտակութեան վերայ: Երբ վէպը շեղում է իւր իսկական դերից—արտաբերել իրական սովորական կեանքը տիպական երևութներով, գեղարւեստականը դուրս է գալիս արդէն իւր բնական օրէնք-ներից, և նորա առաջին չտակութիւնը, աչիւնքն լինել միայն արտայայտութիւն իրական կեանքի, վերջինիս թէ բարձր և թէ ստոր տարբերի,— հեղինակը զոհելով ուրիշ նպատակի, փորձանքի է ենթարկում և իւր տաղանդը, որովհետև երբ նա, փոխանակ հետևելու իրականութեանը և բնութեանը, ուզում է վերջիններս ծառայեցնել իւր նպատակներին, նա արդէն վտանդի է ենթարկում դուրս գալ ճշմարտութեան սահմաններից: Հասկանալի է որ այդ ուղղութեան վէպում դուրս բերած անձնաւորութիւնների վերայ չը պիտի նայել իբրև տիպերի, այլ իբր միջոց, հեղինակին տողորդ գաղափարի արտայայտութեան և նորա փիլիսոփայական սիստեմը պաշտպանելու և կեանք մտցնելու: Այսպիսի դէպքում գեղարւեստականի կոչումը լինում է ալն, որ ստեղծելիք անձնաւորութիւնները համաձայն լինեն բնական և հոգեբանական օրէնքներին: Այս կողմից կոմս Լև Տոլստոյի գեղարւեստական տաղանդը ալն աստիճան զօրեղ է, որ ամենաշուրջ կերպով է կատարում իւր երկրորդական դերը:

Վոմս Տոլստոյը իւր վէպերում չի դուրս գալիս և սովորական տենդենցիալով, իբրև պաշտպան հասարակական այս կամ այն հոսանքի, իբրև մարտնչող իրական շահերի սահմանում. և, ինչպէս ասացինք, նպատակ չունի անխտիր նկարագրել իրականութիւնը. նա աշխատում է որոշ փիլիսոփայական հպեացքների տարածման համար, ձգտում է նոր չարաբերութիւն ստեղծելու դէպի կեանքը: Այդ հանդամանքը կազմում է նորա աշխատութիւնների կենտրոնական տարրը, և վերջինս է որոշում այն մեծ սպաւորութիւնը, որ անում են այդ աշխատութիւնները ընթերցողների վերաջ: Հետևաբար այդ աշխատութիւնների արժէքը և գնահատութիւնը կախած է նրանց միջում արծարձուող վարդապետութեան արժանաւորութիւններից, թէ որ աստիճանի նա կրթիչ, բարոյականացնող և միևնույն ժամանակ նեցուկ է լառաջողիմութեան: Վոմս Ան Տոլստոյի թէօրիան կեանքի կամ որ աւելի լաւ է ասել, թէօրիաները, որոնք, ի դէպս է նկատել, մէկը միւսի չտեսից ծագելով՝ հակասում են միմեանց, առաջին անգամից աչքի են ընկնում նորանով, որ դուրս ինքնուրոյն չեն. բայց միևնույն ժամանակ դրանց, այդ թէօրիաները, չի կարելի վերաբերել ոչ մէկին մինչև այժմ եղածներից այն ձևով, ինչպէս նրանց առաջարկում է է կոմս Տոլստոյը: Նա վերցնում է այս կամ այն վարդապետութեան միայն մի կողմը և ըստ երևութիւն չնչին փոփոխութիւն անելով նորա մէջ, առաջարկում է իբրև անպայման սխտեմ:

Միւս կողմից, պէտք է ասած ամենանշանաւոր կողմից, որ աչքի են ընկնում նորա թէօրիաները, դա այն է, որ նորա հիմնովին լեղաշրջում են նպատակը իրանց աղբիւրի—այն վարդապետութիւնների, որոնցից վերջւած են և որոնց ըստ երևութիւն ջերմեւանդ պաշտպանն է կոմս Տոլստոյը: Վերջին հանգամանքը աչքի առաջ ունենալով, պէտք է ասել, որ այդ վարդապետութիւնները աւելի լուսնգաւոր կոմենտատոր քան կոմս Տոլստոյը երբէք չեն ունեցած: Իբրև հետևող ներկայանալով քրիստոնէական վարդապետութեան, նա վերցնում է վերջինիցս այս կամ այն պրինցիպը և փոխում է նրան այնպէս, որ նա կորցնում է իւր սկզբնական նպատակը և մարդարէի ձևով սկսում է քարոզել այդ գաղափարը: Վերույշեալ վարդապետութեան սխտեմից նա վերցնում է գլխաւորապէս այն սկզբունքը, որը ասում է «բարի արէք ձեր ասելիներին», և փոխում է այդ ուրիշ ֆորմուլայի, որը ըստ երևութիւն նման է առաջինին—«տար չարիքը, կամ մի հակառակիր չարիքին (терпи зло, не противясь злу), բայց իսկապէս կազմում է միայն մի կողմը և այդ մի կողմը նա բարոյականութեան միայնակ նպատակ է դարձնում, որի հետևանքը երևակալել կարելի է ալպէս՝ մի կողմից չար հակման ենթակալ մարդիկ չարիք են դործում, իսկ միւս կողմից բարոյական մարդիկ դործունեալ չարիքի դէմ միայն այն են անում, որ համբերութեամբ տանում են այդ չարիքը: Մինչդեռ «Քրիստոսը՝ մերժելով չարիքին չարիքով պատասխանել,

պահանջում է բարիք անել չարիք անողին և միևնույն ժամանակ կուռել չարիքի հետ, աշխատելով նորա դուռթեան դէմ, բայց աջնպիսի միջոցներով, որոնք ոչ ոքի չարիք չեն հասցնում. իսկ չարիքը ինքն ըստ լինքեան օգտաւէտ չը լինելով, ոչնչանալով, չի կարող մէկին փաս բերել: Մինչդեռ Քրիստոսը ուրիշ դէպքերում աւելի որոշ և անձամբ օրինակ տալով, պահանջում է բողոքել չարիքի դէմ, մերկացնել նորա կատարողներին, պատառելով իսրայելական քօղը նրանց երեսից, — պախարակել նրանց բուրի առաջ, — աշխատել, համոզելով, բերել դէպի ուղիղ ճանապարհ, կոմս Տոլստոյի ստեղծած բարոյականութեան օրինակելի անձնաւորութիւնները իրանց կեանքում միայն այն են անում, որ լուռ լինելով դէպի մարդկային հասարակութիւնը ճշտող չարիքը, չը դուրս գալով իբրև բողոքողներ և մաքառողներ այդ չարիքը հասցնողների դէմ, լուռութեամբ և համբերութեամբ տանում են իրանց անձին հասցրած չարիքը:

Իսկ քրիստոնէական վարդապետութեան ամենազլխաւոր հիմքը — «դնել անձը և ստացւածքը ուրիշներին համար» կոմս Տոլստոյի աշխատութիւններին մէջ շատ քիչ է արծարծուում և կրկին այն ձևով է խոստովանում այդ սկզբունքը, որ վերջինս նոյնպէս դատաւարուում է անպտուղ մնալու: Չը պնդելով այս ամենանշանաւոր պատգամի մարդկանց համար պարտաւորեցողիչ լինելու վերայ, նա դրադուում է միայն այն հարցով — թէ այդ տեսակ ցանկութիւն ունեցողը ինչ ձևով պիտի օգնի իւր մերձաւորին և այդ վճռում է այն ձևով, որ այդ սկզբունքը կարող է իրագործելի լինել միայն իբրև բացառութիւն: Նա վճռում է, որ մէկը իրաւունք ունի օգնել միւսին միայն իւր աշխատանքով, դրամով չի կարելի օգնել, որովհետև դրամ տալ մէկին, կը նշանակէ պարտաւորացնել միւսներին կատարելու այդ մարդու պահանջները. նա համեմատում է դրամը մուրհակի հետ (Что же намъ дѣлать?):

Կոմս Տոլստոյի վերջին պրինցիպը սերտ կապւած է նորա այն թէօրիալի հետ, ուր վերաբերում է հասարակութեան տնտեսական կազմակերպութեանը, որ նոյնպէս ըստ երևութիւն նման է մի տիրապետող թէօրիալի, բայց իսկապէս այլ նպատակ և այլ հետևանք ունի: Նորա տնտեսական կազմակերպութեան իդէալը կազմում է մի աջնպիսի դրութիւն, երբ իւրաքանչիւր մարդ իւր անմիջական աշխատանքով բաւարարութիւն է տալիս իւր բոլոր պահանջներին — մի դրութիւն, որը կարող է հնարաւոր լինել միայն այն ժամանակ, երբ քաղաքակրթութիւնը ոչ թէ միայն կանգ կ'առնի, այլ մարդիկ կը չլսողիմեն մինչ նախնական կիսալաւրենի դրութիւնը: Այժմ ուշադրութեամբ նայենք, կը տեսնենք որ այս պրինցիպը աղաւաղում է այն քաղաքատնտեսական թէօրիալի, որը առարկայի արժեցողութիւնը չափելով միայն նորա վերայ գործ դրած աշխատանքի չափով, պահանջում է այն տեսակ տնտեսական կազմակերպութիւն, երբ իւրաքանչիւր մարդու երկամուտի աղբիւրը կը կազմէ միայն նորա աշխա-

տանքը: Ընդունելով այս թէօրիան, կոմս Տոլստոյը աւելացնում է նրան և մի պահանջ—որ մարդ, ապրելով իւր աշխատանքով, իւր կարիքներին անհրաժեշտ բոլոր նիւթերը անմիջապէս սեփական ձեռքով պատրաստէ—մի պահանջ, որ անհնարին է դարձնում բոլորովին մի որ և իցէ կազմակերպութիւն քաղաքակիրթ հասարակութեան այդ թէօրիաւի հիման վերալ, ուրեմն անիրագործելի է դարձնում նոյն թէօրիաւի նպատակը (տես նոյն Утоже намъ дѣлать?):

Այս տարօրինակ ինքնուրուցութիւնը շարունակուում է կոմս Տոլստոյի վարդապետութեան միւս սկզբունքներում, որոնց պսակը այդ կողմից կազմում է նորա ամենավերջին թէօրիան ամուսնութեան վերաբերմամբ, որը բոլորովին հակասում է նորա նախկին հայացքին նոյն առարկայի մասին: Սկսելով նրանից, որ նա կնոջ միաջնակ կոչումը դնում էր մարդկային ցեղի աճեցողութեան մէջ, զրկելով մարդկութեան ամբողջ կէսը զարգացման, լուսաւորելու և քաղաքացիական իրաւունքներից, նա, վերջ ի վերջոյ, ոչ թէ աճեցողութիւնը, այլ նոյն իսկ ամուսնութիւնը մեղք է համարում բարոյականութեան դէմ (Крейперова соната): Կոմս Տոլստոյի թէ առաջին և թէ վերջին հաւեսքը կնոջ մասին զուտ ինքնուրոյն չեն, ինքնուրոյնութիւնը կաշնում է չալտնի փոփոխութեան մէջ, որը չեղաչրջում է նրանց նպատակը: Որ կնոջ առաջին կոչումն է մալը լինել, սերունդ տալ, ամենահին ճշմարտութիւն է, որ ընդունւում է ամենայն տեղ,—բայց ոչ միաջնակ: Կոմս Տոլստոյը դարձնում ի նորա միաջնակ կոչումը (իւր առաջաւ հայացքում): Ամենաանսպասելին նորա վերջին հայացքն է կնոջ մասին, որի մէջ ըստ երևութին աւետարանի պատգամն է պաշտպանում—«եթէ մէկը չար աչքով նայի կնոջ վերալ, նա արդէն շնացաւ իւր սրտի մէջ»: Բայց այդ պատգամը նա ալնպէս է ուղղում, որ ոչնչանում է ոչ թէ միայն նորա նպատակը, այլ ամբողջ ալն վարդապետութիւնը, որի մի մասն է կազմում նա: Այդ տեսակ հաւեսքը կնոջ և տղամարդու մասին նա տարածում է և երկու ամուսինների վերաբերմամբ. ուրիշ խօսքերով՝ նա պահանջում է մարդկային ցեղի դադարումը: Կորանից չեսուլ (մարդկային ցեղի վերջանալուց չեսուլ) էլ ինչպէս կարող է գոյութիւն ունենալ բարոյականութիւնը և Աստըծու գաղափարը, չանուն որոնց խօսում է կոմս Տոլստոյը (Исповѣдь):

Պարագոկաներով կոմս Տոլստոյը կարողացաւ երբեմն երբեմն զբաղեցնել այդ ուսս հասարակութիւնը, բայց վտանգաւոր ճանապարհը անել փորձանքի մէջ ձգեց նորան: Նորա վերջին թէօրիան նորա առանց էն էլ միմեանց հետ չը կապող պրինցիպները ոչնչացրեց խպառ, և նա մնաց մի դրութեան մէջ, որը խիստ ցաւալի պիտի համարել իւրաքանչիւր տաղանդաւոր և մտածող մարդու համար: Մի կողմից կոմս Տոլստոյը ընդունում է նախախնամութեան գաղափարը և առաքինութեան չաղթանակը, միւս կողմից առաջարկում է զաղարեցնել մարդկային ցեղի գոյութիւնը:

Մենք աշխատեցինք որքան կարելի է կարճ կերպով պարզել կոմս

Տոլատոյի վարդապետութեան տարրերը, նորա աշխատութիւնները նպատակը և միտքը հասկանալու համար: Իսկ թէ ինչ պատճառներից և ինչպէս մի տաղանդաւոր և մտածող մարդու մէջ գոյացել են այդպիսի պարագոքներ, դա ուրիշ հարց է, որին կարելի է պատասխանել, այդ հեղինակի անձնաւորութիւնը և բոլոր աշխատութիւնները ուսումնասիրելով: Պէտք է աւելացնել որ կոմս Տոլատոյը իւր բոլոր պրինցիպներին տալիս է թէօլոգիական կերպարանք, իսկ ստեղծագործութեանը միասնական ուղղութիւն:

Այդ տեսակի աշխատութիւններից մէկն է և վերև լինածը: Այդտեղ պատմուում է հետևեալը:

Մի վրադիմիրցի ջահիլ վաճառական Աքսենով ազգանունով ճանապարհ է ընկնում դէպի Նիժնի-Նովգորոդի տօնավաճառը: Ճանապարհին մի կայարանում նա դիչերում է մի ուրիշ վաճառականի հետ, որին այդ ժամանակամիջոցում մի աւազակ ծածուկ սպանում է և իւր արիւնոտ դանակը դնում է Աքսենովի պաշուտակը: Վերջինիս խուզարկում են և, չը նախելով նորա հերքման, արիւնոտ դանակի հիման վերայ ծեծի են ենթարկում և ուղարկում տաժանակիր աշխատանքի Սիբիր: Քսան ու վեց տարուց չետոյ նոյն բանտը բերում են նոր բանտարկեալներին, որոնց մէջ գտնուում է վերոլինած վաճառականի իսկական սպանողը: Մի օր Աքսենովը տեսնում է, որ այդ մարդասպանը—Մակարը—բանտի պատը փորում է փախչելու նպատակով: Աքսենովից ոճրագործը պահանջում է լռել տեսածի մասին, խոստանալով նրան ևս ազատութիւն, հակառակ դէպքում սպանում է սպանել նորան: Աքսենովը պատասխանում է, որ նա արդէն սպանել է իրան այտտեղը հասցնելով և սկսում է զսպել իւր հոգու վիշտը ու բարկութիւնը աղօթքով: Առհասարակ նա զբաղւած էր աւետարան կարդալով և եկեղեցում երգելով: Երբ բանտի վարչութիւնը պատը փորելը նկատում է և այդ մասին հարց ու փորձ է անում բանտարկեալներին, վերջիններս բացատում են այդ իմանալը, որոնց թւում և Աքսենովը, որը պատասխանում է թէ Աստուծու հրամանով չի կարող պատ փորողին ցոյց տալ: Մի դիչեր Աքսենովը տեսնում է թէ ինչպէս մարդասպան Մակարը եկել է իրան մօտեցել և նորա ոտները մօտ նստել: Աքսենովի հարցրին թէ ինչ է ուզում, Մակարը պատասխանում է, թէ Աքսենովի վարմունքը նորա մէջ աչնպիսի խղճի տանջանք առաջ բերեց, որ տաժանագրի ծեծը աւելի թեթև է նորա համար, քան թէ Աքսենովի երեսին նախելը: Առաջարկում է չալտնել իրողութիւնը Աքսենովին ազատելու համար և, իրան չարագործ անւանելով, սկսում է ողբալ: Աքսենովը պատասխանում է, որ իրան գնալու տեղ չը կալ, կինը ու որդիքը իրան մոռացել են, ինքը նոյնպէս սկսում է լալ և ասում է. «Թող Աստուած ինքը ների քեզ, կարելի է ես քեզից հարիւր անգամ աւելի վատ եմ»: Եւ նա այլ ևս տան կարօտը չէր քաշում, բանտից դուրս գալ չէր ուզում, այլ միայն իւր վերջին ժամի վերայ էր մտածում:

Մակարն Աքսենովին ականջ չը դրեց, լալտնեց, որ հանցաւորը ինքն է եղել: Երբ որ Աքսենովին լեա դառնալու հրամանը դուրս եկաւ, — նա արդէն մեռած էր:

Պէտք է աւելացնել, որ կոմս Տոլստոյ վէպը սկսում է միտտիլքական նախադգուշացումով, Աքսենովի կնոջ երազով, որի մէջ նա տեսնում է ինչպէս իւր մարդը սպիտակել էր և առաջարկում է վերջինիս չետածղել իւր գնալու օրը, բայց Աքսենովը չի լսում կնոջը, հակառակ բացատրութիւն տալով նորա երազին:

Ընթերցողը կը հարցնի— ինչո՞ւմն է կայանում այստեղ Աստուծոյ դատաստանը, որովհետև սովորական ձևով մտածողը մի դատաստան չի կարող նկատել այսպիսի դէպքում, երբ խկապէս արդար մարդը մեռնում է բանտում հէնց այն ժամանակ, երբ նորա աղատութեան հրամանը դուրս է գալիս: Բայց ուրիշ կերպ է լուսաբանում դէպքը, երբ կոմս Տոլստոյի տեսակէտից նայենք նորա վերայ: Այստեղ կատարում է բարոյականութեան չափութիւն, — մեղաւորը զգլում է. ինչո՞ւ. որովհետև միւսը համբերութեամբ տանում է իրան նրանից հասցրած չարիքը. — լետոյ չարիքից տանջւածը հաշտում է իւր վրձակի հետ և չի ուզում դուրս գալ այդ անսակ դրութիւնից: Այստեղ մենք չենք կարող չը նկատել աւետարանական սկզբունքը — չը պատասխանել չարիքով չարիքին: Իսկ միւս կէտը — հաշտւել չարիքի հետ և չը վնասել ուրիշ կոչում իւր կեանքին, այն է զնել իւր անձը և ստացւածքը ուրիշներին համար, ոչ որ չի կարող կապել աւետարանի սկզբունքներին հետ, որի իդէալն է ոչ թէ կենդանի թաղւել բանտի մէջ, այլ ընդհակառակը աշխատել դուրս գալ նրանից և գնալ կուրու աշխարհը տանջող չարիքի դէմ:

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԼէՅՕ: - ՍՊԱՆԻԱԾ ՀԱՅՐԸ: Ժողովրդական աւանդութիւններից: Շուշի,
տպ. հայոց հոգևոր տեսչութեան: 1891 թ.: Փոքր քառածալ, 38
երես, տառ № 12, գինն է 5 կոպ:

Բաֆֆին իւր «Խամսայի մելիքութիւնների» մէջ ներկայացրեց այն պրոցեսը, թէ ինչպէս Վարաբաղի հինգ հայկական իշխանութիւնները մէկը միւսի վտակից ջնջուցին, ամենից առաջ թող տալով որ իրանց կողքին, հէնց իրանցից մէկի նոյն վերաջ բուն դնէ, աճէ ու զօրանալ խաշնարած թուրքերից փանահը, որ և վտոյ Շուշալ խանը: Առաջին անգամից մարդ մնում է զարմացած թուրքի այդ լանդուզն ձեռնարկութեան վերաջ, և աւելի զարմանում է թէ ինչպէս այդ նոր բուն դրած խանութիւնը կարողանում է զօրանալ կարծ միջոցում և իւր ոչ թող դերազանցել հաջ մելիքութիւններին այն աստիճան, որ մտածէր արդէն նոցա հպատակեցնել իրան: Այդ պատմութիւնը հայկական ոչ հեռու անցեալի ամենատխուր վիպութիւններից մէկն է՝ թէ որ աստիճանի ընկած պէտք է լինէր պետական անկախութեան զգացմունքը թէ հաջ մելիք-իշխան-

ների և թէ ժողովրդի մէջ 18-երորդ դարում: Եւ նոյն իսկ անպիտան Մելիք Շահնազարը, որի անունը ամօթանք է բերում ամեն հային, բայց մանաւանդ հաջ զարաբաղցուն, նորա անպատիժ մնալը իւր ժամանակակիցների կողմից բաւականաչափ ապացուցում է պետական գաղափարի բացակայութիւնը հաջ մելիքութիւնների մէջ 18 երորդ դարում թէ իշխանների և թէ ժողովրդի կողմից, որոնք ընդհանուր առմամբ, այսպէս ասած՝ իրար արժանի էին:

Մի այլպիսի ժամանակ և այլպիսի «իշխանութիւնների» մէջ ժողովուրդը ինքը չարտադրեց պետական գաղափարով մարդիկ: Հաջ իսկըր այդքան բարձր բաների համար շատ էր տափակացել: Փանահ խանի լաջորդ՝ նորա որդի Իբրահիմ խանի ժամանակ, երբ Շուշալ խանութիւնը աւելի ևս սպառնալի դարձաւ, Ջրաբերդի համեմատապէս ամենից թրքատեսաց մելիքութեան

ժողովուրդը գոնէ մի կերպ և առժամանակ պաշտպանուում էր անհատական քաջերով: Գոցանից մի երկուսի չիշատակը աւանդութիւնը վառ է պահել՝ Աւագ վարդապետ և Նորա ընկեր «աւագակ» Արղումանը կամ ժողովրդի ասածով՝ զալի-Մահրասան և թիւլի-Արղումանը, սրոնք ժողովրդի կողմից վրէժխնդիր էին լինում Իբրահիմ խանին թուրքեր կոտորելու, կազմակերպւած լինելով որպէս մի աւագակալին խումբ: Լէօի «Սպանւած հայրը» այդ աւանդութիւնն է պատ-

մում: Սպանուողը այդտեղ Արղումանի ծերունի հայր Սարգիս-ապերն է, որին Իբրահիմ խանը կալանաւորել էր տւել և խոստացել՝ ազատ թողնել, որ գնա ու խրատի իւր սրդուն՝ հանգիստ կենալ: Բայց Նորան կտոր կտոր է անել տալիս, երբ այդ հայրը հրաժարուում է Արղումանին իւր սրդի անւանելուց, ասելով որ եթէ սա իւր արժանի որդին լինէր՝ Իբրահիմը խան չէր լինիլ:

Պատմւածքը շատ չաջողւած է:
Ա. Ա.

ՇՁԵԳՐԻՆ. — ԳԻՒԴԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ: Թարգման. Խ. Մ., Թիֆլիս,
1891 թ. սպարան «Արօր», 24 երես. գինն է 5 կոպէկ:

Օրիորդ Աննա Գուբինան, սասնալով ուսուցչական վկայական, ամսական 15 ռուբլիով գիւղական վարժուհու պաշտօն գտաւ: Հէնց առաջի օրերին, զիւղի հարուստներից մէկը՝ Գրողը, որը խմիչքեղէնների առևտուր էր անում, եկաւ ուսումնարան, բերելով օրիորդի համար ընծայ. չը կամենալով զայրացնել այդ ազդեցիկ մարդուն, օրիորդը ընդունում է Նորա բերածը: Գրողը երես է առնում, սկսում է գիմել օրիորդին երկզիմի ակնարկութիւններով, «իսկ մի անգամ էլ Գրողը օրիորդի ականջով պցեց. — էհ, օրիորդ, օրիորդ, ձեր քաշովը մի ոսկի կը տալի, եթէ»... Նոյնքան աներես է և գիւղական զրազիրը, բայց օրիորդը տանում է այդ բոլոր անպատուութիւնները, վախենալով զրկւել իւր տեղից: «Ապրիլ

ամսին իւր գիւղական կալածքը եկաւ կալածատէր Անդրէաս Ալզին, որը մինեոյն ժամանակ ուսումնարանի գլխաւոր հոգաբարձուն էր: Գիւղ գալու հէնց առաջի օրը Ալզինը գնաց զպրոց այցելութեան, տեսաւ զպրոցը, հաւանեց, գովեց կարգ ու կանոնը: Դպրոցից դուրս գալիս, Ալզինը ուղղակի ասաց, թէ ինքը շատ ուրախ է, որ իւր դպրոցում այդպիսի սիրուն վարժուհի կալ: Այդ օրից սկսած, երիտասարդ հոգաբարձուն մաշում էր դպրոցի շէմքը», նա այցելում է մի անգամ օրիորդին և Նորա բնակարանում և նոյն օրը երեկոյան հրաւիրում է նրան թէլի. օրիորդը սկսում է զճալ դալ, բայց Նորա «սպտմութիւնը» երկար չը քաչեց՝ դալթակղեցուցիչը շուտով հետանում է գիւղից, թողնելով օրիոր

զին զիւզացիներն ծաղր ու ծանակի առարկայ: «Աշակերտներն էլ զլիւի ընկան, թէ բանը ինչումն է. նրանցից մի քանիսը պարզ կերպով ասում էին. «շնորհաւոր լինի պտուղը»: Վարժուհու գրութիւնը անտանելի էր դարձել. «օրիորդի համար դեռ մի եւթ կար.—մտնել գիւղի գրագրի, Միրզայի, Գրողի կամ մի ուրիշ ազգեցիկ մարդու հովանաւորութեան տակ»:

բայց նա սարսափում էր այդ մտքից և գտաւ մի ուրիշ եւթ՝ նա վերջ դրեց իւր կեանքին:

Օրիորդ Գուրինալից առաջ նոյն զիւզում վարժուհի էր օրիորդ Մարիամը. ուզում էին նոյնպէս վարել և դորա հետ, բայց օրիորդը պահեց իրան աւելի արժանի կերպով: Գրանից փետոյ «Գրողը սկսեց վարժուհու դէմ մատնութիւններ անել և ինչ մատնութիւններ. էլ ուրիշ ճարչը կար. մնում էր վեր կենալ և հաղէ»: Օրիորդն էլ աղպէս արաւ. նա փոխադրեց քաղաք:

Եթէ մէկը դատելու լինի Ռուսաստանի զիւզական վարժուհիների գրութեան մասին այս գրքի հիման վերայ, ահա ինչ հղրակացութիւնների նա պէտք է հասնի. 1) իւր պատիւը ճանաչող ոչ մի օրիորդ վարժուհու պաշտօնով չի կարող մնալ գիւղումը. նա ստիպւած կը լինի փոխադրել

քաղաք. 2) թողերին մնում է ընկնել բարոյապէս և, եթէ նրանց մէջ ամօթ կալ, նստել ջուրը. 3) իսկ ով աստածալին այս տուրքից էլ է զրկւած և նա ցանկանում է վարժուհի մնալ, պէտք է մտնի գիւղի ազգեցիկներից մէկի անպատուարե հովանաւորութեան տակ:

Այս գրքովը մի աններելի զրպարտութիւն է հազարաւոր այն զիւզական վարժուհիների համար, որոնք տարիներով գիւղերում վարժուհութիւն են անում և, չը բաւականանալով դասարանական պարապմունքներով, աղնւաբար մաքառում են ժողովրդի տգիտութեան դէմ, աշխատելով բարոյապէս ազդել գիւղի հասակաւորների վերայ: Ի սէր Աստուծոյ նկարագրեցէք իրերի իսկական գրութիւնը, իսկական արգելքները, բայց միք զրպարտիլ:

Եւ թարգմանիչը կարծում է, որ իւր պատիւը ճանաչող մի օրիորդ, եթէ հաւատալու լինի վերև նկարագրած սարսափներին, կը ցանկանայ զիւզական վարժուհի դառնալ: Մեր ժողովրդական ընթերցանութեան համար նշանակւած հրատարակութիւնների շարքում այս գրքովը աննպատակ է և ոչ ցանկալի:

B.

ՄՈՊԱՍԱՆ, ԳԻ ԴՐ. — «ԳԻԻՂԱԿԱՆ ԱՂՔԱՏ», Թարգ. օր. Մ. Մալուժեանցի:
 ԱՌԻԷՐԲԱՆ-ԻՅ. — «ԳԻԻՂԱԿԱՆ ԶՈՒԹԱԿԱԶԱՐ», Թարգմանութիւն օրիորդ.
 Ն. Ս.: — Հրատարակութիւն ժողովրդական ընթերցանութեան հա-
 մար: Երկուսը միասին մի գրքոյկում, 31 երես, տառ. № 12, Թիֆլիս
 1891 թ., տպ. Նազարեանցի, գինն է 5 կ :

Այս երկու փոքրիկ պատմութիւն-
 ների բովանդակութիւնը հետեւալն
 է: Առաջինի հերոսն է մի մուրաց-
 կան, որ ոչ մի ընտանեկան կրթու-
 թեան չի ենթարկուել, մանկութեան
 և պատանեկական հասակներում ոչ մի
 բան չի սովորել, դորան աւելացրու և
 ալն զժբաղտութիւնը, որ, կառքն
 անցնելով վերալից, երկու տոն էլ ջարդ
 ու փշուր է արել: Հաւանական է,
 որ ալք անհատը պէտք է զիմէր մու-
 րացկանութեան, քանի որ նա իւր
 հացն անկարող էր ալ կերպ հալ-
 թալթել: Ընթերցողի վերաջ տխուր
 տպաւորութիւն է թողնում նաև ալն
 զէպքը, որ հասարակութիւնը մեր-
 ժում է նրան օգնելու և ալք մու-
 րացկանը ստիպած է լինում դիմել
 գողութեան, որի մէջ նա բռնում
 է: Վտղութեան պատճառով նորան
 նստացնում են բանտի մէջ, ուր և
 նա վախճանում է:

Երկրորդ պատմութեան մէջ դուրս
 է բերւած մի աղքատ ջութակահար,
 որը մտնում է մի գիւղ, ուր կարո-
 ղանում է նա իւր հացը հալթալթել
 և վերջը պոսակում է այն պանդոկի
 տիկնոջ հետ, որտեղ նա միշտ ջու-
 թակ է ածում: Նա հաստատում է
 ալք զիւղի մէջ, հող է ձեռք բերում,
 իւր ալք սեպհականութիւնն էլ ըն-
 ծալում է վերջը հասարակութեան,

որ գիւղական դպրոցը շինելի դորա
 վերաջ:

Այս երկու պատմութիւններն ի-
 րար կատարեալ հակապատկերներն
 են ներկայացնում. աչտեղ կեանքն
 իւր ստակալի և անախորժ կողմերով,
 աչտեղ կեանքն իւր արժանի կող-
 մերով, որոնք ապացուցում են, որ
 կեանքի բարի և վատթար լինելն
 պայմանաւոր բաներ են, որ մարդս
 անբախտ չէ ծնում, ալ նա կարող
 է բախտաւոր լինել, և թէ նա ալ
 պայմանների ներքոյ ծնէր և ապրէր:
 Ահա կեանքի այս երկու կողմերը
 միասին նկարագրւած՝ կարող են մեծ
 կրթիչ ազդեցութիւն ունենալ ժողո-
 վրդի վերաջ: Երկու պատմութիւնների
 խմատն է մի մեծ դաղափար՝ ալն է աշ-
 խատանք: Աշխատանքն է բարոյակա-
 նութեան և բախտաւոր կեանքի նշա-
 նաւոր շարժառիթներից մէկը: Եթէ
 մուրացկանը խմանար մի որ և իցէ ար-
 հեստ և ալք վերջինը սիրէր՝ նա ոչ մի
 ժամանակ չէր ընտրիլ ալքճանապարհը
 և անբարոյական միջոցի չէր զիմիլ:
 Իսկ եթէ ջութակահարն ջութակ ա-
 ծել չ'իմանար, դուցէ նա իւր հացը
 հալթհալթել չը կարողանար, գիւղի
 սիրելին չը դառնար և վերջապէս
 զիմէր անբարոյական միջոցների՝ ապ-
 րուստ ձարելու համար: Աչտեղ ես
 ակամազ վրում եմ Անահիտի հիմնա-

կան գաղափարը, ան է արեւտի նշանակութիւնը:

Եթէ մի գիրք նշանակած է ժողովրդական ընթերցանութեան համար, բաւական չէ, որ նորա բովանդակութիւնը լինի պարզ և հասկանալի, պարունակէ իւր մէջ մի բարձր գաղափար, այլ նաև կարևոր է, որ շինի մտքուր և պարզ լեզուով գրած:

Ահաւասիկ այս երկու թարգմանութիւններն էլ համապատասխանում են երկրորդ պահանջին: Մենք

ուրախութեամբ պէտք է շնորհակալ որ լեզուն բաւականին մշակած, սահուն, պարզ է հակառակ շատերի թարգմանութիւնների: Մեզ համար շատ ուրախալի է և ան նախաձեռնքը, որ այս թարգմանութիւններն արեւ են հալ օրիորդներ: Յանկալի կը լինէր, որ իզական սևուր աւելի եռանդով մասնակցէր մեր աղքատ գրականութեանը:

Բար.

ՍՊԻՐԻ, ԵՕՀԱՆՆԱ.—(ԱՄԱՐԴ-ՐԵՍԻԻՆ): Թարգմանութիւն գերմաներէնից Ի. Յ.: Հրատարակութիւն Թ.Ի.Ֆ. Րնկ. Հայերէն գրքերի հրատարակութեան, № 29: Թիֆլիս, 1891 թ. 42 էրես. գինն է 10 կ.:

Եօհաննա Ապիրիի այս փոքրիկ պատմութեան գլխաւոր ներուտնին է մի փոքրիկ ազգիկ, որին ամբողջ գիւղն անւանում էր Վարդ Ռեւի, որովհետև նա շատ սիրում էր վարդը: Այդ ազգիկն որք լինելով, գտնուում էր իւր մօրեղբոր մօտ, սակայն այդ վերջինը մեծ ուշադրութիւն չէր դարձնում փոքրիկի կրթութեան վերաբերյալ, ըստ որում նա իւր կնոջ մահից փառք թէ բարոյապէս և թէ նիւթապէս քաջքալում էր. առաջին՝ նա իրան նւիրել էր հարբեցողութեան, գիշեր-ցերեկ պանդուկից առն չէր դալիս. երկրորդ՝ նորա ձեռքից պարտատէրերը պէտք է շուտով խլէին առն և տեղ: Փոքրիկ Ռեւին շարաթնհերով իւր մօրեղբոր երեսը չէր տեսնում և երբ ուսումնարանից առն էր վերադառնում, խոհուն շտապում էր

իւր սիրած վարդերի փետից. նա իւրաքանչիւր պարտիւղի մօտով անցնելիս, խնդրում էր պարտիւղաւանից վարդ ու այդ վերջիններն էլ համակրելով այդ խեղճին՝ նւիրում էին մէկի տեղ տասնեակներ: Այդ վարդերն եղան վերջը որքի ապրուստի գլխաւոր միջոցը, ըստ որում նա իւր մօրեղբոր տանը ոչ մի ժամանակ հաց չէր գտնում: Ահաւասիկ մէկ օր վարդի փունջը ձեռքին բռնած անցնում էր նա մի տան մօտով, կանչում է նորան մի պառաւ կին իւր մօտ և առաջարկում է, որ նա միշտ իւր համար վարդ բերէ և մի կտոր հացի հետ փոխէ. փոքրիկ Ռեւին էլ անում է, նա այդ կտոր հացով պահում էր թէ իրան և թէ հոգսերի մէջ թաղւած մի կնոջ, որին գիւղը կանչում էր հոգսամալ: Վերջապէս մի օր հոգ

սամալրի կորած որդին կրկին չաչտնուում է և իւր մօրն ու Բեսլիին իւր մօտն է պահում:

Վերոյիշեալ պատմութեան բովանդակութիւնն առնւած է գերմանական կեանքից. գործող անձերը ներկայացնում են մեզ այնպիսի տիպեր, որոնց նմանը հազարներով կարելի է գտնել գերմանական շրջաններում: Միայն հերոսուհին, այն է Վարդ Բեսլին բաւականին չափազանցրած է: Նա չունենալով հենց կեանքի առաջին օրերից կրթողներ և ապրելով կեանքի մթնոլորտի մէջ, կարողացել է աղնւածալ, վստմանալ և այնպիսի գաղափարներ պաշտել, որը նա միայն լաւ կրթութեան միջոցով կարող էր ձեռք բերել: Այս զէպքում մենք պէտք է մի այլ համգամանք աչքի առաջ ունենանք, այն է որ հեղինակուհու նպատակը չէ եղել տալ մի հաւատարիմ պատկեր գերմանական կեանքից, այլ նա աշխատել է ստեղծել մի պատմութիւն մանուկների համար: Մի մանկական պատմութեան գլխաւոր պատմաններն երկու են. կամ նիւթը պէտք է վերցրւած լինի ուղղակի կեանքից, որը չի պարունակում իւր մէջ անբարոյական տարրեր, կամ այդ նիւթը պէտք է դրած լինի կեանքի հողի վերայ և պարունակէ իւր մէջ մի որ և է բարոյական իմաստ, որն և պէտք է արտապաշտած լինի պարզ, հասկանալի, որպէս զի այդ իմաստը կարողանալ հեշտութեամբ թափանցել մանկական քնքոյշ սիրտը: Ահաւասիկ այս վերջին տեսակէտից նայած, Սպիրիի պատմութեան հերոսուհու չափազանցութիւնը ներկելի է:

Երկու երեխաներ հաւասարաչափ կրթութեամբ չեն կարող իրար վերայ մեծ կրթիչ ազդեցութիւն ունենալ, այլ անպատճառ պէտք է, որ մէկը միւսից քիչ թէ շատ բարձր լինի: Հեղինակուհին Վարդ Բեսլին բոլոր ժամանակակից երեխաների իդէալ է դուրս բերում, որ նա կարողանալ ազդեցութիւն ունենալ մանկական հողու վերայ: Պատմութեան գլխաւոր կրթիչ մտքերն հետեւեալն են՝

Իւրաքանչիւր երեխայ կարող է որբ դառնալ, պէտք է լինել համեստ և աստուածասէր: Աստուած որբին, ինչպէս տեսնում ենք Բեսլին, անխնամ չի թողնում: Պէտք է լսեղծ ու աղքատ մարդուն սիրել և օգնել, ինչպէս Բեսլին էր անում: Այս գաղափարներն պէտք է հէնց երեխական հասակում անհատի հողու մէջ արմատ ձգեն, եթէ նորա քանի որ երիտասարդութեան հասակում կերպարանափոխելու են սկզբունքների. շատ վիրաւացի է նկատում Հերբարտը, այն տարրն է մարդու հողու մէջ ամենատեղի, ինչ որ նորա երեխական հասակումն է արմատ ձգել: Վարդ Բեսլին մի կատարեալ մանկական պատմութիւն է և ցանկալի կը լինէր, որ այդ գրքովը իւրաքանչիւր մանկական գրադարանում գտնւէր:

Ինչ թարգմանութեան և լեզուին է վերաբերում, պէտք է խոստովանւենք, որ թարգմանութիւնը չաջող է և լեզուն շատ պարզ, սահուն և կոկ: Թարգմանիչը մուսցիլ է միայն չի վերնագրում, որ այս գրքովը մանկական է, հեղինակի կողմից այդ դեռ հասկանալի է. որովհետեւ գեր-

մանական աշխարհում լալտնի է, որ մանկական հեղինակ է,
Եօհաննա Սպիրին գլխաւորապէս

Բար.

Տէր-Գրիգորեանք, Գրիգոր, բժշկապետ (Թիֆլիսեցի):—«ՀԱՆՐԱՄԱՍ-
ՉԵԼԻ ԲԺՇԿԱՐԱՆ»: Առողջապահութեան և բժշկականութեան հան-
րամատչելի գրոյցներ: Հատոր առաջին, տետրակ առաջին: Թիֆլիս,
տպ. Տ. Նազարեանցի 1891 թ.: Մեծադիր, 106 էրես, տառ № 10,
զինն է 70 կոպէկ:

Թերևս երկար թւէր սպասելը, մինչև որ ներկազ գրքի մասին գրէր մանրամասն քննադատութիւն մասնագիտական տեսակէտից. մինչդեռ պ. Տէր-Գրիգորեանցի այս հրատարակութիւնը ամենալն իրաւունքով կարող է պահանջել հասարակութեան և մամուլի ուշադրութիւնը իւր վերայ հէնց իւր երևան գալուն պէս: Պն Տէր-Գրիգորեանցի «Հանրամատչելի բժշկարանը» մի սովորական գրքի հրատարակութիւն չէ, այլ մի ամբողջ ձեռնարկութիւն է և մի երևութ մեր աղքատիկ գրականութեան մէջ: Դատեցէք միալն սորանով, որ ներկազ գիրքը սկիզբն է հրատարակութիւնների մի ամբողջ շարքի, որոնք միասին պէտք է կազմեն մեծագիր և մանրատառ տպած 720 էրեսներ:

Աշխատասիրողը հետեւեալ կերպ է որոշում իւր հրատարակութեան նպատակը և բնաւորութիւնը՝ «Հանրամատչելի բժշկարան ասելով, մենք հասկանում ենք ոչ թէ հիւանդութիւններ բժշկելու մի ժողովածու, որ իւրաքանչիւր հիւանդութիւն բժշկելու համար առաջարկում է այս կամ այն խորհուրդը, այս կամ այն

ղեղերը. այդ անունով ընդունում ենք (?) մի հանրամատչելի ձեռնարկ, որ ծանօթացնում է ընթերցողին բժշկականութեան և առողջապահութեան ալժմեան ուղղութեան հետ, պարզում, բացատրում է հիւանդութիւնների ծագման և տարածման պատճառները և հիւանդութիւնների առաջն առնելու համար նպատակաւարմար միջոցներ է առաջարկում, սովորեցնում է ընթերցողին՝ իւրաքանչիւր հիւանդութեանը գիտակցաբար վերաբերւել (էրես 9—10):

Գիրքը, որպէս ասած է էրես 9, «ամբողջութիւն իւր մէջ բժշկական և առողջապահական գիտութիւնների սկզբունքները՝ կարող է ուղեցոյց լինել իւրաքանչիւր զարգացած մարդուն՝ գիտակցաբար ըմբռնելու առողջապահական և բժշկական հարցերը»:

Գրքից վերցրած այս քաղաածքներով միանգամալն որոշում է այս հրատարակութեան բնաւորութիւնը և նպատակը: Ներկազ առաջին ատարակի ընթերցումը մեզ համոզում է որ աշխատասիրողը բարեխղճաբար

պահպանել է այն սահմանները, որոնցից դուրս գալը կը լինէր շեղումն իւր առաջադրած նպատակից: Մենք ուզում ենք ամենից առաջ շեշտել որ պ. Տէր-Գրիգորեանցի «Հանրամատչելի բժշկարանը» ոչ թէ ժողովրդական ընթերցանանքի անհամար է, այլ միմիայն զարդացած ներքին համար է, և որ նա ոչ թէ մեզ զեղատոմսեր է առաջարկում ամեն տեսակ հիւանդութիւններ ալլ գրքով բժշկելու համար, այլ մեզ նախապատրաստութիւն է տալիս՝ զէպի հիւանդութիւնները զխտակցարար վերարերւելու: Այս երկու պայմանները բարեխղճօրէն պահպանւած են աշխատասիրողի կողմից:

Ընդհանրապէս ժողովրդի համար նշանակւած չը լինելով, այլ միայն զարդացածների համար, այս հրատարակութիւնը աչնուամենայնիւ կողմնակի կերպով ժողովրդական մեծ խաւերին է ծառայում, քանի որ բոլոր զարդացած ընթերցողներին նա դարձնում է ազնւոններ՝ առողջապահական և բժշկական խնայի հաշիւներ տարածելու համար իրանց չբջատատող ընտանիքներին մէջ:

Իւր նպատակին հասած լինելու համար, մնում է միայն որ այս հրատարակութիւնը զբաւ լինի այնպիսի լեզուով և տպագրւած լինի այնպէս, որ գոնէ զարդացած ներքին ախորժութեամբ կարդան: Եւ ահա այդ նկատմամբ մենք ունենք մի քանի ծանր նկատողութիւններ անելու, որովհետեւ մեր կարծիքով, եթէ չաջորդ գրքերը աչն պակասութիւններից զերծ չը մնան, հրատարակու-

թիւնը կարող է նոյն իսկ վտանգի ենթարկուել չաջորդութեան և բարի անունի կողմից: Ներկայ առաջին տեսութեամբ զրականապէս վխտում են լեզու և մանաւանդ կէտադրութեան սխալները, դեռ բոլորովին չը խօսած բուն տպագրական սխալների մասին, որոնք նոյնպէս աւելի են, քան այդ ներքին է մի գրքի համար:

Օրինակներ: Երես 26. «ուրեմն փոռումն, նեխումն, (աւելորդ ստորակէտ) մի տեսակ միկրոբների գործունէութեան հետեանքներ են, (ստորակէտի տեղ ապտեղ պէտք է վերջակէտ լինէր) հռչակաւոր Պատտօրը հաստատուց նմանապէս որ թթուումը և մի տեսակ միկրոբների ազդեցութեամբն է կատարում, (ստորակէտից զետու պատեղ պէտք է կրկնէր որ խոսքը) շաքարը թթուելով սպիրտի, ածխածնի և այլ մի քանի տեսակ նիւթերի է փոխում, (աւելորդ ստորակէտ) և (ապտեղ նոյն պէս պէտք էր կրկնել որ) այդ գործողութեան մէջ դեր են կատարում saccharomices cerevisiae բուսականութեանը պատկանող մանր էակները»:

Երես 27. «այդպիսով կարելի է պարզել իւրաքանչիւր վարակիչ հիւանդութիւնների ընթացքի տարբերութիւնը»: Պարզ է որ պէտք է ասել՝ իւրաքանչիւր հիւանդութեան և ոչ իւրաքանչիւր հիւանդութիւնների:

Նոյն երես. «դառնանք այժմ այն պայմանների վերայ խօսելու, որոնք, (աւելորդ ստորակէտ) կարողանում են թուլացնել և աչն:

Կամ երես 40. «եթէ սենեակի պատերը, լուսամուտները, (պէտք է

լինէր ստորակէտ) դռները բացալի կերպով լաւ փակած չեն (աչտեղ պէտք էր դնել ստորակէտ) ի հարկէ, որ ծծմբաթթւաւը և ալլն:

Կամ երես 41. «Կարբուրեան թթւատի դէղինֆեկցիական չատկութիւնների մասին գիտնականները, (աւելորդ ստորակէտ) տարրեր կարծիքներ են չափում»:

Կամ երես 42. «Սլորացիները միկրորաջինջ և գարշահոտութիւնն անհետացնող միջոց է, (պէտք է լինէր վերջակէտ) դորա ջրախառնուրդները ալ և ալ անուշներով ծախում են» և ալլն:

Կամ երես 16. «...չը նախելով որ միևնույն տեսակ վարակիչ հիւանդութիւնները տարածած էին լինում միաժամանակ երկրադնդիս դանադան տարբեր (աչդ երկու խօսքերից մէկն ու մէկը աւելորդ է) պալմաններով տեղերում»:

Կամ ալսպիսի նախադատութիւն, երես 50. «Մարդկանց աչ տեսակ անընդունակութիւնը (ալինքն շատերի անընդունակութիւնը քութէչով հիւանդանալու) բացատրում է նրանով, երբ միևնույն ընտանիքի մէջ մի քանիսները վարակում են, իսկ մի քանիսները մարակում են, իսկ էլ միևնույն թոնի ազդեցութեանն են ենթարկւած և ոչ մէկը նրանցից նախապաշտպանողական միջոցներ գործ չէ դրած»: Սակայն գորանով ես ամենևին չը հասկացալ, թէ ինչով է բացատրում քութէչով հիւանդանալու անընդունակութիւնը շատերի կողմից:

Ահա ալսպիսի և զոցա նման լեզուի, մտքի, կէտադրութեան, տպագրական սխալները, որ ամեն քաղաքի տեղում հանդիպում ենք, շատ վնասակար կարող են դառնալ մանուշանդ մի ալսպիսի հրատարակութեան համար, որը նշանակւած է ամեն զարգացած ընտանիքի գրադարանում տեղ բռնելու և որի զխաւոր արժանիքներից մէկը պէտք է լինի անչուչա՝ մտքի արտապատութեան գիտնական ճշգրտութիւնը՝ միացած լեզուի գիւրամատչելիութեան հետ:

Ի բաց առած գրքի այդ պակասութիւնը, որոնցից, ի հարկ է, շատ հեշտ է խոստալ չաջորդ տետրակներում, սահասարակ պատմելու եղանակը պարզ է և հասկանալի:

Այս առաջին տետրակը պարունակում է իւր մէջ, բացի չառաջաբանից, հետևեալ հատուածները՝ միկրոբներ, նախապաշտպանողական միջոցներ, կարմրախտներ, ալլն է՝ քութէչ, կարմրուկ, կեղծ կարմրուկ, ծաղիկ, ծագիկի պատաստումը, ջրծագիկ, կարմիր քամի, բժաւոր տիֆ, Գինն է 70 կոպէկ, որ, ի նկատի առած գրքի մեծ ծաւալը, շաղխաւոր է:

Մի նկատողութիւն ես: Գրքի ամեն մի հատուածի բովանդակութիւնը, բացի հատուածի ճակատին զնելուց, շատ նպատակալարմար կը լինէր պատմելու ժամանակ կրկնել: Աչդ շատ կը հեշտացնէր գրքից օգուտ քաղելը մանուշանդ հիւանդանոցների կողմից:

- 1) ԲՈՒԴՈՒՂԵԱՆ, ԱՐՏ., բժ.—«ԲՅժկական Նախնական միջոցներ: Ս. Պետերբ., տպ. Սկորոխովի, 1891 թ., գրեն է 5 կոպ.:
- 2) ՆՈՅՆԸ.— «Վարակիչ հիւանդութիւններ»: Հրատարակութիւն Գ. Ս.—Պետերբ., տպ. Սկորոխով., 1891 թ., գրեն է 5 կոպ.:
- 3) ՆՈՅՆԸ.— «Ինչ է սիֆիլիսը»: Հրատ. Գ. Ա. № 2. Ս. Պետ., 1891 թ.. Նոյն տպարան, գրեն է 5 կոպէկ.:
- 4) ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.— «Միկրոբները»: Հասարակական դաստիարակութիւն կարգադրած Գանձակի կլուբի դահլիճում 1891 թ.ի վետար. 10-ին Արտատպւած «Մուրճ» ամսագրից: Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1891 թ., գրեն է 10 կոպ.:
- 5) «ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ Աստրախանի Հալուհեաց խնամատար Ընկերութեան»: Վաղարշապատ, տպ. Սբ. կաթ. Էջմիածնի, 1891 թ.,
- 6) ՖԷՕԳՈՐՈՎ, Բ.— «Մանկական թատրոն»: Բ. Ֆեոդորովի ժողովածուից ընտրեց և փոխադրելով թարգմանեց Տիկ. Մարգարիտ: Մոսկա, տպ. Մկրտիչ Բարխուդարեանցի, 1891 թ., գրեն է 1 ր.:
- 7) ? ՀԵՂԻՆԱԿԻՑ թարգմանութիւն.— «Փոմաս Բոցարիս» (Ճգրիտանցք):— Մոսկա, տպ. Մ. Բարխուդարեանի, 1891 թ., գրեն է 3 կոպ.:
- 8) ՇՄԻԿՏ, Ֆերգինանդ.— «Ռէչնիկէ աղէսը»: Գերմաներէնից թարգմանեց փիլիպպոս Վարդանեան: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1891 թ., գրեն է 60 կոպ.:
- 9) ՊԵՍՏԱԼՈՅՑԻ, ՀԵՆՐԻԽ.— «Լինհարզ և Գերտրուդ»: Հրատարակութիւն № 33 Թիֆլ. Հալոց Հրատարակչ. Ընկերութեան:— Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1891 թ., 133 էրևո, գրեն է 25 կոպ.:
- 10) Règles de l'Association arménienne établie en 1890 á Calcutta. the Star Press, 19, Lall Bazar, Calcutta.
- 11) ՏԼԲ.ԳՐԻԳՈՐԵԱՆ (Թիֆլիսեցի), Գրիգոր. բժշկապետ.— «Հանրամատչելի բժշկարան: Առողջապահութեան և բժշկականութեան հարցերին վերաբերեալ հանրամատչելի զրոյցներ»: Հատոր առաջին, տետրակ առաջին: Թիֆլիս, տպ. «Արօր» Տ. Նազարեանցի, 1891 թ., գրեն է 70 կոպ.:
- 12) ԷԳՐԷՆ-ԼԷՖԼԷՐ, տիկին.— «Արցունի հասարակութեան հետ»: (Շվեդերէնից), թարգմանեց Ս. Հախումեան, հրատ. № 40 «Աղբիւր» և «Տարազ» հանդէսների Թիֆլ., տպ. Նազարեանի, 1891 թ., գրեն է 40 կոպ.:
- 13) ՈՒԻԿԱ.— «Յեց» վէպ, թարգմանեց Մարիամ Մատինեան: Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանի, 1891 թ., գրեն է 80 կոպէկ.:
- 14) ԱՂԱՆԵԱՆՅ, ԳԻԻՏ քահանայ.— «Վարնոզ գաղթը»: Արտատպւած «Արձագանք» շաբաթաթերթից: 1891 թ., տպարան Յ. Մարտիրոսեանցի, գրեն է 5 կոպէկ.:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

† Պետրոս Աղամեան—† Յակոբ Պարոնեան—Կաթողիկոսի տեղակալութեան խնդիրը:

Աղամեանը մեռաւ: Հայութիւնը չի ունեցել նորա չափ հանճարեղ գերասան և, հաւանօրէն՝ երկար ժամանակ չի ունենալու նորանից գերազանցը: Աղամեանը մեռաւ դեռ չը վերջացրած իւր կենսընթացքը—բայց իւր ազգին և ալ ազգերին լաւ զգացնել տալուց չեսող իւր բոլոր արտիստական խոշորութիւնը և իւր անփոխարինելիութիւնը հաշկական բեմի համար: Կարեօր է ալս հանգամանքը, որ հալ ազգը, որքան և նա խղճուկ լինէր, աչնու ամենաչնիւ բաւականաչափ ոչժ ունեցաւ Աղամեանի չափ համաշխարհային տաղանդին ամեն տեղ հետեւելու և նրան ոչժ տալու: Պոլիսը նորան ծնեց և նորան բեմ կոչեց: Սիֆլիսը նորան հանճարեղ գերասան ճանաչեց և մտցրեց զրամալի կլասիկական աշխարհը: հալերը Ռուսիայում նորան ուղեկցեցին դէպի թատրոնի կենտրոնները՝ հանրա-եւրոպական քննադատութեան և նթարկելու համար: Ալը քննադատութեանը նա ոչ միայն դիմացաւ, ալ և զորանից նա դուրս եկաւ փառքի պսակով, որը նորան պէտք է տանէր դէպի աշխարհքիս կենտրոնական բեմերը: Արդէն հուշակ ստացած՝ նա չը բաժանուէր հալկական բեմից, որը շարունակեց նրան մասամբ սնունդ տալ բայց աւելի՛ նորանից սնունդ ստանալ: Հիւանդ պառկած՝ նա չը մոռացւեց իւր հայրենակիցներից, որոնք զրամական օգնութիւն հասցրին նրան և կը շարունակէին հիւանդին պահպանել, եթէ մահը ալսքան չուտով չը խլէր նորան մեղնից: Հոգին աւանդած՝ Աղամեանի փշատակը չարգւեց հանդիսաւոր թաղումով, հոգեհանգիստներով, ցաւակցութեան ամեն տեսակ արտապալտութիւններով և՛ որ գլխաւորն է քան ամենը՝ ընդհանուրի զգացմունքով կորստեան մեծութեան մասին: Մի խօսքով Աղամեանը մեռաւ՝ դնահասւած իւր հալրենակիցներից: Եւ ամեն բանից առաջ ես կ'ուզէի ալը վկայել: Դա միտթարական է ինքն ըստ ինքեան, բայց ալը հանգամանքը ունի և ուրիշ միտթարական կողմ:

Ես ուզում եմ դորանով ասել, թէ անկարելի է որ հայ հասարակութիւնը պարտք չը զգայ Աղամեանի համար ունեցած ոգևորութիւնը և այն խորին շարժանքը, որ նա ունի դէպի հանդուցեալի լիշատակը, լաւերժացնել այնպիսի դործերով, որոնք կապած են Աղամեանի անունի հետ: Անկարելի է որ Աղամեանի ոգին խաղաղ մնայ, չը չըջէ ժողովրդի մէջ և չը ծնեցնէ մարդկանց սրտերի մէջ նոր եռանդ դէպի հայկական թատրոնի դործը: Ինձ թուում է, թէ այսօր-վաղը մենք կը լսենք նոր ձեռնարկութիւնների մասին, որոնք կապ կունենան Աղամեանի անունի հետ: Այդ լուրը սածում եմ այն պատճառով, որ հայկական թատրոնը այս օրուայ օրս ունի արդէն մի քանի կիսակազմ օրգաններ, որոնց Աղամեանը իբր հալոց մեծ դերասան, բարոյապէս կտակել է իւր անունը: Գորա են՝ նոր կազմող թատրոնական խումբը, կիսակազմ հալոց դրամատիքական սկումբը և թատերասէր հայ հասարակութիւնը, որը մի փոքր և նեղ չըջանակից ալժմ սկսել է դուրս գալ, լաճանալ և ըմբռնել նաև երիտասարդութիւնը, զոնէ այն աստիճան, որ սա արդէն իւր մէջ ուժ է զգում կիսով չափ իւր ձեռքն առնել այդ գործը: Գորան ապացոյց թատերասէրների այն նիստը, որ տեղի ունեցաւ մալիս ամսի վերջին, Թիֆլիսի ժողովարանում, նիստ, որի հետեանքն եղաւ 2000 բուբլի գումար ժողովելը գալ ձմեռուայ սեզոնին պր. Պետրոսեանի կազմակերպ խումբը ապահովադնելու համար:

Գորա, կրկնում եմ, թէ և կիսակազմ, բայց մի մի օրգաններ են, որոնց ուժը պէտք է հասունանայ, որ կարողանան արդիւնք ցոյց տալ: Եւ իմ ասելս էլ հէնց այն է, որ նոցա ուժերի հասունանալու համար Աղամեանի վառ լիշատակը մեծ ֆակտորներից մէկն է լինելու:

Մեր թատրոնական գործի պատմութեան մէջ Աղամեանի երևալը Թիֆլիսում, 1879 թւականին, մի նոր շրջան կազմեց: Հայկական բեմը կապակց բարձր գեղարւեստի հետ: Յաւալի է սակայն, որ Աղամեանը, որքան մեծ էր սրայէս դերասան, նոյնքան էլ թատրոնական գործի չէր, հասարակական գործի մէջ ինիցիատիւ մարդ չէր: Ունենար Աղամեանը նաև մեծ հասարակական ոգի—հայկական թատրոնի գործը մէկին երկու աւելի շառաջացած կը լինէր այսօրուայ օրս: Ես չըզում եմ ընթերցողներին ալ ժաման իմ մի զրուածքի վերայ «Մուրճ» 1889 թ., № 10, Ամսուայ քրոնիկի Բայց այս ես կարևոր է որ Աղամեանի մեծ լիշատակը ընդունակ է տասնեակ գործիչներ առաջ բերելու:

Օրհնեալ լինի Աղամեանի լիշատակը:

Մեռաւ և Յակոբ Պարոնեան: Ով էր նա: Այդ հարցին պատասխանելու համար ես առաջ կը բերեմ արտասահմանի մի հայ թերթի գրածքը նորա մասին:

«Պ. Պոլսի հայ թերթերը ցաւալի մի կորուստ կը գուժեն զոր հայ ազգը

ունեցած է երկիծարան հրապարակագիր Տիար Յակոբ Պարոնեանի մահւամբն:

«Տաղանդաւոր գրագէտը մի քանի ամիսներէ ի վեր թոքախալ հիւանդութիւնով կը տառապէր արդէն. մալխ 27/8 լունիսի առաւօտը վերջապէս դադրեր է շնչելէ:

«Հանգուցեալը երեք դաւակներ թողած է՝ իրանց այրիացեալ մօր հետ նիւթապէս բոլորովին անապահով վիճակի մէջ. սակազն մխիթարական է լսել որ Կ. Պոլսի հաշտարակութեան մի ընտիր մասը, դնահատելով հանգուցեալին՝ հազ գրականութեան տւած ծառայութիւններն, մասնաժողով մը արդէն կազմած է նիւթական օգնութիւններ հասցունելու նորա ընտանեաց և ապահովելու որբերի ապագան:

«Ողբացեալ հրապարակագիրը ծնած էր 1840 թ. Ագրիւանապոլսի մէջ, ուր առած էր նաև իւր նախնական կրթութիւն: 1868 թւականէն կը սկսի իւր գրական կեանք. այդ ատեն հրատարակեց իւր երգիծական առաջին գրւածք «Արևելեան Ատամնարոյժ»-ը. աղով լալանի եղաւ սողալալ գրագէտին կոչումը: Նոյն ատեն Կ. Պոլսի «Մեղու» աղբալին երգիծարան լրագրին աշխատակից կարգւեցաւ: Մի ժամանակ ետք իրեն անօրինութեամբ առանձին երգիծարանական թերթ մ'ալ հրատարակել սկսեց «Փատրոն» անւամբ. սակազն իւր անաչաւ և քննադատող գրիչ հաճելի չընկեցաւ նոյն ատենի կառավարական և աղբալին վարչական անձերին, որոնք չորս տարւան մէջ ութ անգամ դադրեցուցնել աւին թերթը, որ վերջապէս Պատրիարքարանի թաղրիւրին վրալ բոլորովին խախտեցաւ:

«Պարոնեան շարունակեց իւր գրական աշխատութիւն մասնաւոր չօրւածներ տալով և աշխատակցելով զանազան թերթերի՝ «Հայրենիք»-ին, «Մասիս»-ին, «Ադա»-ին, ինչպէս նաև ռուսահալերի «Փորձ», «Փարոս», «Արձագանք» թերթերին: 1878-ին հրատարակեց «Աղբալին Չոջեր»-ը, որ ժամանակակից նշանաւոր հալերի կենսաղբութիւնն է, երգիծական նուրբ և զւարճալի ոճով գրւած, որի մէջ «Չոջեր»-էն իւրաքանչիւրի թերութիւններն անխնալ կերպով երևան բերւած են: Նոյն ոճով և միևնոյն հալագիւտ գրիչով գրւած են նաև անկէ ետք հրատարակւած «Մեծապատիւ մուրացկաններ» և «Պտուտ մը Պոլսոյ թաղերու մէջ» իւր գիրքեր:

«Վերջին ժամանակներս «Խիկար» անունով ամսաթերթ մը կը հրատարակէր, զոր մի քանի տարի շարունակելէ ետք դադրեցուցնել ստիպեցաւ. անկէ ետք տոմարակալութեան դասեր տալով և վաճառատուների մէջ հաշակալութեան գործերով կը զբաղէր:

«Իւր գլուխ գործոցներ թանկաղին զարդեր աւելցուցին հալ ինքնուրոյն գրականութեան վրալ, իբրև հալագիւտ հանճարի ստեղծագործութիւններ. բալց այդ գրւածներ, որ կրնալին եւրոպական որ և է ալզի գրականութեան պատիւ բերել, չը կրցան հեղինակին՝ գէթ ապրելու համար բաւարար նիւթական միջոց տալ: Իւր գրչին վրալ զարմացողները՝ նպատաւորներէն աւելի շատ եղան իւր կենդանութեան ժամանակ:

«Պարոնեան մեկնելով իւր տեղ պարապ կը թողու. երգիծաբանական արևատի մէջ ոչ ոք կրցաւ նորա բարձրութեան հասնիլ և ալժմ ալ բըժբաղդապէս չերևիր նորա արժանաւոր մի լաջորդ»:

«Պարոնեան՝ հեգնական ոճին մէջ երբէք ուամիկ բացատրութիւնների չէ իջած. իւր նպատակ չէ եղած զաւելցածներ ներկայացունելով ընթերցողներն զւարճացունել և կամ նոցա ճաշակին հետեւելով՝ բաժանորդների մեծ թիւ մը դտնել. ընդհակառակն իւր զւարճախօս գրւածներ միշտ լուրջ քննադատութիւններ եղած են վարչական, ընկերական զեղծումների դէմ»:

«Հարկ է աւելցունել նաև որ Պարոնեան մին եղաւ ալն հազւագիւտ անձերէ, որոնք իրենց բոլոր գրական փառքերի մէջ միշտ համեստ կը մնան և նիւթական նեղութիւնների մէջ ալ իրենց անձնական արժանապատուութիւն չեն կորսնցուներ»:

«Գովելի է Կ. Պոլսի հալ եկեղեցականութեան ընթացքն որ արժանաւոր շքով կատարեր է հանգուցելուն չուղարկաւորութիւնը, թէև ինքն ալ աղատ չէր եղած նորա գրիչի սուր հարւածներէն: Գեր. Խորէն Նարպէչ ուրիշ չորս եպիսկոպոսներէ և եկեղեցական ու գրական դասակարգէն ընտիր բազմութենէ մը շրջապատւած՝ կատարեր է թաղման տխուր հանդէսը»:

«Հանգուցեալը վարած էր նաև ազգային երեսփոխանութեան և կրթական ալ ի ալ պաշտօնները»:

Այս տողերին ես կարող եմ միայն այս աւելցնել, որ Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը, որպէս հաստատ աղբիւրից գիտեմ այդ վճռել է հանգուցեալ Պարոնեանի բոլոր կարևոր գրւածքները արտատպել, թույլտութիւն խնդրելով հանգուցեալի ժառանգներից, որոնց և կը հասնեն վարձատրութիւնները»:

Մի նոր խնդիր է ծագել, և այդ խնդիրը կոչուում է տեղակալական խնդիր»:

Ինչից ծագեց այդ խնդիրը: Նորանից, որ Մակար Աթողիկոսի Տեղակալ սրբազան Երեմիա եպիսկոպոսը, օգտուելով տեղակալական իրաւունքներից, մի շարք կարգադրութիւններ արեց Գէորգեան ձեմարանի, Ներսիսեան դպրանոցի և Էջմիածնի Սինոդի նկատմամբ, և այդ կարգադրութիւնները եթէ ոչ հակառակութեան, գէթ բողոքների և հակաձառութեան հանդիպեցին»:

Նախ պատմենք անցքերը համառօտապէս»:

Գէորգեան ձեմարանում արձակեցին մի քանի ուսուցիչներ»:

Հարց բարձրացրին՝ ինչ իրաւունքով Տեղակալը հրաժարեցնում է ձեմարանից այնպիսի ուսուցիչներին, որոնք ուսուցիչ էին հանգուցեալ Աթողիկոսի ժամանակ»:

Ձեմարանից արձակւած ուսուցիչներից մէկը ընդունեց ուսուցիչ

Ներսիսեան զպրանոցում, վերջինիս հոգաբարձութեան վճռով: Այդ մի ուսուցչին ընդունելու համար հոգաբարձութիւնը հարկադրել էր մի շարք ուսուցչիչներին ցաժմ աւանդած առարկաները նոցա ձեռքից խլել և մէկի առարկան՝ միւսին տալ, իսկ երկու ուսուցչիչներին էլ արձակել զպրանոցից: Այդ պատճառով կաթողիկոսական Տեղակալը իւր սեպհական իշխանութեամբ, հեռագրով առաջարկեց զպրանոցի հոգաբարձութեանը՝ չը միջամտել զպրոցի ուսուցչական խմբի փոփոխութեանը և առաջիկայ պոստով ուղարկել վերջին նիստի արձանագրութիւնը՝ գործի հետ լաւ ծանօթանալու համար: Հոգաբարձութիւնը մի արտակարգ նիստում վճռեց բաւարարութիւն տալ սրբապան Տեղակալի պահանջին, բայց արդէն երբ հոգաբարձուներից երկուսը չաւանել էին իրանց այս կարծիքը թէ՛ Տեղակալը իրաւունք չունի միջամտելու զպրոցի վճիռների մէջ:

Սրբորդ զէպօ: Սրբազան տեղակալը բարձր մարմնաւոր կառավարութեանը կանդիդատների ցուցակ է առաջարկել որ Սինոդի անդամներ հաստատեն սինոդականների կօթ թիւը լրացնելու համար, քանի որ նոցա թիւը աչժմ հինգն է:

Որպէս կը տեսնենք, սրբազան Տեղակալը նաև այս զէպօքում իւր իրաւունքներից չի զուրս եկել, ինչպէս նա չի զուրս եկել իւր իրաւունքներից ձեմարանի նկատմամբ:

Այս երևք զէպօքերի մասին վերը արտապատած հալեացքները ես կը պաշտպանեմ ներկայ թղթածում, ընունելով վիճելի խնդիրները այն ձևով, ինչպէս ես այդ գտնում եմ մտմուլի մէջ:

Մամուլի մէջ առաջինը, որ հարկ համարեց Տեղակալ սրբ. Նրեմիալի կարգադրութիւնների զէմ բողոքել, «Նոր-Գար» լրագիրն էր: Նորա կարծիքով Տեղակալի իրաւունքներից զուրս են սրբ. Նրեմիալ Գալստեանի կարգադրութիւնները:

«Նոր-Գար»-ը ուրիմն ընդունում էր Նրեմիալի տեղակալ լինելը, բայց կարծում էր թէ Տեղակալը այն իրաւունքների տէրը չէ, ինչ իրաւունքներ որ բանեցնում է սրբ. Նրեմիան:

Այդ տեսակ հալեացքների զէմ կացաւ «Մշակ» լրագիրը, ասելով որ բոլոր ոչ զուտ կրօնական խնդիրներում Տեղակալը նոյնն է, ինչ իսկական կաթողիկոսը: Իւր այդ հալեացքը պ. Գր. Արծրունին ձևակերպեց այսպէս՝ Տեղակալը ժամանակաւոր կաթողիկոս է:

Վէճը այսպիսով միայն Տեղակալի իրաւունքների մասին էր, երբ «Արձագանք» շաբաթաթերթում հանդէս եկաւ պ. Գէորդ Սւանգուլեանցը մի նոր թեզիսով, թէ Տեղակալը ունի վարչական իրաւունքներ Սինոդի իրաւասութեան սահմանից զուրս, բայց միայն Տեղակալը, բայց որ իբր թէ Նրեմիալ եպիսկոպոսը Տեղակալ չէ: Պր. Սւանգուլեանցի սյգ կարծիքը ընդունեց նաև «Նոր-Գար»-ը, պնդելով որ Նրեմիալ եպիսկոպոսը տեղակալ չէ:

Բայց ինչի վերայ է հիմնուած պ. Եւանգուլեանցը, պնդելով թէ դեր-
Նրեմիայ եպիսկոպոսը կաթողիկոսական Տեղակալ չէ. և ինչ է նա, եթէ
Տեղակալ չէ:

Պր. Եւանգուլեանցը, որ այս կէտում չարաչար սխալուած է, փա-
տաբանուած է իւր ասածը նրանով, որ Տեղակալ լինելու և տեղակալական
բոլոր իրաւունքները վաչելելու համար իբր թէ հարկաւոր է որ Նրեմիայ
եպիսկոպոսը այդ պաշտօնի համար հաստատուած լինէր հանգուցեալ կա-
թողիկոսի կոնդակով: Եւ նա պնդում է, թէ քանի որ Նրեմիայ եպիսկո-
պոսը կաթողիկոսական կոնդակով Տեղակալ չի նշանակուած, ուրեմն նա
իբր թէ միայն Սինոդի նախանդամ-նախադահն է և ոչ կաթողիկոսական
Տեղակալ: Այսպիսով պ. Եւանգուլեանցը վճռողական նշանակութիւն է
տալիս կաթողիկոսական կոնդակին տեղակալական խնդրում: Այդ հպեացքը
սակալն սխալ է և այդ սխալը դժւար չէ ցոյց տալ:

Յարտն է որ մինչ 1836 թւականը Հայոց կաթողիկոսի իրաւունք-
ները անբաժան էին: Բնական է նաև որ կաթողիկոսական Տեղակալին էր
մնում բոլոր կաթողիկոսական գործերի կառավարութիւնը մինչև նորոգ
կաթողիկոս ընտրելը: Բայց չալանի է նաև, որ 1836 թ. մարտի 11-ին
Հայաստանեայց Եկեղեցին Ռուսաստանում ստացաւ իւր սահմանադրու-
թիւնը, որ կոչուած է սովորապէս Պալատենիե: Արդ այդ Պալատենիելով
կաթողիկոսական իրաւունքները բաժանւեցին կաթողիկոսի և Սինոդի մէջ:
կաթողիկոսին չտակացուեցին գլխաւորապէս կրօնական, իսկ Սինո-
դին՝ լոկ վարչական և եկեղեցական-դաստատանական իրաւունքները, նա-
խագահութեամբ կաթողիկոսի, որը բոլոր սինոդական գործերում ունի
միայն ձալնի առաւելութիւն: Եւ այդ Պալատենիեն ասում է, (տես ռու-
սաց Որէնագրքի հատոր XI, չօղւած 945), որ կաթողիկոսի մահից չես
բոլոր զուտ կրօնական հարցերի վճռելը թողնուած է մինչ նոր կաթողի-
կոսի ընտրելը. դորանով ուրեմն ասում է որ կաթողիկոսը չունի Տեղա-
կալ զուտ կրօնական հարցերի համար: Իսկ ինչ վերաբերում է Սինոդին,
ուր կաթողիկոսը նախագահ է, օրէնքի զօրութեամբ նորա մահից չես կա-
թողիկոսի Տեղակալը դառնում է Սինոդի երիցազուն եպիսկոպոսը, որ կոչ-
ուած է Սինոդի նախանդամ: կաթողիկոսի տեղ՝ Սինոդի նախանդամն է
նախագահում, վաչելելով բոլոր նախագահական իրաւունքները:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ կաթողիկոսի Տեղակալ չի կարող
լինել կրօնական խնդիրներ վճռելու համար. իսկ ոչ-կրօնական գործերից
մեծագոյն մասի համար, որ ըստ Պալատենիելի Սինոդին են անցել,
կաթողիկոսական Տեղակալը ոչ թէ նշանակուած է կաթողիկոսից, այլ
արդէն օրէնքով նա է Տեղակալը, (այսինքն կաթողիկոսին փոխարինողը)
ով Սինոդի նախանդամն է:

Իսկ եթէ Տեղակալին կաթողիկոսը չի նշանակում կոնդակով կամ
կտակով, ապա ինչու, կը հարցնեն մեզ, կաթողիկոսները այնուամենայնիւ

կտակով նշանակել են Տեղակալ Նան Պալատենիկի օրերով: Աս չեմ երաշխաւորում այս բանի ճշգրտութիւնը, թէ բոլոր Տեղակալները 1836 թւականից դէս հանգուցեալ Վաթողիկոսներից կոնդակներ լինեն ստացած. բայց հէնց ենթադրենք թէ այդ պատմական ճշգրտութիւն է, քանի որ շատ կարելի է որ վերջին Վաթողիկոսները աշխատած լինէին պահպանել առաջնայ Վաթողիկոսների ականգական իրաւունքը: Աս ուղում եմ ուրեմն ընդունել որ դա պատմական եղելութիւն է: Այն ժամանակ դուրս կը գալ հետեւալը:

Երբ Սինոդը հաստատուեց, և ին մտքով Տեղապահի պաշտօնը դառաւ աւելնորդ, աչնու ամենայնիւ Վաթողիկոսները աշխատում էին ին սովորութեան համաձայն՝ Տեղակալ նշանակել: Բայց որովհետև Պալատենիարով Տեղակալը (Սինոդում) կարող էր լինել միմիայն Սինոդի նախանդամը, այդ իսկ պատճառով Վաթողիկոսները կոնդակով նշանակում էին Տեղակալ նորան, որը ստանց կոնդակի էլ կոչւած էր օրէնքով Տեղակալ (Սինոդում նախագահող) լինելու: Ազոպէս՝ Ներսէս V կաթողիկոսի մահւանից չետ՝ Տեղակալ եղաւ Ղուկաս արքեպիսկոպոսը, որ նախանդամն էր Սինոդում, Գէորգ IV կաթողիկոսից չետ՝ Մկրտիչ արքեպիսկոպոս Բարամեանցը, որ նախանդամ էր Սինոդում, մինչև որ աչն ժամանակ դեռ ևս Մակար արքեպիսկոպոսը՝ 1883 թւ. լունւարի 7-ին հաստատուեց անդամ Սինոդի, (առաջարկութեամբ հանգուցեալ Գէորգ IV կաթողիկոսի), իսկ ըստ աւագութեան՝ Սինոդի ատենապետ՝ աչխնքն Տեղակալ:

Մակարը, իւր արքեպիսկոպոսութեան վերջին տարիներում, բացառիկ դիրք էր բռնում՝ նա թէ թեմակալ առաջնորդ էր Նոր-Նախիջևանի և Բեսարարիայի և թէ Սինոդի անդամ էր: Ահա թէ ինչու, երբ նա Նշմիածնունն էր գտանուում (1883—1884)՝ նա Տեղակալ էր, երբ իւր թեմումնէր՝ Մկրտիչ արքեպիսկոպոս Բարամեանցն էր Սինոդի ատենապետը, աչխնքն Տեղակալը:

Պնդում են թէ Մակար Վաթողիկոսը, արքեպիսկոպոսութեան ժամանակ՝ Գէորգ IV կաթողիկոսից նշանակւած էր Տեղակալ: Ուր Գէորգ IV կամեցել է Մակար արքեպիսկոպոսին Տեղակալ ճանաչել, այդ պարզ է. թէ չէ նա Մակար արքեպիսկոպոսին չէր նշանակիլ անդամ Սինոդի, քաջ զխոնձալով որ Մակարը կը լինէր երկնագոյն եպիսկոպոսը Սինոդում, ուրեմն և Տեղակալ: Ազոպէս է որ Գէորգ IV կաթողիկոսը անուղղակի կերպով իւր Տեղակալն է նշանակել և ոչ թէ նա այդ նպատակին հասել է ուղղակի կոնդակով, որը, եղած էլ լինի, ոչ մի դորութիւն ունենալ չէր կարող:

Այդ բոլորից ինչ է բղխում: Աչն, որ կաթողիկոսական Տեղակալը, Պալատենիարի ժամանակ, ոչ թէ Տեղակալ է կաթողիկոսի կոնդակի հիման վերաչ, այլ նա Տեղակալ է Պալատենիարի հիման վերաչ. և Տեղակալը նա է, ով նախանդամն է Սինոդում:

Յղբակացութիւն՝ Նրեմիտ եպիսկոպոսը Տեղակալ է միանդամաչն նոյն իրաւունքով, ինչ իրաւունքով որ Տեղակալ էին Մակար

արքեպիսկոպոսը, Մկրտիչ արքեպ. Բարամնանցը, Ղուկաս արքեպիսկոպոսը:

Հաստատած լինելով, որ սրբ. Նրեմիա եպիսկոպոսը Տեղակալ է, հաստատած լինելով նաև որ, Պալաթենիայի օրերով, ոչ մի Տեղակալ այդ կոչումը չի ստացել կաթողիկոսի կոնդակի զօրութեամբ, այլ միայն և միմիայն Պալաթենիայի հիման վերայ և որ կոնդակը ունեցել է միայն զուգահեռապէս ընթացող գործողութեան՝ ոչ ներգործական, այլ միայն չեզոք նշանակութիւն,—այս բոլորը հաստատած լինելուց չետու, կարելի է արդեօք կասկածել, որ Նրեմիա եպիսկոպոսը Տեղակալ է այն ամբողջ նշանակութեամբ, ինչ նշանակութիւն որ Տեղակալին, այսինքն Սինոդի նախանդամ-նախադասին չատկացրել է թէ օրէնքը և թէ սովորութիւնը?

Կասկածողներ կան, և նորա ասում են՝ թէ սրբազան Նրեմիան օրէնքի զօրութեամբ միայն նախադասողն է Սինոդում, բայց ոչ թէ Տեղակալ է, քանի որ կաթողիկոսական կոնդակով չի հաստատուած: Մենք որ տեսանք կոնդակի զօրութիւնը այս խնդրում—կարող ենք նաև զրակահասակէս ասել թէ այդ սխալ հաշիւացք է:

Ընթերցողներս կարող են հարցնել որ եթէ Նրեմիա եպիսկոպոսը անվիճելի կերպով Սինոդի նախադասողն է, ուրեմն էլ ինչ հետաքրքրութիւն ունի վէճը: Կոչելի նա Տեղակալ թէ ոչ՝ էլ ինչ նշանակութիւն ունի այդ:

Ահա բանը հէնց նորանուսն է, որ այդ հանգամանքը մեծ կարևորութիւն ունի: Կարևոր հանգամանքը այն է, որ կան խնդիրներ, որոնք Սինոդին չեն ենթակալ, այլ միայն կաթողիկոսին և որ ուրեմն, երբ կաթողիկոսը վախճանուել է, ով պէտք է հսկի այն գործերի վերայ, որոնք ոչ թէ Սինոդից, այլ կաթողիկոսիցն են կախած:

Միթէ Պալաթենիան այդ հարցին չի պատասխանում—կը հարցնեն ընթերցողներս: Այլ լրակատար կերպով—կը պատասխանեն ես: Պալաթենիան մի երկու շօղաձ ունի այդ հարցին պտտասխանող, բայց նորա դեռ բոլոր վիճելի հարցերին զրական պատասխան չեն տալիս:

Ամենաանվիճելի կերպով պատասխան կալ միայն զուտ կրօնական հարցերի նկատմամբ. այդ պատասխանը տրւած է պալաթենիելի 42 երորդ շօղաձում և կամ որ նույնն է՝ Ռուսաց Օրէնսգրքի X հատորի առաջին մասի 945-երորդ շօղաձում: Այլտեղ ուղղակի ասւած է՝ «իսկ պարզ (զուտ) հոգևորական գործերը, որոնց նկատմամբ Պատրիարքը կաթողիկոսը (վճռողական) ձայն ունի, ոչ մի դէպքում չեն կարող վճռուել առանց Պատրիարքի պատրիարքական աթոռի պարապօրթեան ժամանակ: Այս տեսակ գործերի վճռահատութիւնը չետաձգուած է մինչ նոր պատրիարքի ընտրութիւնը»:

Այդ շօղաձը ուրեմն պարզապէս արդելում է կաթողիկոսից զուրս ոււմ և ից է, լինի սա Սինոդ, թէ Տեղակալ՝ վճռել զուտ կրօնական խընդիրները: Եւ եթէ բոլոր գործերը, որոնց նկատմամբ կաթողիկոսը վճռողական ձայն ունի, զուտ կրօնական խնդիրներ լինէին—էլ վէճի ոչ մի տեղիք

չէր լինել, Բայց բանն էլ հէնց նորանունն է, որ Պալատէնիէն լատկաց-
նում է կաթողիկոսին վճռողական ձայն նաև մի շարք անպիսի
գործերում, որոնք զուտ կրօնական չեն:

Գէ հիմաւ մեզ հարկաւոր է իմանալ թէ որոնք են այն գործերը, ուր
Սինոդը թէև խորհրդակացական ձայն կարող է ունենալ, բայց որոնց
վճռելը միմիայն կաթողիկոսի բարեհալեցողութիւնիցն է կախած, այսինքն
ուր կաթողիկոսը ոչ թէ ձայնի առաւելութիւն, այլ վճռողական
ձայն ունի:

Գորա հետևեալներն են.

- 1) կրօնական-դաւանական-ծիսական խնդիրները:
- 2) Մեռոն եփելը և օրհնելը:
- 3) Եպիսկոպոսների ձեռնադրելը:
- 4) Առաջնորդներ կարգելը՝ կալսեր հաստատութեամբ:
- 5) Վարձատրելը Հալաստ. Եկեղեցու Ուխտի անդամներին խաչերով,
կամիլաւկայով, գլխարկներով, արախչիներով:
- 6) Կոնդակներ ուղարկելը ամենայն հայերին՝ դէպի առաքինութիւնը
և օրէնքներին հնազանդելու շնորհներով:
- 7) Ռուսաց-կալսեր թագադրութիւնը շնորհաւորելու համար պատու-
րակ ուղարկելը:
- 8) Արձակուրդ տալը Սինոդի անդամներին, թեմակալ առաջնորդնե-
րին ոչ աւելի քան չորս ամսով, իսկ աւելին համար թագաւոր կալսրից
թուլութիւն խնդրելը:
- 9) Տնօրէնութիւնը ԼՂմիածնի վանքի վերաւ:
- 10) Կառավարութիւնը ԼՂմիածնի նախկին Ժառանգաւորաց Աւ-
ստմնարանի, այժմ Գէորգեան ձեմարանի և այլն:

Որպէս տեսնում էք, վերը բերած խնդիրներում կան այնպիսիք,
որոնք զուտ կրօնական-դաւանական խնդիրներ չեն, հէնց օրինակ կոն-
դակներ ուղարկելը հայերին՝ օրէնքներին հնազանդ լինելու տրոգորով, կամ
առաջնորդներին արձակուրդ տալը, թագաւոր-կալսեր թագադրութեանը
պատուրակ ուղարկելը, ԼՂմիածնի վանքը կառավարելը, ձեմարանը կա-
ռավարելը և այլն:

Այժմ բանը նրանունն է, թէ ով է բանեցնում կաթողիկոսական իրա-
ւունքը այդ գործերում, որոնք պարզ կրօնական չեն, երբ կաթո-
ղիկոսը վախճանւած է:

Այդ հարցին Պալատէնիսն չի պատասխանում, և Օրէնագրքի XI-երորդ
հատորի առաջին մասի 914-րդ լողամով որոշում է հետևեալը՝ «...բայց
Պատրիարզն իշխնչ դէպս կարէ աւանդել Սիւնհոգոսին, ոչ ալլում
իմիք ատենի կամ անձին զիշխանութիւնս, զիրաւունս և զարտօնու-
թիւնս՝ օնպհականալս խրում աստիճանի (но Патриархъ ни въ
какомъ случаѣ не можетъ передать ни сему (Синоду) ниже какому

либо иному мѣсту или лицу. власти, правъ и преимуществъ, присвоенныхъ сану его).

Քանի որ Պալատենիան որոշ կերպով արգելում է Սինոդին վճռել զուտ կրօնական ինդիքները, և կաթողիկոսական-վարչական գործերի կառավարութեան մասին էլ ոչինչ չի ասում, իսկ միւս կողմից Կաթողիկոսին էլ արգելում է սեպհական իրաւունքով (կոնդակով, կտակով) մի որ և իցէ ասենին կամ անձին աւանդել իւր արտօնութիւնները, էլ ինչ է մնում, եթէ ոչ, Կաթողիկոսի մահից չես, զազարեցնել բոլոր կաթողիկոսական-վարչական գործերի կառավարութիւնը?

Բայց չէ թէ անհնարին բան է, որ օրէնսդիրը ցանկացած լինի անկարելի դարձնել գոյութիւն ունեցող հաստատութիւնների կառավարութիւնը:

Պալատենիայի հրատարակումից դէս հինգ կաթողիկոսներ են մեռել և ոչ մի անգամ Հալատանեաց Յկեղեցին ալդ զրութեան մէջ չի գտնուել: Մնում է միայն ուրիմն ընդունել, որ աչն, ինչի մասին չի խօսել օրէնքը՝ լրացրել է սովորութիւնը՝ եթէ միայն հին հաւկական աւանդական սովորութիւնը ուղղակի չի հակառակում 914-երորդ չօղածի իմաստին:

Ես ուզում եմ ասել որ աչն կաթողիկոսական ոչ-կրօնական գործերը, որոնց նկատմամբ Պալատենիեն ըսում է, անցնում են կաթողիկոսական Տեղակալին՝ թէև ոչ զբաւոր, բայց համաձայնութեամբ ռուսաց կառավարութեան, որը ոչինչ չի խօսացել աչն բանի դէմ, երբ Սինոդի նախանդամ նախագահը, Կաթողիկոսի մահից չես, կառավարել է կաթողիկոսական վարչական գործերը: Կառավարութիւնը, սակաչն, կը հակառակէր, եթէ ալդ սովորութիւնը ուղղակի խախտէր օրէնքը: Ուրիմն ալդ 914-երորդ չօղածը չի խախտում, երբ Տեղակալը բանեցնում է վերը լիշած իրաւունքները: Եւ իրօք չի խախտում: Աչդ չօղածը ասում է թէ Կաթողիկոսը ինքը իրաւունք չունի իւր իշխանութիւնը և արտօնութիւնները ուրիշին աւանդելու: Եւ իրօք, ալդ ալդպէս էլ կատարում է, որովհետև Տեղակալին նշանակում է ոչ թէ Կաթողիկոսը, ալ օրէնքը. իսկ եթէ Սինոդի նախանդամ նախագահը, որ Տեղակալ է կոչւում, բացի սինոգական գործերից, նաև կաթողիկոսական-վարչական իրաւունքներ էլ է բանեցնում, ալդ միայն ցոյց է տալիս, որ օրէնքով որոշած պաշտօնեան ընդարձակում է իւր իրաւասութիւնը, գտնելով կառավարութեան համաձայնութիւնը: Խախտումն կը լինէր 914-երորդ չօղածի միայն աչն դէպքում, եթէ մի եպիսկոպոս վաղէր կաթողիկոսական-վարչական իրաւունքներ Կաթողիկոսի կոնդակի կամ կտակի համաձայն, իսկ մի ուրիշ եպիսկոպոս լինէր Սինոդի նախանդամ-նախագահը՝ Պալատենիայի համաձայն:

Ուրիմն, որպէս անտու էք, ալդ 914-երորդ չօղածը չի խախտում, երբ Սինոդի նախանդամ-նախագահը իւր իրաւասութիւնը

տարածում է նաև կաթողիկոսական-վարչական գործերի վերայ:

Արդ, այն ոչ զուտ կրօնական, այլ վարչական գործերի շարքում, որոնց վերայ տարածում է կաթողիկոսի, ուրեմն և Տեղակալի իրաւասութիւնը, գտնուում է նաև Էջմիածնի Գէորգեան ձեմարանի անմիջական կառավարութիւնը, հակառակ թեմական զպրանոցներին, որոնք, նոյն լակ կաթողիկոսի օրերով, ըստ Պալաժենիւի՝ գտնուում են թեմակալ առաջնորդների անմիջական հսկողութեան ներքոյ: Պարզ է, կարծեմ, որ եթէ կաթողիկոսը այնու ամենայնիւ բարձրագոյն վերահսկողութիւն ունի՝ նաև թեմական զպրանոցների վերայ, նոյնը պէտք է ընդունելի և Տեղակալի համար:

Գէ ալժմ ալս բոլորից անենք ընդհանուր եզրակացութիւն վիճելի դառած խնդիրների և դէպքերի նկատմամբ:

Երեմիա եպիսկոպոսը Տեղակալ է թէ ոչ:

Տեղակալ է բոլոր Տեղակալներին չատուկ իրաւունքներով:

Ունի նա իրաւունք Գէորգեան ձեմարանի վերայ:

Այո, ունի նորան կառավարելու իրաւունք:

Ունի նա արդեօք անձնական փոփոխութիւններ անելու իրաւունք Գէորգեան ձեմարանում:

Ունի:

Ունի Տեղակալը Ներսիսեան Գպրանոցի հոգաբարձական գործերի մէջ խառնուելու իրաւունք:

Որ ինչ կաթողիկոսինն է՝ ունի և Տեղակալը, որ ինչ Սինոդինն է՝ կարող է միայն Սինոդի միջոցով:

Ունի նա իրաւունք Սինոդի անդամների թիւը լրացնել օրինական կարգով:

Այո, ունի:

Այս բոլորը, սակայն, Տեղակալի իրաւական նշանակութիւնը որոշելու համար դեռ ևս բաւական չէ: Այնչ ինչ մինչ ալժմ ասուց, բաւական էր միայն հասկանալու համար թէ ինչ գործերի վերայ է տարածուում կաթողիկոսական Տեղակալի իրաւունքը: Բայց այդ բոլորով ամենին չը պարզուց թէ այդ իրաւունքը ինքը ինչ ծաւալ ունի և երբ տաւում է թէ, կաթողիկոսի մահից չես, Տեղակալը բռնում է կաթողիկոսի տեղը բոլոր ոչ զուտ կրօնական խնդիրներում, ներած է նաև հարցնել, թէ Տեղակալը նոյն այդ գործերում նոյնքան Տէր է, որքան կաթողիկոսը թէ ոչ: Եւ ևս վերցնում եմ իբր օրինակ հէնց ձեմարանը: Կաթողիկոսը ոչ միայն իրաւունք ունի ձեմարանը կառավարելու, այլ նա իրաւունք ունի նաև այդ Գպրոցի ծրագրերը փոխելու: Ունի սպալսի մի իրաւունք Տեղակալը: Երբէք: Եւ այսպէս շարունակ ես կարող կը լինէի շատ հարցեր տալ, որոնց պատասխանները միշտ կը լինէին ալո—կաթողիկոսի համար, ոչ—Տեղակալի համար:

Ես հարկ չեմ տեսնում երկար կանգ առնել Տեղակալի իրաւունքներին

ՆՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՕՏԱՐՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ «ՄՈՒՐՃ»-ՈՒՄ

Ներկայ ճ.դ համարում վերջանում է վրացի իշխան Նլիա ձաւճաւաձէի վէպը Կաղիա-Աղամիանի (Միթէ մարդ է, աղամորդի?): Թողնելով որ նորա զրական զնահատութիւնը կատարւի իւր տեղում, մենք, այդ վէպը տպագրելու առիթով, ահա ինչ կարող ենք չալտնել: Դեռ ևս «Մուրճ»-ի հրատարակութիւնը սկսելով, մենք մտադրութիւն ունէինք, բացի մեր սեպնական կեանքին վերաբերեալ բաժիններից, «Մուրճ»-ում ունենալ նաև բաժիններ այն ազգերի համար, որոնց կեանքը մեզ համար կամ կուլտուրական կամ քաղաքական կողմից վճռական նշանակութիւն ունեն: Այդ ազգերն են՝ Եւրոպայի առաջնակարգ կուլտուրական ազգերը, ապա Ռուսիան, Թուրքիան և Պարսկաստանը իրանց ներքին քաղաքական հատարակական և զրական կեանքով, և ապա մասնաւորապէս՝ հալերին հարեան ազգերը՝ Թուրքեր, քուրդեր, վրացիք՝ իրանց կեանքի այն կողմերով, որոնք առանձին կարևորութիւն ունեն հալերիս համար:

Մեր այդ սկզբնական ծրագիրը մի անգամից իրագործելու համար մենք չունէինք միջոցներ՝ ոչ զրամով, որ կարողանալինք դորա համեմատ «Մուրճ»-ի ծաւալը մեծացնել, ոչ բաւականաչափ պատրաստուած աշխատակիցներով: Այդ պակասում է մեզ նաև այսօր, բայց այդ նոյն ձգտումների իրագործելու փորձերը պէտք է համարել «Մուրճ»-ի այն բաժինները, բացումը, որ մեր մշտական ընթերցողներին չալտնի են «Թղթակցութիւններ Արտասահմանից» և «Նամակներ Ռուսաստանից» անուններով, որոնց մշտապէս երևալուն «Մուրճ»-ի ամեն մի համարում միակ արգելքը նոյն հանդամանքն է, որ արգելք է դառնում նաև «Մուրճ»-ի թերթերի թւի մեծացնելուն: Սպասելով ուրեմն աւելի բարեկաջող հանդամանքներին, մենք պէտք է չալտնենք նաև այս, որ վերը լիշատ ծրագրի արտապատութիւններից պէտք է համարել՝ վրաց հրատարակախօս վրպասան ձաւճա-

ւածէի Կացիա-Աղամիանի վէպի երեսը («Մուրճ»-ի էջերում, որպէս նաև անցեալ № 3-ում տպւած փոքրիկ շօղաձը վերաբերեալ վրաց գրականութեան և մասնաւորապէս իշխան ճաւճաւածէին: Եթէ չենք սխալուում, սա առաջին դէպքն է, որ մեր գրականութեան մէջ մի վրացական մեծ գրածք լիակատար կերպով լոյս է տեսնում հայերէն թարգմանութեամբ: Առաջին անգամ մի աղպիտի փորձ արւել է Կռունկ ամսագրում՝ վրաց հռչակաւոր միջնադարեան բանաստեղծ Շոտա Ռուստաւելու «Բնձի մորթի» պօէմի նկատմամբ, որից սակալն միայն մի կտոր թարգմանւեց:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՔՆՆԱԿԱՆ (ցենզուրալին) կ ո մ ի տ ե տ ի պ ե ռ ս ո ճ ա լ ը մալիս ամսին լրացրեց նշանակելովը կողբալիկան խորհրդական պ. Ալեքսանդր Քիշմիշեանցի՝ տեղական և արևելեան լեզուների աւագ դրաքննիչի պաշտօնի համար, որի տեղը բաց էր մնացած պ. Սուրմոն Մելիք-Մեհրաբեանի արձակելուց յետ իւր պաշտօնից: Կոմիտեայի նախագահի և միւս անդամների ցուցակը մենք հրատարակեցինք «Մուրճ»-ի Ներկալ թւականի 3-դ համարում, երես 411—412.

ՕՒԵՍՍԱ, պ. վիրապեանին: Ստացանք 2 բուբլին.

ՎՐԻՊԱԿ: Ներկալ № 6-ում, պ. Բալաղեանի «Միկրոդներ» շօղաձում երես 784, սող 7 ըդ տպւած է «Չնժում էր», պէտք է լինի «ճնշում էր», երես 752, ներքեից 6-րդ սող տպւած է՝ «գետերի», պէտք է լինի՝ գետեր:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Էջմիածնի Ս. Սինդի վճուի համաձայն, կատարելու են դալ 1892 թւականի մալիս ամսուայ 3-ին և ոչ 13-ին, ինչպէս սխալմամբ տպւած էր անցեալ № 5-ում:

ՊՐ. ԳԱԼՈՒՍ Ս. ԳԻՒԼՊԷՆԿԵԱՆՆԻՅ ստացանք նորա մի ընդարձակ շօղաձը՝ Ապչերոնեան թերակղզին և ռուսաց կերտսինը (La péninsule d'Apchéron et le pétrole russe) տպւած Պարիզում հրատարակող ֆրանսիական Revue des deux Mondes լալտնի ամսագրի սոյն տարւոյ մալիս ամսուայ երկրորդ տեսարում: Պր. Կիւլպենկեանի շօղաձը աչքան կարևոր, բաղձակողմանի և լաւ գրւած է, որ ալ շօղաձը թարգմանարար կամ քաղաածօրէն առաջ կը բերենք «Մուրճ»-ի հետեւեալ համարներում:

ԲԱԺԱՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԻ մասին մենք կրկին վիշեցնում ենք, որ չուլիսի 1-ին, չալտարարւած պալմանների համաձայն, պէտք է լիովին վճարւած լինեն:

ՆՈՐ ԳՐՔԵՐ.—15) ԼԵՐՄՈՆՏՈՎ, Մ.—«Իւը», թարգմ. Սատաթեանի: Հրատ. «Աղբիւր» և «Տարաղ» պատկ. թերթերի. տպ. Արօր, գիճն է 30 կ.

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ

Հինգերորդ կիսամեակի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

1891 թ. № 1, 2, 3, 4, 5, 6, № 1891 թ.

№ 1

1 ԽՄԲ.	3 «Մուրճ» ի բովանդակութ. 1890 թ.
2 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ.	6 Յառաջդիմութեան պայմաններ:
3 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ	16 Մեր նոր բանաստեղծներին (բան.):
4 ՄԱՐԻՍԵԱՆ, Մ.	17 Հեղինէ (վէպ, երկրորդ մասն):
5 ՀԷՅՆԷ-ԻԿ ԲԱԼՈՒԳԵԱՆ	46 Նրեք բանաստեղծներ:
6 ՆԱՄԱԼԵԱՆ, Ա.	48 Մինասի եղբ:
7 ՍԱԳԱԹԷԼԵԱՆ, Յ.	57 Անտոնապահութիւնը կողկատում:
8 ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ	63 Իմ առաջին գրական փորձը:
9 " "	67 Իմ ժամացույցի արկածքները:
10 ԱԹԱՅԵԱՆՑ, ՍՈՒՐԷՆ	72 *** (բանաստեղծութիւն):
11 ԳՈՍԼԵՐ-ԻԿ ԲԱՐԵԼԵԱՆ.	73 Բորերտ կոխի զիւար մասին:
12 ԹՂԹԱԿԻՅ	83 Վիլհելմ II-ի ճառը:
13 " "	91 Դպրոցական րեֆորմ Պրուսիայում:
14 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, Լ.	93 Յ. Թումանեանցի բանաստեղծութ.
15 ՍԱՐԳՍԵԱՆՑ, ՍԱՐԳԻՍ.	101 «Դարդեղու ժամանակագրութիւնը»:
16 ՔԼ.	106 Լեռնեցի բանաստեղծութիւնները:
17 Լ. Ս.	112 «Տիւղեանց տոհմը»:
18 Յ. Տ.Մ.	113 Տաճկահայերի մանկավարժական գրականութիւնից:
19 Ա. Ա.	117 «Ամուսնական խնդիրներ»:

20 ԼՈՒՍԻՆԻ. 120 Ամուսայ քրոնիկ: 1890 թւականը:—
Դեկտեմբեր ամիսը:—Թատերասէր-
ների դերը:—Մուրացանի Ռուզան
զրաման:—Կարա Մուրզան Թիֆ-
լիսում:

21 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Տ. 127 Նամակներ Ռուսաստանից, III:

22 ԽՄԲ. 139 Խմբագրութեան կողմից: Էմիլի
մանը:—Ներսիս. դպրոցի հոգա-
բարձ. ընտրութիւնների աւիթով:—
Մինաս Չերազ:— Հենրիխ Շլիմանի
մանը: Այլ և այլք:

№ 2

1 ՆԱՄԱԼԵԱՆ, Ա. 157 Եզիզ աղջիկը:

2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ 173 Երկու երգիչ (բանաստեղծութ.):

3 ՄԱՐԻՍԵԱՆ, Մ. 174 Հեղինէ (վէպ):

4 ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀ. 198 Երգչին (բանաստեղծութիւն):

5 ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ 199 Փրկարար ձայն:

6 ՊՕԷ, ԷԴԳԱՐ 207 Ժանտախտի դիմակը:

7 ՓԻՐՈՒՄԵԱՆՅ, ՏԻԳՐԱՆ 213 Մի քանի օր Խիզանում:

8 ՔԻՇՄԻՇԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԳՐ. 233 Բոլսերի մեծարանքը I:

9 ՇՐՈՒՄՊՅ, Գ. Ա. 241 Հակաբանութիւնը Եւրոպայում, I:

10 ՇՐՈՒՄՊՅ, պրոֆ. 250 Բուզգէ՛ «Էարուսկ. և հայեր»:

11 Ա. Ա. 253 Սմալչա՛ «Ինքնօգնութիւն»:

12 Ե., Ա. Ա. 256 Բիշոֆ, Կոլեր, Հուբեր:

13 ԼՈՒՍԻՆԻ 260 Ամուսայ քրոնիկ: Հայերը ոռուսաց
թերթերում:—Հայոց Բարեգ. Ընկ.
ընդհանուր ժողովները:—Թիֆլիսի
արհեստաւորաց ուսումնարանը:—
Կերասան Պետրոսեան:—«Վարժու-
հու» երկրորդ ներկայացումը:—
Աղամեանի հիւանդութիւնը:

14 Ա. Ա. 270 Էրնեստ Մեստնիէ:

15 ԱՆԱԿԵԱՆ, ԳՐ. 278 Օկտաւ Ֆէլլէ:

16 Շ. 283 Քաղաք. Տես.—Եւրոպան 1890 թ.:

17 ԽՄԲ. 287 Խմբագրութեան կողմից: Երկպա-
ռակութեան ոգին զաւառներում:
Աղքատների խնամատարութեան
գործը: «Արձագանք»-ի չափարա-

րութիւնը:—Հարց Բարեգ. Ղնկ.
ընարութիւնները: Մովսէս Խորե-
նացու ուսումնասիրութիւնը (Արա-
րատ) ամսագրում:—Ներս. զպր.
տարեկ. ակտը:—Ալլ և ալլը:

№ 3

1 ՆԱՍԱԼԵԱՆ, Ա.	295	Նւազած կեանքը:
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ . . .	305	*** (բանաստեղծութիւն):
3 " " "	306	Թիթևո և Շուշան (բանաստ):
4 ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ	308	Սափրիչների մասին:
5 ԾԱՏՈՒՐԵԱՆ (Արծիւեան). . .	313	Չեմ նախանձում:
6 ՊՕԷ, ԷԴԳԱՐ.	315	Կենդանի պատկեր:
7 ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ.	319	Բոսֆորի ակերում:
8 ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀԱՆ. . .	341	*** (բանաստ.):
9 ԳԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼԵԳՍԱՆԳՐ	342	Բոյսերի մեծարանքը:
10 ՇՐՈՒՄՊՅ, Գ. Ա.	356	Հակարանութիւնը Եւրոպայում:
11 ՄԱԳԱԹԵԱՆ, ԵՂԻՇԷ.	367	Բանաստեղծհարապարակասու I:
12 ՂԱԶԱՐԵԱՆ ԵՐԻԱՆԳ.	375	Հողի իշխանութ. Գլ. Ուսպենսկի:
13 Մ., ԲԼ., Ե., ԳԼ.,	387	Դրախօսութիւն: Լիբ, Դաւիթ- Մհեր, Օմուլ, Ռաջնա Գէօրգիևա:
14 ԼՈՒՍԻՆԻ.	392	Ամուսն քրոնիկ: Տիկին Ժիզիկ Թիֆլիսում:
15 Շ.	395	Քաղ. տես.—Վիլնիւս II և Բիւմարկ:
16 ԽՄԲ.	411	Խմբագրութեան կողմից: Յանձնա- ժողովներ թուրքերի և հայերի հոգևոր կառավարութիւնների մա- սին:—Կովկասեան զրաքննական կոմիտեաի պերսոնալը: — «Արձա- գանք»-ի մտքերը: Հրատարակչ. ըն- կերութեան որոշումը: Նոր գրքեր:

№ 4

1 ՎԱՐԳԱՆԵԱՆ, ԳՐԻԳՈՐ . . .	421	Արդիւնագործ. Անդրկովկասում:
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ . . .	434	*** (բանաստեղծութիւն):
3 ՓԻՐՈՒՄԵԱՆՅ, ՏԻԳՐԱՆ . . .	435	Ճաւճաւաձէի վէպի առիթով:
4 ՃԱԻՃԱԻԱԶԷ, ԻԼԻԱ	439	Կացիա-Աղամիանի:
5 ՊԼԵՇԶԷՆԻ-ԻԿ Կ. ԿՐԱՍԻՆ. . .	470	Թուշնիկ (բանաստեղծութիւն):

6 ՆԱՄԱԼԵԱՆ, Ա.	472	Ծանր քարը:
7 ՄԱՐԻՍԵԱՆ, Մ.	480	Հեղինէ, վէպ (չարունակութիւն):
8 ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ.	498	Նոր քրէական մի բառ:
9 ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀԱՆ.	505	Գութանի երգ (բանաստեղծութ.):
10 Բ.	506	Բնթերցան. մոզական լապտերով:
11 ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶԱՐՈՍ.	514	Երկբարբառները մեր լեզուս:
12 ԳԼ.	517	Էլիզէ Ռէկլիւի աշխարհագրութ.:
13 ԲԱՐ.	522	Տոլստոյի Ռոբինզոնը:
14 Բ.	525	Տոլստոյի Կոլումբը:
15 ԼՈՒՍԻՆԻ.	528	Ամուսայ քրոնիկ, Թիֆլիսի քաղաքագլխի ընտրութիւնը: Պօղոս Իզմայլեան և իշխան Նիկ. Արղութեան-Երկաջնաբազուկ: — Ներսիսեան ղպր. հոգար. ընտրութիւնները:
16 Շ.	535	Քաղ. Տես.—Ժ. Նապոլ. Լ. Վինդ.:
17 ԽՄԲ.	546	Խմբագրութեան կողմից. «Տարաղ»-ի մաներները:—Մեծ իշխանուհի Օլլգա Ֆէօդորովնայի մահը:

№ 5

1 «ԱՐԱՐԱՏ»-ից	—	Մակար I Կաթողիկ. Ամեն. Հայոց:
2 ՄԱՐԻՍԵԱՆ, Մ.	551	Հեղինէ, վէպ (չարունակ.):
3 ՓԱՓԱԶԵԱՆ, Վ.	567	Բոսֆորի ափերում:
4 ՇԱՀԱԶԻԶԵԱՆ, ՍՄԲԱՏ.	586	Պանդուխտ հողի (բանաստեղծ.):
5 ՃԱԻՃԱԻԱԶԷ, ԻԼԻԱ	588	Կացիա-Աղամիանի:
6 ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀԱՆՆԷՍ	621	Համերգ (բանաստեղծութիւն):
7 ԲԱԼԱԳԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.	622	Միկրոբներ, I:
8 ՄԱԳԱԹԵԱՆ, ԵՂԻՇԷ.	632	Բանաստեղծ-հրապարակասու:
9 Լ. Ս.	646	«Ի՞նչ է կալծակը»:
10 Բ.	647	«Թշուաւ Եղիսարէթ»:
11 Բ.	648	«Նոնցալի բերդը»:
12 Մ.	651	«Հովիւի հարմացուն»:
13 ԼՈՒՍԻՆԻ	652	Ամուսայ քրոնիկ, Կաթողիկոս Մակար I-ի մահը:—Կուսակրօնի սեփականութեան խնդիրը:—Հայոց հրատարակչ. ընկերութեան ընդհանուր ժողովը:—Շեղունով:

- 14 ԽՄԲ. 671 Խմբագրութեան կողմից: Կաթողիկոսական ընտրութ. օրը:—Հաչիւների յալտարարութիւնները («Մուրճ»-ում:—Մահացուցակ՝ Մոլտիէ, Ջագուրսկի:—Հրատարակչ. ընկերութեան ընտրութիւնները:
- 15 ՅԱԻՆԼԻԱԾ-ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹ. . . 674 Ղուբալի հայ. դպր. 5-ամ. հաշիւը:

№ 6

- 1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻՆՏԻՔ. . . 677 Կինը հասարակութեան մէջ:
- 2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. . . 688 Փոթորկի ժամին (բանաստեղծ.):
- 3 " " 689 Իղէալ (բանաստեղծութ.):
- 4 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. . . 691 Չալարիների արշաւանքը:
- 5 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԳՐ. . . 709 *** (բանաստեղծութիւն):
- 6 " " 710 Երազ (բանաստեղծ.):
- 7 ՃԱԻՃԱԻԱԶԷ, ԻԼԻԱ. 711 Կացիա-Աղամիանի (վերջ):
- 8 ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀԱՆ. 746 *** (բանաստեղծութիւն):
- 9 ԲԱԼԱԳԵԱՆ, Ս. 747 Միկրոքները II, (վերջ):
- 10 ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ. 757 Միջնադարեան վէպ:
- 11 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. 767 Միխայիլ Իւրեիչ Լեւոնտով:
- 12 ՍԱՂԱԹԵԼԵԱՆ, ՅՈՎՀ. 777 Կոմս Լե Տուստոյի սկզբունքները:
- 13 Ա. Ա. 783 Սպանւած հայրը:
- 14 Ե. 784 Գիւղական վարժուհի:
- 15 ԲԱՐ. 786 Գիւղական աղքատ:
- 16 ԲԱՐ. 787 Վարդ-Րեալին:
- 17 Ն. 789 Հանրամատչելի բժշկարան:
- 18 ԼՈՒՍԻՆԻ. 793 Ամուսն. քրոնիկ. † Պետրոս Աղամեան: — † Յակոբ Պարոնեան:—Կաթողիկոսական Տեղակալի խընդիր:
- 19 ԽՄԲ. 805 Խմբագրութեան կողմից:—Օտարների ուսումնասիր. «Մուրճ»-ում:
- 20 ԽՄԲ. 806 Բովանդակ. «Մուրճ» №№ 1—6.

Խմբագիր-Հրատարակիչ՝ Ա.ԻՆՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ.

III ՏԱՐԻ **ՄՈՒՐՃ** III ՏԱՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1891

ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

- ՄՈՒՐՃ» ամսագիրը կը հրատարակուի 1891 թւականին նոյն ծրագրով որպէս և նախկին տարիներում:
- ՄՈՒՐՃ»-ը կը հրատարակուի ամէն ամիս 8—11 թերթ մեծութեամբ:
- ՄՈՒՐՃ»-ի ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ձրի կը ստանան ՏԻԿԻՆ Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ «ՀԵՂԻՆԷ» վէպի 1890 թւականի «Մուրճ»-ում սպառած բոլոր գլուխները, այն է վէպի առաջին հատորը, բաղկացած մօտ 200 մեծադիր երեսներից: «Հեղինէ» վէպի շարունակութիւնը աւարտելու է 1891 թ. ընթացքում:
- ՄՈՒՐՃ»-ի նոր բաժանորդները, բացի զորանից, արտօնութիւն կ'ունենան ստանալու «Մուրճ» ամսագրի 1889 և 1890 թւականների բոլոր 24 համարները 14 բուբլիով, մինչդեռ ոչ-բաժանորդներին կը ծախուի նոյնը 24 բուբլիով:
- ՄՈՒՐՃ»-ի գրականական մասը ապահովւած է մասնակցութեամբ բազմաթիւ աշխատակիցների, որոնց թիւը մինչ այժմ անդադար աճած է:
- ՄՈՒՐՃ»-ի վիպական բաժինը առանձին ճոխութիւն կը ստանայ:

«ՄՈՒՐՃ»-ի բաժանորդագրինն է տարեկան 10 ռուբլի, որ կարելի է վճարել նաև մաս-մաս, ստորագրելիս առնազն 5 ռուբլի և մինչ յունիսի 1-ը ամբողջը վճարելու պայմանով:

Ուսուցիչները և ուսանողները վճարում են 8 ռուբլի, ստորագրելիս առնազը 3 ռուբլի և մինչ յունիսի 1-ը ամբողջը վճարելու պայմանով:

ՔԻՖԼԻՍՈՒՄ գրում են բաժանորդ «Մուրճ»-ին՝

1) «Մուրճ»-ի խմբագրատանը:

2) Կենտրոնական գրավաճառանոցում, Գոլովինսկի պրոսպեկտ, տուն Միրիմանովի:


3) Խիդեկելի պաւլիսոնում, Ալեքսանդրեան այգու և Բարիա֊տինսկի փողոցի վերին անկիւն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԻԱԾ՝ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ

	Բ. Կ.
1. «ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով . . .	12 —
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7 —
2. «ՄՈՒՐՃ» ամսագիր 1890 թ.ապրիլի, երկու կազմած հատորներով	12 —
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7 —
3. ՊՈՒՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.—«ՅԵՅԵՐ» (վէպ)	1 —
4. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (Ղ.Ղլարցի)՝ «Մանուկների մարտողութեան գործարանների մի քանի հիւանդութիւնները»	— 05
5. ԱՏՐՊԵՏԵԱՆ, ՍԱՐԳԻՍ.—«ԽԵԻ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայկաթողիկների կեանքից	1 —
6. ԼԷՍ.—«ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ)	— 50
7. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, ՍՈՂՈՄՈՆ.—«ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒՍԵԻ ՕՐԸ»: (Կեանքից պատկեր)	— 40
8. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.—«ԱՅՅ ԹԻՐՔԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»	— 60
9. ՊՈՒՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.—«ԲՂԳԷ», վէպ	1 20
10. ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ.—«ԽԱԹ-ՍԱԲԱ» (հայ բոջան. կեանքից	— 15
11. ՄԱՐԻՍԵԱՆ, ԽԻԼԻՆ Մ.—«ՀԵՂԻՆԷ» (մեծ վէպ), ա. մասը	— 50
12. ՂԱՐԱԿԵՕԶԵԱՆՅ, ՅԱՐՈՒԹԻՒՆ.—«ՍԵԻ-ԼԵՈՆՅԻՔ» (սոհամագրական պատկեր)	— 15
13. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ՀԱՐԵԻԱՆՆԵՐ»	— 03
14. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ՄԻՆԱՍԻ ԵԶԸ»	— 03
15. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ԵԶԻՎ ԱՂԶԻԿԸ»	— 05
16. ՆՈՅՆԸ.—«ԾԱՆՐ ՔԱՐԸ»	— 03
17. ՔԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ.—«ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ»	— 15
18. ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.—«ՄԻԿՐՈՐԵՆԵՐԸ»	— 10

Վերոյիշեալ գրքերը ստանալու համար ցանկացողները թող զիմեն ուղղակի՝ ВЪ Редакцію журнала „МУРՇ“ . Վճարել կարելի է նաև պոստի մարկաներով:



„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ - ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՅԻԱՄ Է

Հրուէր ենք կարդում հայ հասարակութեան՝ բաժանորդ գրել մեր միակ քաղաքական-հասարակական-գրական ամսագրին և միջոց տալ նրան այս **1891** թւականին ցանկալի ճոխութեամբ հրատարակել:

ԳՐԻՆԸ, ԿԱՐԵԼԻ Է

Թիֆլիսում՝

- 1) Խմբագրատան մէջ, 2) Կենտրոնական գրազանաւանդում,
3) Խիզկէկի և 4) Մակար Չմշկեանի գրազանաւան պալլիսններում, 5) Եւ անգուլովի տեղեկատու գրասենեակում:

Բաքում՝

- 1) Թաւաչեանցի գրազանաւանդում, 2) պ. Ա. Ետիք Դաւ թեանցի մօտ (Մարդասիրական Ընկերութեան ընթերցարանում):

Երևանում՝

- 1) Սիրական Մարտիրոսեանցի գրասենեակում:
Խմբագրութիւնը գտանում է Վելլիամինեան փողոց, տուն Թանգոյեանի, պրօզիմնագի դիմաց:

Ուրիշ տեղերից պէտք է գիտել՝ Тифлисъ. Редакция журнала „МУРЧЪ“

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue MOURTCH.

